

389
390
391

2(077)

U. 15

123

315.473
p. Gray's Great Suburban Grange

2001

Հա՛խ Գ. Գրիգոր Սիմեոնյան

ԴԱՍԱԽՈՍԵՅ

Ս. ԴԵՆ ՍԵՄԵՆՈՎ
ԿՐՕՆԻ

ՈՒՂԵՅՈՅՅ ՀԱՅ ԿՐՕՆՈՒՍՈՅՅՆԵՐԻ ՀԱՄԱՐ

„Գնացէ՛ք աշտուհետեւ
„աշակերտեցէ՛ք զամե-
„նայն հեթանոսս....:
„Ուսուցէ՛ք նոցա պա-
„հել զամենայն որ ինչ
„պատուիրեցի ձեզ“:
Մ. Լ. Իր. 19. 20.

ՆՈՐ—ՈՒԽՏԻ

ՆԻԻԹԻ ՄՇԱԿՈՒԹԻԻՆԸ

ՀԱՏՈՐ Բ. ՄԱՍԻՆ Ի. ՏԵՏՐ Բ. և Գ.

ԴԱՍԱԽՈՍԵՅ

Ներսիսեան դպրանոցի ստորին դասատ. աշակերտներին

ՍԱՀԱԿ ՔԱՀԱՆԱՅ ՍԱՀԱԿԵԱՆՅ

(Միաբան Մողնույ սուրբ Գէորգ եկեղեցւոյ)

Նիւթիս մշակութեան հիմք կազմող հատուածները տպած են
առանձինն՝ „Սրբազան պատմութիւն“ նոր-ուիտի անունով:

ԹԻՖԼԻՉ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Тифлисъ Тип. И. МАРТИРОСІАНЦА, Орбел. ул., № 1—2.

1893

ձեզ մօտ, հենց այժմ միայն, ուրեմն և Մարիամը միայն
այժմ միջոց ունէր ինձ ուրախացնել: Մարիամն իհարկէ չգի-
տէր այս օծման իսկական նշանակութիւնը. նա այս արաւ
անգիտակցաբար—սա թաղմանս օծումն էր, սա վերջին պատիւն
է, որ ինձ տուաւ: Նա մխիթարում է ինձ, երբ ես ամենքից
բարձի թողի պիտի լինիմ. նա սրանով ցոյց տուաւ, որ իւր
սէրն ինձ համար մի արձան պիտի լինի, երբ ես այլևս երկ-
րիս վրայ չեմ լինի: Սրա համար ես ևս՝ համեմատ նրա կա-
տարած գործին, կամենում եմ մի արձան կանգնել—նրա
անունը անջնջելի պիտի մնայ երկրիս վրայ, ուր որ էլ իմ աւե-
տարանը քարոզուի: Այս մարգարէութիւնը կատարուել է, որով-
հետեւ շատ կայսրուհիներ և թագուհիներ կրել և կրում են
այդ անունը: Մարիամն այս փառքը չէր որոնում, նրա միակ
ցանկութիւնն էր իւր սիրտը նուիրել («տուր ցիս որդեակ
գոհրտ...») և փրկչին ուրախացնել:

Համառօտ ձեռով հ ա մ ա խ մ բ ե լ գլխաւոր մտքերը:

III.

Մեր ուսած պատմութիւնների մէջ՝ սիրոյ և յարգանաց
շատ տեսակ արտայայտութիւններ են եղել դէպի Քրիստոս
(արևելքի իմաստունները, առաքեալներ, բժշկուածները, հինգ
հազարը, Զակքէոսը, Մարթան և Մարիամը): Մարիամն այստեղ
զոհ է բերում իւր ամենաթանկագին իւղը: Փրկիչն իրօք սրանից
ոչ մի էական օգուտ չէ ստանում, բայց նա մխիթարում, յա-
գենում և զովանում է, վասնզի սա մի նշան էր հաւատարիմ
սիրոյ: Մեր ժամանակներում ևս լինում են այդ տեսակ նշան-
ներ, սիրոյ արտայայտութիւններ, զորօրինակ այն հսկայ եկե-
ղեցիներն ու վանքերը, մինչև ամպերը բարձրացող գմբէթներն
ու զանկատները, այն քանդակներն ու զարդարանքները,
որ մենք գործ ենք դնում նրանց վրայ, այն հազուագիւտ
անօթներն ու զգեստները, որ նուիրում ենք Աստուծու տա-
ճարներին..., իհարկէ շատ և շատ հազարներ արժեն: Արդեօք
այդ բոլորն էլ պէտք են և կարևոր: (Մասնաւոր ապացոյցներ):
Պրանք մեր բարեպաշտութեան և սիրոյ գեղեցիկ նշաններն են,
որ մեր նախնիքը ցոյց են տուել դէպի Քրիստոս: Մենք զար-
դարում ենք, այո՛, զանկատները, եկեղեցիները մեծածախս
զանգակներով, ճարտարապետական քանդակներով.... մեր դա՛-

Дозволено цензурою. Тифлисъ, 7 Сентября 1892 г.

լիճներն զարդը շատ և շատ անգամ աւելի արժէ քան թէ Մարիամի գործ դրած իւղը. դրանցով ևս կարելի էր շատ աղքատների կերակրել, բայց և այնպէս ոչ մի աղքատ սովամահ չէ եղել, ոչ մի գործ չէ վնասուել այս եկեղեցու կամ այն վանքի շինութեան պատճառով, ընդհակառակն աղքատների վիճակն աւելի է բարուրդուել այժմ Քրիստոսի աշխարհ բերած սիրոյ շնորհիւ՝ քան թէ առաջ, չնայելով որ անթիւ ու անհամար տաճարներ են կառուցուած և Յիսուսին նուիրուած։ Այն մարդիկը, որոնք այդ եկեղեցիները և վանքերը կառուցել և կառուցանում են, նոյնպէս են մտածել, ինչպէս Մարիամը. այդպիսիք իրանց սէրն ու յարգանքը արտաքին ձևով ևս ցոյց են տալիս. այդ քարաշէն բնակարանները բարեպաշտների առ Աստուած ունեցած հաւատարիմ սիրոյ կոթողներն են, որոնք փողի վրայ ուշք չեն դարձրել Յուդայի նման։ Եթէ բարեպաշտ սրտերը Յուդայի նման հասկանային, այն ժամանակ փոխանակ Աստուծու անուան փառահեղ տաճարների՝ պէտք է հասարակ, հողէ խրճիթներ շինէին. այն ժամանակ սուրբ արուեստն իբրև շուայութիւն պիտի արհամարհուէր։ Հէնց դրա համար ևս հրճուում ենք բարեպաշտների կառուցած հոյակապ եկեղեցիներով և վանքերով. հէնց դրա համար հաղնում ենք զեղեցիկ և մաքուր շորեր Յիսուսի խօսքերը լսելու։ Այս բանը երբէք չպիտի մոռանանք — Մարիամի կատարած արտաքին գործերը նրա համար գովում է Քրիստոս, որովհետև սիրոյ և բարեպաշտ մտածողութիւնից է բղխում. չպիտի մոռանանք, որ մեր ամենաթանկագին ընծան, որ կարող ենք անել Յիսուսին, այդ մեր սիրտն է, առանց որին ամենայն մի արտաքին նուէր ունայն է։ Ուրիշ ինչ բանով կարող ենք երախտագէտ լինել այն զեղեցիկ պարզեւի համար, որ նա դրել է մեր մէջ — նա ծագեցրել է մեր մէջ լոյս՝ զիտենալու, ճանաչելու մեր բարերարի երախտիքը և երախտամու չլինել դէպի նրա արած անթիւ բարերարութիւնները։ Հէնց դրա համար էլ բարեպաշտը լիշում է շարականի մէջ։

IV.

«Լոյս փառաց բանդ Աստուած, որ ծագեցեր ի մեզ զլոյս գիտութեան»։

V.

Յիսուս քո կատարած գործին երբ բարի գործ կանուանէ։ Մարիամին ինչպէս կարող ես նմանիլ։ Ի՞նչպէս կարող ես դու փրկչին քո սէրը ցոյց տալ։ Քո սիրտը փրկչի համար ինչպէս կարող է արձան լինել։ Ի՞նչ վարձատրութիւն կստանաս (քո անունը չի մոռացուի, թէկուզ մարդիկ քեզ մոռանալու լինին)։

Մ ե կ ն ե լ և վ ա ռ ժ ե լ — Սաղմոս դե. 9. «Առէք պատարագս եւ մտէք ի սրահս. երկիր պաղէք Տեառն ի զաւիթս սրբութեան նորա»։ Համեմատել այն կէտերն, ուր գուշակուում է նրա մահը (Ղուկ. Ժբ. 31—34. Մտթ. Ժգ. 21—24)։

Վ ա ռ ժ ու թ իւ ն — «Տուր ցիս որդեակ զսիրտ քո....»։ «Ջի ոչ միայն հացիւ....»։ «Մարդ հայի յերեսս....»։ «Տէր սիրեցի զվայելչութիւն....»։

§ 50

ՅԻՍՈՒՍԸ ՄՏՆՈՒՄ Է ԵՐՈՒՍԱՂԷՄ

Ն պ ա տ ա կ։ Վերնագիրը։

I.

Յիսուսն ինչո՞ւ համար է գնում Երուսաղէմ։— Նա ևս կամենում է զատիկը տօնել։ Այստեղ ժամանակ է արդէն պատասխանելու այն հարցին, թէ Յիսուս այս տօնին Երուսաղէմ կգայ արդե՞օք։ Ի՞նչու համար ուխտաւորներին այս բանը կասկածելի էր թւում։— Նրանց կասկածանքը հիմնուած էր բարձրագոյն ատենի արձակած հրամանի վրայ։ Արդե՞ք Յիսուսի համար ևս կասկածելի էր այս բանը։ Ի՞նչպէս կարելի էր, որ նա մտնէ այն քաղաքը, որի կառավարութիւնը վճռել է կալանաւորել նրան՝ հէնց որ կվստահանայ ներս մտնել։ Արդե՞ք սա վստահութիւն չէ եկողի կողմից։— Փրկչին յայտնի էր ամենայն ինչ. նա զիտէր թէ ինչ է անում. նա միշտ և հանապաղ, ինչպէս և այժմ, իւր յոյսն երկնաւոր հօր վրայ է դրել և այդ յուսով ասում էր — ես անշուշտ պէտք է Երուսաղէմ գնամ, ապա թէ ոչ՝ այն գործը, որի համար հալըս ինձ ուղարկել է, կանհետանայ, իսկ եթէ գնամ, մահն աչքիս առաջ պիտի առնեմ։ Իհարկէ, եթէ իմ հալըր կամենում է, կպաշտպանէ ինձ իմ բոլոր թշնամիների դէմ և յաղթութիւն կպարգևէ։ Իսկ եթէ

չցանկանայ. եթէ ժողովուրդն ինձ թողնէ և ուրանայ:—Այն ժամանակ թող լինի այն՝ ինչ հօրս կամքն է: Նա ինձ աշխարհ է ուղարկել և յայտնի է թէ ինչու: Անշուշտ անհետ չի կորչի, ինչոր երկրիս վրայ Աստուծու արքայութեան մասին քարոզել եմ. ես գիտեմ, որ շատերի սրտերի մէջ չի մարի այն սէրը, որ ես վառել եմ, վասնզի ճշմարտութիւնն ու սէրն անմահ են, նրանց չի կարելի մահացնել: Իմ գործն աստուածային է, սրա համար ևս նա յաղթող կհանդիսանայ, մինչև անգամ եթէ ես մեռնելու էլ լինեմ: Ուստի միւլթարուած կգնամ Երուսաղէմ՝ իմ ռիսերիմ թշնամիների քաղաքը: («Եթէ որոց սիրենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս»): Ինձ այն միայն կարող է պատահել, ինչ որ հօրս կամքն է: Կեանք, թէ մահ, այնուամենայնիւ յաղթութիւնն իմս է, վասնզի Աստուծանից եմ ուղարկուած՝ մարդկանց սրտերը գէպի Աստուած առաջնորդելու:

II.

Աւանդել նոր նիւթը (Մտթ. իա. 17. տ. 2. ղուկ. ժթ.):

Քրքրել նիւթը: Յիսուս ինչպէս մտաւ Երուսաղէմ: (Նկարագրել նրան տուած թագաւորական պատիւը): Այդ ինչպէս պատահեց, որ աշակերտները և ժողովուրդը նրան այդպիսի յարգանք ցոյց տուին:—Ժողովուրդը (անշուշտ մեծ մասամբ զաւիլիացիք) լսել էր Ղազարոսի յարութեան մասին. նրան յայտնի էր նմանապէս Յիսուսի միւս գործերը. նա հաւատում էր, թէ Յիսուսն է մարգարէից գուշակուած Մեսսիան. սպասում էր նրանից Մեսսիական թագաւորութեան վերականգնումն, ուստի և աղաղակում է—նվասնա Դաւթի որդուն:

Տարօրինակ վարմունք և միանգամայն անհասկանալի—Յիսուս միշտ ոտով է գնացել և երբեք թույլ չէ տուել, որ իրան ծառայեն, ընդհակառակն ինքն է ծառայել ուրիշներին. ոչ մի ժամանակ թույլ չէ տուել, որ իրան որպէս թագաւոր պատուեն և մեծամեծ ցոյցեր անեն. նա հեղ է եղել և սիրել է խաղաղութիւն, հանգստութիւն: Նա մինչև այսօր ոչ մի ակնարկութիւն չէ արել, որ ինքը մարգարէից խոստացած Մեսսիան է և երբ Պետրոսն առաջինը ճանաչեց նրա Մեսսիա լինելը, աշակերտներին լռել պատուիրեց, իսկ այժմ հարիւրաւորներին, նոյն իսկ մանուկներին, թույլ է տալիս հռչակելու,

որ ինքը Մեսսիան է: Հինգ հազարին կերակրելուց յետոյ, երբ ժողովուրդը նրան թագաւորի տեղ էր ուղում ընդունել, հեռացաւ, իսկ այժմ թույլ է տալիս ամենին ողջունելու իրան որպէս թագաւորի: Եւ այս մեծաշուք փառքով գնում է նա այն քաղաքը, ուր նրա ռիսերիմ թշնամիներն են կենում—և որի իշխանութեան ղեկը նրանց ձեռումն է: Այո, նա մտնում է այն քաղաքը՝ համոզուած, որ իւր թշնամիքը վճռել են կալանաւորել: Նա գիտէ, որ այս վարմունքով ևս աւելի պիտի գրգռէ խաւարասէրներին:

Ի՞նչպէս պէտք է լուծել այս տարակուսութիւնները: Ինչու Յիսուսն այդպիսի մեծ հանդիսով և յայտնի կերպով է մտնում քաղաքը. ինչ է ուղում ասել զրանով: Փառասիրութեան համար չէ այդ, անշուշտ: Չատ կարելի է ժողովրդի զուլին է ուղում անցնել և նուաճել քաղաքը: Չատ կարելի է ուղում է փարիսեցիներին և բարձրագոյն ատենի անդամներին հալածել և կամ նուաճել հռովմէական փոքրիկ աշտարակը և ապա երկրաւոր իշխանութիւն հաստատել այնտեղ, որին ժողովուրդը հոգով ցանկանում էր: Անկարելի է, որովհետեւ Յիսուս երկրաւոր թագաւոր չէ կամենում լինել. նա միշտ քարոզել է, որ ինքը երկնաւոր թագաւոր է կամենում լինել—ոչ թէ հրէից արքայ, այլ սրտերի տէր: Այս իշխանութիւնը նա չէ ցանկանում ուժով, գէնքի զօրութեամբ, արիւն թափելով ձեռք բերել, ինչպէս երբեմն Եղիան, այլ հանգիստ և խաղաղ կերպով: Ապացոյց, որ նրա մուտքը խաղաղութիւն է գուշակում: Նա նստած է իշի վրայ, նրա կուսակիցները արմաւենու ճիւղեր ունին ձեռներին և ոչ թէ սրեր. փոքրիկ աշտարակում կենող հռովմայեցիք ոչինչ նշանակութիւն չեն տալիս նրա քաղաք մտնելուն (նոյն իսկ բարձրագոյն ատենանը մեղադրանաց կէտ չհամարեց այս վարմունքը):

Ի՞նչ էր Յիսուսի միտքը, որ այսպիսի հանդիսաւոր կերպով մտնում էր քաղաքը:—Արքայապէս նա կամենում էր բոլոր իսրայէլացիներին (պասէքի տօնին երկու միլլիօնից աւելի բաղմութիւն էր հաւաքւում Երուսաղէմում) յայտնել, որ Աստուծանից և մարգարէներից գուշակուած Մեսսիան է Դաւթի որդին և այս փայլը նպատակաւոր էր, որովհետեւ փարիսեցիները և բարձրագոյն ատենի անդամները սիւալ լուրեր էին տարա-

ծում ժողովրդի մէջ նրա մեսսիական կոչման վերաբերութեամբ: Յիսուս կամենում է հերքել թշնամիների տարածած սխալ լուրերը և յայտնել ժողովրդին, որ Երուսաղէմում իշխելու իրաւունքն իրանն է՝ որպէս ճշմարիտ Մեսսիայի և ոչ բարձրագոյն ատենին: Յիսուս այսպէս է կամենում դիմագրել և նրանց տգեղ մտադրութիւնները մերկացնել: Ամբողջ Երուսաղէմը շարժման մէջ պիտի լինի. նա պիտի հարցնէ— ո՞վ է սա, որ գալիս է. պէտք է լսէ և հաւատալ եկողին, որովհետեւ Յիսուս թէ քաղաքին և թէ ամբողջ ժողովրդին վերջին միջոցն է ներկայացնում՝ իրան որպէս Մեսսիա ճանաչելու, իրան յարելու, որպէս հարազատ յիշոյ ծառայելու՝ թէ խօսքով և թէ սրտով: Այ՛ն, Յիսուս վերջին անգամ կամենում է որոնել և երջանիկ դարձնել, ինչ որ կորած էր ցարդ:

Երուսաղէմ մտնելիս Յիսուսն ինչ էր մտածում քաղաք մտնելու հետեւանքի վրայ:— Ուրախանում է ժողովրդի ցնծութեան ձայների վրայ, բայց իրան քաջ յայտնի է միւսնոյն ժամանակ, որ այս հոգեւորութիւնը ժամանակաւոր է, շուտով պիտի սառչի: Չատ լաւ զիտէ, որ ամբոխն իրեն ուրիշ տեսակ Մեսսիա է ընդունում, քան թէ ինքը լինել ցանկանում է: Նա համոզուած է, որ իրան յարգողները շուտով պիտի հեռանան, հէնց նկատեն, որ երկրաւոր իշխանութիւն չէ կամենում հիմնել: Նա գիտէ որ փարիսեցիների և սրանց հետեւողների թիւը անհամեմատ մեծ է. գիտէ նոյնպէս որ իրան ոչ մի երկրաւորն ոչ թէ կարող պաշտպանել այդ զօրութեան գէմ: Եթէ հարցն արիւնհեղութեան հասնէ, դրա համար ևս յաղթութիւն չէ սպասում այս պատերազմից, ընդհակառակն՝ նա մահ է ակնկալում բարձրագոյն ատենից և հէնց սրա համար էլ ի ներքուստ և՛ ուրախ և՛ տխուր է: Այս տխրութիւնը այս վիշտն արդէն քաղաք մտնելուց առաջ յայտնում է: Յիսուսն արտասուում է քաղաքը տեսնելուն պէս, վասնզի զիտէ, որ բնակիչները չեն ըմբռնելու, թէ ո՞րն է նրանց խաղաղութիւնը (այսինքն հաւատալ Յիսուսին): Նա գիտէ, որ իրանց անկեղծ սիրով սիրողին պիտի արհամարհեն և դիմակաւորուած փարիսեցիներին յարեն: Քիտէ, որ ժողովուրդն այս վերջին շնորհաց րոպէից չպիտի օգտուի և չպիտի դառնայ իրան փրկութիւնը որոնելու: Քիտէ որ սլատթի դատաստանը չպիտի հեռանայ իրա-

նից և Երուսաղէմը շուտով պիտի պաշարուի թշնամիներից և կործանուի: Յիսուսն արտասուում է ոչ թէ նրա համար, որ գէպի մահն է դիմում, այլ նրա արտասուքները Երուսաղէմի և նրա բնակիչների համար է, որոնք այն աստիճան կուրացել են, որ փրկութիւնը մերժում են— այն փրկութիւնը, որ նրանց համար է բերում և որի պատճառով ինքը պիտի մեռնի:

Քաղաք մտնելուց անմիջապէս յետոյ Յիսուս մի նոր ապացոյց ևս տուաւ իւր ճշմարիտ Մեսսիայ լինելուն— նա հալածեց աղաւնէվաճառներին (ծախում էին մատաղացուք, հոտաւէտ խնկեր, իւղ և դինի— տես ծանօթութիւն ա. մասնի, երես 19) տաճարից (զաւիթ հեթանոսաց— տես նոյն ծանօթութեան երես 19). կործանեց հատալաճառների սեղանները (սեղանաւորներ, որոնք հռովմէական դրամը փոխում էին տաճարի դրամի հետ: Ուխտաւորները ոչ թէ հռովմէական՝ այլ տաճարի անունով կտրուած յատուկ դրամով պիտի վճարէին տաճարին հասանելի հարկը՝ տուրքը):

Այստեղ իրաւունք ունէ իշխելու միայն բարձրագոյն ատեանը, ուրեմն Յիսուս հրամայելով տաճարի մէջ եղած մարդկանց՝ ցոյց էր տալիս, որ նա է իշխանը և տէրը թէ քաղաքի և թէ երկրի, ուրեմն և նա է Մեսսիան («Ձի մեծ քան զտաճարն է աստ». Մտթ. ժբ. 6.): Յիսուս ոչ մի անգամ այսպիսի իշխանական զօրութեամբ չէ վարուել: Բայց այս անգամ զայրացել էր, որ Աստուծու տաճարը վաճառատեղի են դարձրել և դրամ վաստակելու տեղ (անշուշտ այնտեղ ստախօսութիւն, զողութիւն, մարդասպանութիւն ևս տեղի կունենար), որ տաճարը պղծում են, ուստի և մաքրում է ու հալածում այդպիսիներն՝ ցոյց տալու միւսնոյն ժամանակ, որ ինքը տէր է տաճարի և ցանկանում է, որ Աստուծու տունը յաճախողների սիրտը հեռու լինի այդ տեսակ աշխարհային զբաղումներից և մտօք գէպի երկնայինը վերանայ: Բարձրագոյն ատեանը, որի թոյլտուութեամբ միայն վաճառականները մանրում և վաճառում էին, ինչպէս համբերեց այս վարմունքին:— Ատեանն ինքը ևս նկատում էր իւր տգեղ վարմունքը— մի քանի կոպէկ ստանալով նրանից, թոյլ էր տալիս վաճառականներին մինչև տաճարի ներսը ոտք դնել իրենց կենդանիներով: Միւս կողմից զգում էին Յիսուսի իրաւացի նկատողութիւնն և իշխանական

գորութիւնը: Մի երրորդ կէտ ևս մոռանալու չէ— Յիսուսին ուսանանա կոչող բաղմութիւնն ևս ներկայ էր այնտեղ և համակիր փրկչի վարմունքին, ուստի լուութիւն է թէ՛ վաճառողներին և թէ՛ բարձրագոյն ատենի կողմից:

Համախմբել գլխաւոր մտքերը— աշխարհային փառք և պատիւ վայելելը չէ, որ Յիսուսն այսպիսի հանդիսով մուտք է գործում քաղաքը, այլ նրա փրկչական սէրն առկուսեալ ժողովուրդը մի կողմից, միւս կողմից իւր կոչումն է ստիպում մտնելու ոխերիմ թշնամիների քաղաքը և յաղթական կերպով յայտնելու ամենին իւր մեսսիական արժանիքը: Նա զոհում է իրան ժողովրդի համար, վասնզի նրա Արուստղէմ մտնելը մահ կարող է բերել իրան: Թէև սկզբում փոքր ինչ ուրախանում է, որ իւր մուտքը բարի հետևանք ունեցաւ, բայց ժողովրդի սխալ ըմբռնողութիւնը նրա մեսսիական կոչման վերաբերութեամբ, որը և ժողովրդի կործանման առիթ եղաւ, շուտով տխրութեան փոխեց նրա ուրախութիւնը: Թէև այդ այդպէս է, բայց և այնպէս նա գործում է համաձայն իւր կոչման և հանգիստ ու խաղաղ ձևով— նա իւր իշխանական գորութիւնը ցոյց է տալիս աղանձվաճառներին հալածելով և հատավաճառների սեղանները կործանելով:

III.

Յիսուս ոչ թէ Արուստղէմ է մուտք գործել, այլև անբռնութեամբ կերպով մեր երկիրը, մեր քաղաքը և մեր սիրտը:

Համեմատել— նա այսօր ևս ուրախանում է ամեն մի նմանօրինակ ուրախութեան արտայայտութեան և փառաբանութեան համար և ընդհակառակն՝ տխրում է նրանց վրայ, որոնց սրտերը երկրորդ տեսակ հողին է նմանում, որոնք սկզբում մեծ եռանդով սկսում են յարգել և պատուել, բայց շուտով մոռանում, թողնում են այդ՝ ոչ թէ Յիսուսի իրա պատճառով, այլ մարդկանց համար: Ով Յիսուսին կարհամարհէ և կհեռանայ նրանից, սրանով սկիզբն կդնէ իւր կործանման, ինչպէս Արուստղէմն արաւ: Յիսուսի յորդորը և մեզ մօտ դալը ևս վերջինը (մեր մահից առաջ) կարող է լինել, ուստի մենք ևս մեր ժամանակում պիտի մտածենք, թէ որն է մեր փրկութիւնը որն է մեզ համար խաղաղութիւն բերողը: Յիսուսն այսօր ևս թէ արտաքին (մեր աստուածալաշտական ծէսերը) և թէ ներքին (հա-

ւատ և սէր) կերպով կամենում է փառաբանուել և ճանաչուել. այսօր ևս, ինչպէս և այն ժամանակ, ներքին կերպով ճանաչողների սրտի թագաւոր է և դա ամենից աւելի հաճելի է նրան: Տարբերութիւն — Յիսուսը մի անգամ մտաւ Արուստղէմ հանդիսաւոր կերպով, իսկ մեր սիրտը նա ամեն րոպէ է մտնում անտեսանելի կերպով և հետզհետէ, հենց որ մենք տանք, ուսումնարանում, եկեղեցում... խում, տեսնում և սովորում ենք, ինչ որ քրիստոնէական ոգուն համապատասխան է (թանձրացեալ օրինակներ): Մենք նրան ոչ թէ միայն շրթունքներով ենք լիշում տէր կամ թագաւոր (դուք ևս Խորայէլի նման երկրային թագաւոր չկարծէք), այլ պաշտում ենք նրան սրտով և հոգւով (ապացոյց):

Աղանձվաճառներին և հատավաճառներին արտաքին ինչ կապ ունի Յիսուսի Արուստղէմ մտնելու հետ՝ ներկայ ժամանակում:— Ինչ տեղ էլ որ մարդոց սիրտն է մտնում Յիսուս, այնտեղից էլ հալածում է անարդարութիւնը և տգեղը: Յիսուս նրանց հետ միասին չէ կարող ապրել, վասնզի մեր սիրտը պիտի մի աղօթատուն լինի (ամենայն մի բարի մտածողութիւն, ամեն մի բարի խօսք և գործք, որ մեր սրտից բղխում է, աղօթք է) և ոչ աւազակաց այր (ուստի սիրտն զբաղուած է միայն իւր կոպէկով, շահով, նախանձով, բարկութեամբ և ատելութեամբ): Այն սիրտը, որ Յիսուսն է մաքրել, այն կեանքը, որ Յիսուսով է ղեկավարւում, ամենագեղեցիկ սվասնան և կեցցէն է, որ մարդիկ կարող են երգել Յիսուսի համար:

IV.

Նսալի խ. Յ. «Պատրաստ արարէք զճանապարհս տեառն»:

V.

Յիշեցէք այնպիսի անձինք, որոնց մէջ Յիսուս մուտք է գործել: Ի՞նչից կարելի է նկատել, որ մինի մէջ Յիսուսն սկսել է մուտք գործել: Դու այդ բանին ինչով կարող ես օգնել: Ի՞նչից կարելի է տեսնել, որ Յիսուս որպէս թագաւոր իշխում է քո սրտում: Ծաղկազարդի տօնի նշանակութիւնը: Ի՞նչպէս էք հաւանում, երբ միքանի կոպէկի համար թոյլ է տրւում զանազան մանրավաճառների եկեղեցու բակերում դինի, օղի վաճառելու:

Մեկնել և վարժել: Զքր. թ. 9—10. «Աւրախ լեր յոյժ, դուստր Սիոնի... մինչեւ ի ծագս երկրի»: Սաղմոս իդ. 7—10.

«Համբարձէք իշխանք զգրունս ձեր... սա ինքն է թագա-
ւոր փառաց:» Սաղմոս ճԺԷ. 26. «Որհնեալ որ գալոցդ ես յա-
նուն տեառն եւ օրհնեցաք զքեզ ի տանէ տեառն»:

Վարժութիւն—«Ոչ ամենայն, որ ասիցէ...»: «Զինչ կայ
իմ բնաւ...»: «Ոչ գիտէի զի ի տան...»: «Ոչ կարէք երկուց
տէրանց...»: «Յիւրան եկն եւ իւրքն...»: «Յիսուս Քրիստոս
երեկ եւ այսօր...»: «Պատրաստ արարէք զճանապարհս տեառն»:

§ 51

ՅԻՍՈՒՍ ՎԻՃԱԲԱՆՈՒՄ Է ԹՃՆԱՄԻՆՆԵՐԸ ՀԵՏ

Ն պ ա տ ա կ: Վերնադիրը:

I

Ո՞վքեր են այդ թշնամիները: Ո՞վ պիտի սկսէ վիճաբա-
նութիւնը: Ի՞նչ է նրանց վիճաբանութեան նպատակը (յիշել
§ 48-ի մէջ ակնարկուած յարձակումները):

II.

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

Հ ա ռ ց Յ ի ս ու ս ի կ ա տ ա ռ ե ա յ ի շ խ ա ն ու թ ե ա ն
մ ա ս ի ն (Մտթ. իա. Մրկ. Ժա. Ղուկ. ի.): Քաջանայապետ-
ներն և դպիրները հարցնում են Յիսուսին, թէ ի՞նչ իշխանու-
թիւնով նա ժողովրդի առաջնորդ է ներկայանում, որովհետեւ
իրանք կասկածում էին նրա կատարեալ իշխանութեան մասին
և կամենում էին ժողովրդի միտքը պղտորել և կասկածի
ենթարկել: Յիսուս ոչ մի պատասխան չի տալիս նրանց, դրա
փոխարէն մի իմաստուն հարց է առաջարկում Յովհաննիսի
մկրտութեան վերաբերմամբ: Նրանք չէին կարող ուրանալ և
ոչ էլ հաստատել Յովհաննիսի աստուածային՝ երկնքից ստա-
ցած իրաւունքը (ապացոյց), ուստի կեղծաւորաբար՝ չգիտենալու
են տալիս իրանց: Այժմ Յիսուսն իրաւացի կերպով կարող է
նրանց ասել—եթէ դուք վստահութիւն չունիք Յովհաննիսի
մասին ձեր կարծիքն ասելու, ուրեմն և ոչ իմ վերաբերու-
թեամբ իրաւունք և հասկացողութիւն ունիք դատելու, որո-
շելու, թէ ես ինչ գիրք և յարաբերութիւն ունիմ առ Աստուած:
Նրանք պատանձուում են: Անշուշտ ժողովուրդը կձաղրէր նրանց

և Յիսուսին իրաւացի կհամարէր:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Հ ա ռ կ ի դ ա հ ե կ ա ն ը (Մտթ. իբ. 15—22):

Նիւթի ընթերցումից յետոյ իսկոյն պիտի հարցնել—ինչ
են կամենում փարիսեցիներն իրանց այս վիճաբանութիւններով:
—Նրանց միտքն է «Թէ որպէս դնիցեն նմա որոգայթ բանիւք».
կամենում են նրա բերնից մի խօսք լսել յօգուտ իրանց և մատ-
ներին փաթաթան դարձնելով, ժողովրդի առաջ բամբասեն և
նրա համարմունքը նուազեցնեն ամենի աչքում: Խաւարասէր-
ներն իրանք չեն գնում, այլ ուղարկում են իրանց աշակերտ-
ներին, որպէսզի Յիսուսն աւելի ազատ խօսի—կարծում են թէ
իրանցից կքաշուի և կզգուշանայ ազատ խօսելուց: Փորձիչները
գովում են Յիսուսի քաջութիւնը, որ նա ամեն ինչ ճշմար-
տութեամբ է խօսում, առանց երկրորդական նպատակների,
որպէսզի աւելի ծանր խօսքեր յափշտակեն նրանից: Յիսուսի
թշնամիները կարծում են, թէ անելանելի դրութեան մէջ են
գրել իրանց դէմ մաքառողին, որովհետեւ եթէ նա լռէ և ոչ
մի պատասխան չտայ, այն ժամանակ ժողովրդի աչքում որ-
պէս երկչոտ կներկայանայ, ուրեմն և մարգարէ չէ, որ չէ վստահա-
նում ամենի երեսին իրանց սխալանքն ասելու առանց երկիւղի:
Եթէ դրական պատասխան տայ, այն ժամանակ ժողովուրդը
կատէ, հայրենաց թշնամի կհամարէ և բարեկամ իւրեանց նե-
ղիչներին: Իսկ եթէ բացասական պատասխան տայ, այն ժամա-
նակ Հերովդէսի ծառաները (և այդ բնական է, որովհետեւ
իրանց տէրը իւր բոլոր իշխանութիւնը և փառքը հռովմայե-
ցիներին է ստացել, ուրեմն և բարեկամ նրանց) որպէս ժո-
ղովրդեան մոլորեցուցիչ և դալթակեցուիչ կներկայացնեն հռով-
մայեցւոց դատաւորին (Պիղատոս) և նա, ինչ կարծիք, իսկոյն
բռնել կտայ և կբանդարկէ:

Ահա փարիսեցիները կաբժիքները, թէ Յիսուսն ինչպէս է
մտածում այս հարցի մասին: Յիսուսն իսկոյն նկատում է թշն-
ամիները խորամանկութիւնը, լարած որոգայթը և իւր աս-
տուածային մտածողութեամբ մի չորրորդ ճանապարհով հարցի
վճիռը կամենում է լուծել: Հրամայում է մի հարկի դահե-
կան բերել և ստիպում է թշնամիներին, որ իրանք պա-
տասխանեն, թէ կայսեր գիրն է և պատկերը և ուրեմն

իրանք կվկայեն, թէ կայսրը մեր տէրն է: Այնուհետև միայն՝ Յիսուս տալիս է իւր պատասխանը— դուք Հռովմի կայսեր հպատակներն էք, նա ձեր ամենամեծ երկրաւոր տէրն է, ուրեմն և ապօրինի չէ հատուցանել նրան հասանելի երկրաւոր հարկը, բայց դուք մի ուրիշ մեծ տէր ևս ունիք երկնքում, որից կեանք և սիրտ էք ստացել, նա ևս ի պատկեր իւր է ստեղծել ձեզ, ուրեմն նրան ևս պիտի հատուցանել իրան հասանելին— ձեր կեանքն ու սիրտը: Դուք այնպէս պիտի աղօթէք, մտածէք, սիրէք և կեանք վարէք, ինչպիսին նրան հաճելի է: Եթէ ձեր հայրերը Աստուծուն հասանելին Աստուծուն էին տուել շարունակ, էլ ծառայ չէին լինիլ Հեթանոս հռովմայեցիներին և դուք ևս չէք կարող ազատ լինել Հռովմի շղթաներից և ամեն տեսակ յանցանքներից մինչև որ ձեր սրտերն Աստուծուն չտաք: Ի՞նչ տպաւորութիւն արաւ այս պատասխանը փարիսեցիներին և ժողովրդին վրայ:

Հ ա մ ա խ մ բ ե լ վճիռները:

ԵՐՐՐՈՐԻ ՀԱՏՈՒԱԾ

Այդ ու չար մշակներն առաւել— (Մտթ. իա. Կրկ. Ժբ. Ղուկ. ի.)։ Առաւել ՄԵՎՆՈՒԹԻՒՆԸ։— Այդին Խորայելի ժողովուրդն է, որ Աստուած ինքն է տնկել և զգուշութեամբ խնամել, որոշելով նրան միւս բոլոր ազգերից։ (Համառօտակի ապացուցանել Խորայելի պատմութիւնից, թէ ինչպիսի սիրով և հաւատարմութեամբ է սիրել Աստուած այդ ազգին։) Իբրև պտուղ իւր աշխատանքի, Աստուած սպասում է ընտրեալ ազգից, որ նա հաւատ և հնազանդութիւն ունենայ դէպի ինքը իսկ սէր և արդարութիւն՝ դէպի իւր ընկերը։ Այդեպանները, որոց աստուած այդին յանձնել էր, քահանայք, ուսուցիչներ, ժողովրդեան առաջնորդներ, իմաստուններն ու մեծամեծներն են, որոց բոլորի պարտականութիւնն էլ այն պիտի լինի, որ հոգան սպասած պտուղն ստանալու համար։ Ծառաները, որոց Աստուած ուղարկում է պտուղը ժողովելու՝ մարգարէներն են, բայց նրանք բոլորն էլ անարգուեցան ապերախտ այդեպաններից՝ ոմանք մահ ստանալով և ոմանք հալածուելով (տ. Եղիա, Երեմիա, Յովհաննէս մկրտիչ)։ Վերջապէս, Աստուած ուղարկում է իւր միածին որդի Յիսուսին, որպէս Մեսսիա, բայց հենց սրան ամենից շատ ատեցին այդեպանները, որովհետև նա Աստուծու

անունով պիտի խլէր նրանցից իրանց փառքն ու պատիւը, իշխանութիւնն ու զօրութիւնը և շատ դառն ճշմարտութիւններ պիտի ասէր նրանց երեսին։ Բայց որպէսզի այդեպանները ժողովրդին իշխելու իրաւունքը իրանց ձեռին պահեն, սպանեցին Միածինն՝ Աստուծու որդուն։ Այս չար այդեպանները փարիսեցիները, դպիրները և քահանաներն են, որոնք Յիսուսի առաջ կանգնած են։ Բայց չէ՞ որ Յիսուսը կենդանի է դեռ ևս։ Նա շատ լաւ գիտէ, որ սրանք կամենում են իրան սպանել և պէտք է սպանեն՝ հենց որ յաջող ըստէն ներկայանայ. նա այստեղ դուշակում է, ինչպէս և առաջ, իւր մահը։ Առաւել վերջն ինչու է Յիսուս հարցը փարիսեցիներին ուղղում։— Որովհետև իրանք պիտի դատեն իրանց և այնպէս էլ ասում են, վասնզի առաւել միտքը դեռ ևս չեն հասկանում։ Երբ Յիսուս՝ յայտնում է, որ Աստուծու արքայութիւնը կխլուի ձեզնից և կըտրուի Հեթանոսներին, նոր են գլխի ընկնում, որ իրանց նմանեցրած է վերջին այդեպաններին— նրանց բարկութիւնը կրկնապատկուեց՝ մանաւանդ որ իրան Աստուծու որդի էր անուանում, իսկ իրանց մարգարէների և Մեսսիայի սպանողներ և Աստուծու արքայութիւնը արհամարհուած Հեթանոսներին է խոստանում։ Հ ա մ ա խ մ բ ե լ։

ՉՈՐՐՈՐԻ ՀԱՏՈՒԱԾ

Յիսուս փարիսեցիներին դէմ պատիժ է քարոզում. (Մտթ. իգ.)։

Փրկիչը իւր ճշմարտախօսութիւնով երկրի զօրաւոր մարդկանցը՝ փարիսեցիներին զրգուեց իւր դէմ (առաւել մէջ)։ Այդ բաւական չէ, նա քարոզում էլ է ժողովրդին (մասնաւորել) և նրանց բարկութիւնը ևս աւելի շարժում։ Նա գիտէր նրանց բոլոր մտադրութիւնները. նրան անյայտ չէր նրանց դիրքը։ Բայց Յիսուս քարոզում էր ճշմարտութիւնը այդ կեղծաւորների երեսին և նրանց բարեպաշտ կարծուած դէմքից առնում դիմակը, որպէսզի ժողովուրդն աչքով տեսնէ նրանց դիմակաւորուած տգեղ կերպարանքը։

Կարգաւ։— Սաներն այնքան անգամ լսել են փարիսեցիների և սրանց նմանների մասին, որ մեկնութիւնն աշակերտներն իրանք կարող են տալ։

Ուսուցիչը թերևս կարևորութիւն ունենայ տուն 5. «Լայ-

նեն զգրապանակս*) իւրեանց եւ երկայնեն զքաղանցս Հանդերձից» կէտերի վերաբերութեամբ: Մովսիսի գրքերից զանազան Հատուածներ արտագրում էին մագաղաթի վրայ և դնում էին մի քառակուսի գործիքի մէջ ու փոկերով կապում էին ճակատի վրայ և կամ ձախ ձեռքին՝ աղօթելու ժամանակ: Սրանք ցոյց էին տալիս կրողի բարեպաշտութիւնը, իսկ վերջը որպէս բժժանքներ էին գործ դնում: «Քղանց»ը ժապաւէնի, ցցունքի նման է, որ կրում էին խորայնլացիք արտաքին Հանդերձի վրայ, որոնք ըստ IV. Մովս. Ժե. 38. 39 աստուածային պատուիրանները պիտի յիշեցնէին, ուստի սա ևս Համարում էր նշան բարեպաշտական: Տուն 24. «ղմժղուկս քամէք եւ զուղտս կլանէք» նշանակում է չնչին բաները (օրինակ) ճըշտութեամբ կատարել, իսկ մեծամեծ պարտաւորութիւնները մոռացութեան տալ՝ առանց խղճահարուելու:

Յիսուսի այս վերջին խօսքերն ինչո՞վ է զանազանում մինչև այժմ խօսածներէից:— Փոխանակ արդար բարկութեան ընդդէմ փարիսէական կեղծաւորութեան, և չարութեան, ցոյց է

*) Քրապանակ տեսն հրէաները (որոնք հերքում էին աւանդութիւն և յաւելուած ասած բաները), այլև շատ քրիստոնեայ մեկնիչներ Մովսիսի այս խօսքերը փոխաբերական մտքով են հասկանում և ոչ թէ բառացի: Նրանք ասում են—սրանով մարգարէն կամենում է ասել, թէ Աստուծու պատուիրանները մոռացութեան չպէտք է տալ, այլ շարունակ և հանապազ յիշել:

Ռաբբինական երբ (որոնք աւանդութիւնը սուրբ գրքի խօսքերին համազօր էին համարում) այս միւսնոյն կէտը, նոյնպէս և սրան նման հատուածները**) տառացի էին ընդունում: Ըմբռնողու-

**) II. Մովս. Ժգ. 9. 16. «Եւ եղիցի քեզ նշան ի վերայ ձեռին քո, եւ յիշատակ առաջի աչաց քոց, զի լինիցին օրէնք տեառն իբերան քում: Եւ եղիցի նշան ի վերայ ձեռին քոց, եւ անշարժ առաջի աչաց քոց»:

IV. Մովս. Ժե. 38. 39. «Խօսեաց ընդ որդիսն իսրայէլի եւ ասացեսցնոսա. զի արասցեն իւրեանց ծոպս իտտունս հանդերձից իւրեանց չազս իւրեանց. եւ դիցեն ի վերայ ծոպից տտնոցն ասղանի կապուտակ: Եւ լինիցի այն ձեզ ի ծոպսն, եւ տեսանիցէք զայն եւ յիշիցէք զամենայն զպատուիրանս տեառն առնել զնոսա. եւ ոչ խտտորիցիք զկնի մտաց եւ աչաց ձերոց, որով դուքն պոռնկիք»:

V. Մովս. Ժա. 18—20. «Եւ դիջիք զբանս զայս իսիրտս ձեր, եւ արկջիք զնոսա նշան ի ձեռս ձեր, եւ եղիցին անշարժ առաջի աչաց ձերոց: Եւ ուսուցիք որդւոց ձերոց խօսել զնոսա ի նստել ի տան, եւ ի դնալ ի ճանապարհի, եւ ի ննջել, եւ ի յառնել: Եւ գրեսցիք զնոսա ի վերայ սեմոց տանց ձերոց եւ ի դրունս ձեր:

տալիս խորին վիշտ և տրտմութիւն կուրացած և խստապարանոց Նրուսաղէմի վրայ, որ սիրով ինքնասէր փարիսեցիներին է հետևում և մոռանում իւր փրկչին: Նա վշտանում է քաղաքի վրայ, որ իրան չէ ծառայում, որ անհոգ է դէպի իւր տխուր ապագան և ոչ մի քայլ չէ անում դէպի փրկութիւն և սրանով էլ իւր կորուստն արագացնում է: Դրա համար ևս մի տխուր ողբով վերջացնում է Նրուսաղէմի կործանման գուշակութիւնը: Համախմբել:

Փարիսեցիները և դպիրները երկիցս փորձում են Յիսուսին բանիւք որոգայթ դնել և նրա նշանակութիւնը ժողովրդի աչքում կոտրել, բայց Յիսուսի իմաստութիւնը ի դերև է հանում նրանց խորամանկութիւնը: Երկու անգամ Յիսուս խիստ կերպով հարուածում է նրանց և անուանում է մարգարէասպաններ. խլում է երեսների դիմակը և նրանց կեղծաւորութիւնն ու չարութիւնը ի տես աշխարհի է դնում:

III ա.

Եթէ Համեմատելու լինենք, թէ ինչպէս Յիսուս ներկայ և անցեալ ժամանակներում թշնամեաց վրայ յարձակում և յետ է մը-

թեան այս տեսակէտից՝ Ռաբբինի դերութիւնից յետոյ, յառաջացաւ այն ուղիորդութիւնը, որ ջերմեռանդները աղօթքի ժամանակ ճակատին և թևին գրապանակներ (թեֆիլա) էին կապում և քղանցքները (մեզուզա) լացնացնում:

Թեֆիլան այսպիսի կազմութիւն ունէր—մի տախտակ՝ խորանարդի ձևով, երեք տեղից միջուկը մէջ է մէջ հանած՝ մօտաւորապէս այնքան խոր, որքան ձկոյտի վերջին յօդի երկարութիւնն է:

Այսպէս բաժանելով կստանանք չորս սիւնաձև ժանիքներ, որոց վրայ դնում էին մի որևէ սուրբ կենդանու թրջած կաշի. ձեռով ձընշում և թողնում էին որ չորանայ: Կաշին ստանում էր փայտեայ կաղապարի ձևը: Այսպէս կաշին ունենում էր չորս սիւնաձև դատարկ տարածութիւն: Իւրաքանչիւր բաժանմունքում դնում էին մի մի հատ մագաղաթ, որոց վրայ գրած էր լինում զանազան հատուածներ օրէնքից, զորօրինակ

V. Մովս. Ժա.—13. 21. «Եւ եթէ լսելով լուիցես զամենայն...»:

V. Մովս. Գ. 4—9. «Լուր իսրայէլ տէր Աստուած մեր'...»:

II. Մովս. Ժգ. 3—10. «Յիշեսցիք զօրս զայս...»:

II. Մովս. Ժգ. 11—16. «Եւ եղիցի յորժամ տանիցէ գբեզ տէր Աստուած քո յերկիրն Քանանացոց...»:

Այդ մագաղաթները ոլորում էին, փաթաթում հորթի մազի մէջ

դում, կտեսնենք նրա զարմանալի իմաստութիւնը և աննենգ, արդարացի վարմունքը—նա կամ խորտակում է նրանց և կամ աշխատում է ուղիղ ճանապարհի վրայ կանգնեցնել: Ներկայում ևս շատ քրիստոնեաներ ունին իմաստութիւն և հրմտութիւն վարմանց և խօսակցութեանց մէջ, բայց յաճախ վատ նպատակի համար են գործ դնում, այդպիսիք իրանց ընդունականութիւնը ի բարին պիտի գործ դնէին, Յիսուսին պիտի նմանէին: Ամեն մի քրիստոնեայ իրան համար սուրբ պատականութիւն պիտի համարէ այդ երկու տեսակ ղէնքով (իմաստութիւն, արդարութիւն) պատերազմելու այն բոլոր բաների դէմ, որ հակառակ է Աստուծուն և նրա որդուն: Յիսուսի կրած այս պատերազմն ընդդէմ փարիսեցիների և առհասարակ ընդդէմ մեղաց (օրինակներ) մի փառաւոր օրինակ է ամենայն մի անհատի համար. Ուստի մենք ևս կարող ենք ոգևորուել անմահ Յիշխի հետ այսպիսի հանգամանքներում և ասել—«չէ մեր մարդ զօրավար, այլ զօրագլուխն ամենայն մարտիրոսաց»:

III. բ.

Փարիսեցիների վարմունքը, բռնած դիրքը դէպի ժողո-

ւ ցիշեալ կարգով դնում էին իւրաքանչիւր դատարկ տեղի մէջ: Այնուհետև արկղիկը նստացնում էին երկու տակ՝ կաշուց շինած չատակի մէջ, որի ափերը $\frac{1}{4}$ մատնաչափ բարձրութիւն ունէր: Յատակի կողքին կարում էին մի հատ կաշեայ օղակ, որի միջով անցէ կացրած գարու տերեւի լայնութեամբ մի հատ երկար սև փուկ, Սրա միջնորդութեամբ արկղը կարելի էր գլխին կապել, այնպէս որ վերջինս ուղիղ ճակատի վրայ՝ յօնքերից բարձր լինէր: Այդ փուկը յետևի կողմից՝ ծոծրակի վրայ այնպէս էին հանգուց տալիս, որ $\neg$ (եբրայեցերէն $\neg$) ձևն էր


ստանում: Մի ուրիշ տառ էլ $\neg$ (եբրայեցերէն $\neg$) արկղի կողքին էր կացրած: Փուկի աւելորդ մասը մի կողմից՝ աջ ուսի վրայով ձգւում էր մինչև պորտը, իսկ ձախ կողմից միւս ծայրը՝ մինչև կուրծքը: Ահա սա է թեֆիլա, գլխի, ճակատի գրապանակ կոչուածը:

Թևի գրապանակը կաշեայ չորս բաժանմունքները չունի. սա պարզ է—մատնոցի նման կլոր մի հատ դատարկութիւն, ուր դնում էին մագաղաթի փաթեթը, որի վրայ գրուած էր մաքուր և գեղեցիկ ձևով միևնոյն հատուածները չորս զանազան էջերում: Արկղի ներքին մասը միևնոյն կազմուածն ունի՝ ինչ որ գլխի գրապանակինը: Արկղը ձախ ձեռքի վերին բաղկի վրայ է ամրացրած՝ երեսը դէպի սիրտը դարձրած, հանգուցն այստեղ $\neg$ (եբրայեցերէն $\neg$) ձև ունի: Այս երեք


Պատկեր IV.



Գլխի գրապանակ (կապած.)



Դիւի գրապանակ (բաց.)



Ձեռքի գրապանակ (բաց.)



Ձեռքի գրապանակ (կապած.)

վուրդը, դէպի օրէնքը և դէպի Յիսուս Համեմատելով փրկչի ճշմարիտ աշակերտների վարմանց հետ, որոնք ցարգ յայտնի են մեզ՝ կստանանք Մտթ. ե. 20.

IV.

Մտթ. Ժ. 16. «Եղերուք այսուհետեւ խորագէտք իբրեւ զօձս եւ միամիտք իբրեւ զաղաւնիս»:

Եղիշէ Ե. յեղանակ—«2է մեր մարդ գորավար, այլ գորադուխն ամենայն մարտիրոսաց»:

Մտթ. ե. 20 «Եթէ ոչ առաւելուցու արգարութիւն ձեր աւելի քան զգպրացն եւ փարիսեցւոց՝ ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից»:

V.

Ի՞նչպէս կարող ես դու օձի խորագիտութիւնը և աղաւնու միամտութիւնը հաշտեցնել միմեանց հետ (Թանձրացեալ օրինակներ): Յիսուս Աստուծու Համար ճշմարիտ զինուոր է: Դու ի՞նչպէս կարող ես Աստուծու զինուոր լինել: Ի՞նչպէս պիտի որոշել փարիսական և քրիստոնէական արդարութիւնը: Դու ի՞նչպէս կարող ես Աստուծունն Աստուծուն տալ և կայ-

տաւերը միասին կազմում են ՌՊԶ=Սադգալի անունը, որ նշանակում է ամենագոր, ամենակարող: Փոկի միւս ծայրը վեց անգամ փաթաթում էին բազկին և ծայրը ձկնափ մօտով վաչր թողնում:

Գրադանակներին նման են և հանդերձի քղանցները կամ մեղուկան: Սա բաղկանում է մի հատ մագաղաթից, որի վրայ ներսից գրած է V. Մովս. գ. 4... «Լուր խրայէլ...» Ժա. «Եւ եթէ լսելով լուիցես զամենայն պատուիրանաց նորա, զոր ես պատուիրեմ քեզ աչօր, սիրել զտէր Աստուած քոյ եւ պաշտել...»: Այս մագաղաթը ոլորում էին, (պրածը ներս) գլանի ձև տալիս և դրսից վրան աւելացնում էին Սադգալի բառը: Յետոյ գնում էին մի գլանաձև ամանի մէջ և տեղաւորում սենեակի կամ բակի դրան գլխին մի փոսի մէջ՝ աջ կողմից: Երբ տանից հեռանում էին և տուն վերադառնում՝ սենեակ մտնելուց առաջ շօշափում էին գլանը և մրմնջում Սադմոս ձի. 8. «Տէր պահեսցէ զմուտ եւ զել քո՝ յայսմհետէ մինչեւ յաւիտեան»: Այս առթիւ II. դարում Քրիստոսից յետոյ ըստ Բեյսալի հետեւալ գեղեցիկ նկատողութիւնն է անում. «Երկրիս ազգերը ընդունում են, որ օրհնութիւնն աստղերից է վաչր գալիս տուն, իսկ մենք սրանով վկայում ենք, որ Աստուած դեռ ևս աստղերի բարձրումն է և նրանից միայն օրհնութիւն կարող է մուտք գործել տները, ուստի և գրում ենք փաթեթի վրայ «Սադգալի» խօսքը:

սերը կաշսեր: Ե՞րբ Յիսուս մեզ վրայ ևս կողբայ, ինչպէս երբեմն Երուսաղէմի վրայ: Մեկնեւ և վարժեւ I. Տիմոթ. Գ. 12. «Եւ մարտիր զբարւօք մարտն հաւատոյ եւ բուռն հարդկենացն յաւիտենականաց, յոր կոչեցարն եւ դաւանեցեր դաւանութիւն առաջի բազում վկայից:»

II. Տիմոթ. բ. 5. «Եթէ մարդիկ ոք իցէ՝ ոչ պսակի, եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ»: Դ. 7. «զբարւօք պատերազմն պատերազմեցայ, զընթացս կատարեցի, զհաւատսն պահեցի:»

Յովբէ. 1. «Ո՞չ ապաքէն իբրեւ զփորձութիւն են վարք մարդոց ի վերայ երկրի, եւ իբրեւ զառօրեայ վարձ վարձկանի կեանք նորա»:»

Վարժեւ—«Ոչ ամենայն որ ասէ ցիս....»: «Եւ այս է յաղթութիւն....»: «Մի յաղթիր ի չարէ, այլ....»: «Ինքն իրան յաղթելն ամենամեծ յաղթութիւնն է»: «Զի զօրութիւն իմ ի տկարութեան կատարի»:»

§ 52.

ՅՈՒԴԱՅԻ ՄՍՏՆՈՒԹԻՒՆԸ

Նպատակ: Յիսուսին պիտի մատենեն բարձրագոյն ատենին: I.

Բարձրագոյն ատենն այժմ ինչ դիրք կբռնէ դէպի Յիսուս:—Աւելի խիստ կպնդէ նախկին վճռի (բձնել, սպանել) վրայ, որովհետեւ նրա անդամները (փարիսեցիք) Յիսուսի խօսքերից խիստ վերաւորուած են և իրանց փառքն ու գոյութիւնը պահպանելու համար սառնասիրտ լինել չեն կարող: Բայց ին-

չնումն իսրայէլացիք երկու հատ զգեստ էին հագնում—մինը տակից՝ մարմնին կպած՝ շաբլի նման, որ հասնում էր մինչև ոտները և գոտկով կապում էին, իսկ միւսը՝ վերևից, որը շատ անգամ վերմակի պաշտօն ևս կատարում էր: Վերջինիս գոյնը կապոյտ էր (IV. Մովս. Ժե. 27. «Խօսեցաւ տէր ընդ Մովսիսի եւ ասէ. խօսեաց ընդ որդիսն իսրայէլի եւ ասացես ցնոսա, զի արացես իւրեանց ծոպս իտտունս հանդերձից իւրեանց չազգս իւրեանց եւ գնեցին ի վերայ ծոպի տտնոցն ասղանի կապուտակ....») լինում և ծալքին չորս տեղ ծոպեր ցցունքներ կաշին: Բարեպաշտ իսրայէլացին այսպէս էր աղօթքի կանգնում Եհովայի առաջ և համոզուած էր, որ այսպէս աւելի լսելի կլինի իւր աղօթքը:

չու հէնց տաճարում չեն բռնում:—Այստեղ խաւարասէրները երկիւղ են կրում ձեռք տալ նրան. տաճարում ժողովրդեան բազմութիւնը մեծ էր. լսում էր նրան. այստեղ Յիսուսի կուսակիցները գուցէ դիմադրէին փարիսեցիներին, եթէ վերջինների կողմից որևէ արտայայտութիւն լինէր ի վնաս փրկչի, որի խօսքերը սիրով էին լսում և մարգարէի պատիւ տալիս: Բարձրագոյն ատենը ևս վախենում էր ձեռք տալ: Ժողովուրդը մինչև էրբ Յիսուսին պաշտպան կմնայ՝ նրա կողմը կլինի:—Քանի որ նրա աչքում Յիսուս Մեսսիա է: Ի՞նչով պիտի ապացուցանէ Յիսուս, որ ինքն է նրանց սպասած Մեսսիան:—Պէտք է երկրաւոր թագաւորութիւն հիմնէ, իրան Երուսաղէմի տէր հրատարակէ և ամենի համար ոսկէ դար ստեղծէ: Բայց ինչ էր անում Յիսուս:—Տաճարում քարոզում էր արդարութեան մասին և խիստ յանդիմանում էր հակառակ յատկութեան տէր անձանց: Ի՞նչ տպաւորութիւն կանէին այս խօսքերը զրգուած և յուսով ապրող ժողովրդի վրայ:—Որպէս Մեսսիա շատերի ուշադրութիւնն ունէր գրաւած, նրան յարգում և սիրում էին. կարճ մտածող ամբողջ հազիւ թէ նոյն յարգանքն ընծայէր Յիսուսին, որպէս առաքինութեան ուսուցիչ. անշուշտ շատերը զղջացած կլինէին և վերաւորուած մինչև անգամ, որ իրանց յոյսերն ի դերեւ ելաւ:

Թէ քահանայապետը և թէ բարձրագոյն ատենն ինչ աչքով կնայէին Յիսուսի քարոզների և վարմանց վրայ՝ կիւրակէ օրուանից մինչև այժմ (երեքշաբթի):—Երուսաղէմ մտնելիս և տաճարից աղաւնէվաճառներին հալածելիս և հատավաճառների սեղանները կործանելիս չափազանց վախենում էին՝ երբ տեսնում էին նրա կուսակցութեան ստուարութիւնը, մինչև անգամ երկիւղ էին կրում, թէ մի գուցէ մի յեղափոխութիւն լինի: Սակայն շուտով նկատեցին, որ Յիսուս արիւնով և սրով չէ կամենում իւր իշխանութիւնը հիմնել, ուստի հանգստացան փոքր ինչ. յեղափոխութեան հարցն անհետացաւ սրանց մտքից, բայց ոչ նախանձն ու ատելութիւնը, վասնզի Մովսիսի աթոռի վրայ նստողները դեռ ևս մի ուրիշ երկիւղ ունէին—նա լեռների և քաղաքների թագաւոր չէ, նա սրտերի թագաւոր է անշուշտ: Եւ այս հարցը ոչ պակաս նշանակութիւն ունէր փառաց աթոռի վրայ նստելու սովոր փարիսեցիների համար: Սրա համար

անփոփոխ պահպանեցին իրանց նախկին վճիռը և միջոց էին որոնում իրանց նպատակն իրագործելու և այդ միջոցը դժուար չէր նրանց համար—ժողովրդի համար Մեսսիա չէ նա, ով երկրաւոր ոյժ և զօրութիւն չունի, մեր երկիւղը ժողովրդիցն է, նա այլ ևս նրա կողմը չի լինիլ, ուրեմն.....:

Մի տարակուսական կէտ դեռ ևս մնում էր նրանց համար—եթէ մարգարէին մեր նպատակը (սպանել) յայտնի լինի:—Երկիւղից կթողնի խաղաղ ընթացքը. յուսահատութիւնից իւր հայրենակիցներին (Գալիլիայի կէսն այնտեղ էր) զէնքի կը հրաւիրէ և մեր անձը, նոյն իսկ մեր իշխանութիւնը վտանգի մէջ է: Այսպէս ուրեմն մնում է երկու բան—կամ ծածուկ կերպով բռնել և բանտարկել (բանտարկեալին ժողովուրդը չի պաշտպանի) և կամ տօնից յետոյ անմիջապէս կալանաւորել, երբ ժողովուրդը ցրուած կլինի: Թէև այս այսպէս է, բայց և այնպէս իրողութիւն է, որ հէնց տօնի օրն է պատահել: Այդ ինչպէս կարելի է:

II.

Աւանդել նոր նիւթը—Մտթ. իդ. (տ. Մրկ. Ժդ. Ղուկ. իբ.):

Յիսուսը դիշերն անց է կացնում Զիթենեաց լեռան վրայ: Նա առ ժամ խոյս է տալիս թշնամիներից՝ մինչև որ մահուան ընդմէջ կհասնէ: Քարձրագոյն ատեանը ցերեկով երկիւղ էր կրում ձեռք մխելու, որպէսզի ժողովրդի մէջ խռովութիւն չծագի և հէնց դրա համար էլ յետաձգում էր դործը մինչև որ տօնի օրերն անցնէին: Սրան անմիջապէս հետևում է Յուդայի առաջարկութիւնը: Քահանայապետն ինչ կմտածէր այս առաջարկութեան վրայ:—Յաջող դէպք է ատեցեալին առանց աղմուկի և վտանգի կալանաւորել, ուրեմն և կարող են դատապարտել նրան կամ տօնից առաջ և կամ հէնց տօնի ժամանակ: Որովհետև կալանաւորուածին ժողովուրդն այլ ևս չի հաւատալ, թէ նա Մեսսիան է, ուրեմն մեր թշնամուն աւելի վաղ կարող ենք ոչնչացնել՝ քան թէ կարծում էինք—Յուդային արժէ միայն 30 արծաթ (արծաթը մի ուրբի) վճարել:

Այդ ինչպէս է պատահում, որ Յուդայի մէջ այդպիսի մի տգեղ միտք է ծնում:—Անհաւատալի մի բան—այն անձը, որին Յիսուսն ինքն առաքեալ է ընտրել, որը երեք տարի շա-

րունակ շրջել է նրա հետ, տեսել է նրա քարոզութիւնները, վայելել է նրա սէրը, ամենայն մի բարիք ընդունել նրանցից, իսկ այժմ այդպիսի ապերախտ ձևով է փոխարինութիւն անում և նրան՝ ցմահ ատելի մարդոց մատնում: Միթէ հաւատալու է, որ մի մարդ այդ աստիճանի վատ լինի և այն էլ հրեշտակների խմբի մէջ: Միթէ Յիսուս թոյլ կտար այդպիսի մի անձի իւր հետ շրջել և կամ միթէ Յիսուսից կարող էր ծածուկ մնալ նրա այս անհեթեթ մտածողութեան կողմը: Այդ այդպէս է, բայց և այնպէս առաքեալը մատնեց իւր վարդապետին: Ինչո՞ւ:

—Նախ՝ լիշեցէք նրա ազահութիւնը, երբ նա հարցնում է, թէ ինչ կտաք ինձ: Չմոռանանք, որ ծախսի արկղը նրա մօտն էր (տ. § 49.), ուրեմն բաւական վարպետ էր, թէ ինչ ձևով պիտի վարուել փողի հետ և հէնց դրա համար էլ նրա ազահութիւնը հետզհետէ աւելացաւ (Յովհաննէս առաքեալը դեռ մատնութիւնից առաջ նրան զող է սնուանում—Յովհ. Ժբ. 6.): Նրա մտածողութեան և սրտի վերաբերութեամբ այսօր քանը միայն լիշուում է սուրբ զրքի մէջ: Աշակերտները համոզուած են, որ Յուդան ազահութիւնից ստիպուած դործեց այդ սխալը:

III.

.

IV

Կրկնել Մտթ. իբ. 39. «Սիրեսցես զընկեր քո....»: Ղուկ. իբ. 42. «Բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին»:

I. թ. Տթ. դ. 10. «Զի արմատ ամենայն չարեաց սրծաթսիրութիւն է»:

V

Յոյց տուէք ինձ այնպիսի միջոցներ, որոնք բարի նպատակի համար են դործ դրուել և կամ կարող են դործ դրուել: Ի՞նչպէս էք հաւանում այս ընդհանրացած միտքը, թէ «նպատակն արդարացնում է միջոցը»: Ե՞րբ է տարբերում ձեր կամեցողութիւնը աստուածային կամեցողութիւնից և ինչ պիտի մտածէք այս մասին: Յուդայի յանցանքի (ինքնասիրութիւն, վայելք, դժգոհ աստուածային կարգադրութեան դէմ) սկիզբը ձեր սրտերումն էլ կայ: Ուրեմն «արթուն կացէք եւ սկիցէք....»:

Վ ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ն — «Մի յանցանքը միևսի մայրն է»: «Ոչ կարէք երկուց տէրանց ծառայել»: «Մի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի...»: «Եղբերուք խորագէտք իբրեւ զօձս...»: «Մի՛ յաղթիր ի չարէ...»:

§ 53

ՈՏՆԱԼՈՒՄՅ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՒՈՐ ԸՆԹՐԻՔ

Ն ա Վ ա տ ա կ: Մենք այսօր պէտք է պատմենք Յիսուսի վերջին ընթրիքի մասին, որ տեղի ունեցաւ իւր աշակերտներին հետ:

I.

Այդ ո՞ր օրն էր (հինգշաբթի, բաղարջակերաց տօնի առաջին օրը). ո՞ւր. այդ ի՞նչ ընթրիք է:—Յիշել նախկին պատէքը և սրա նշանակութիւնը. երբ պիտի կատարէին. տօնի սովորութիւնները որպէս մի սրբազան արարողութիւն: Արդեօք Յիսուս, զիտէր, որ սա վերջին ընթրիքն էր: Արդեօք Յիսուսին յայտնի էր, որ Յուդան նրան պիտի մատնէր: Ի՞նչ սրտով Յիսուս իւր աշակերտներին հետ սեղան կնստէր: Յիսուս, որ իւր աշակերտներէն պիտի հրաժարուէր և երկրիցս հեռանար, ի՞նչ ցանկութիւն կ'յայտնէր, ի՞նչ կ'կամենար:—Իւր լիշատակը շարունակուի, մանաւանդ իւր սէրը իւր աշակերտներէն անբաժան լինի: Նրանք և՛ս այնպէս կ'զգան՝ ինչպէս ինքն էր զգում:

II

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒՄԾ

Ո տ ն ա լ ու ա յ (Մտթ. իգ. 17—19. Յովհ. Ժգ. 4—15):

Ն ա Վ ա տ ա կ: Վերնազիրը:

Ք Ր Զ Ր Ե լ ն ի լ թ ը — Յիսուս ցանկանում է իւր աշակերտներին հետ միասին դատկական գառն ուտել, որովհետեւ նա գիտէ, որ այս վերջին անգամն է, ինչ նրանց հետ պէտք է լինի և իւր սիրով մի անգամ էլ նրանց սիրտը լցնէ: Տիրոջ վարմունքը՝ սրբան որ աշակերտներին սրտին մօտիկ է, նոյնքան ևս զարմացք է պատճառում, որովհետեւ տէրն՝ երկրիս վրայ իրանց ամենամեծը՝ ծառայի պաշտօն է վարում, ուստի և հասկանալի է Պետրոսի վարմունքը: Բայց ի՞նչ է խկապէս տիրոջ վարմունքի նպատակը:—Նա ուզում է ասել, երբ ես՝ ձեր տէրը

և վարդապետը ձեր ոտները լուանում եմ, դուք ևս չպիտի ստորութիւն համարէք միմեանց, որպէս եղբայրներ և ընկերներ ծառայելու: Այս բանն իհարկէ առաջին անգամը չէ, որ վերկիւնը ցոյց էր տալիս իւր աշակերտներին—նա իւր ամբողջ կեանքի ընթացքում նոյնն է արել (ապացոյց): Այս վերջին վարմունքը մի ամփոփումն էր նրա սիրոյ, որով յայտնում է, թէ սրանով կճանաչեն ձեզ, որ իմ աշակերտներն էք: Տիրոջ վճռին համաձայն՝ ծառայական սէրը բարի է, գեղեցիկ և մարդկային սրտի ամենաբարձր յատկութիւնն է, բայց այս բանը միայն նրանցն է երանելի դարձնում, որոնք իրանց բոլոր գործերի մէջ նոյնպէս են վարվում և ոչ թէ այս՝ կամ այն հանգամանքում: Ով իրան այդպէս չէ վարժում և կամ մերժում է ծառայական սէրը, ինչպէս Պետրոսը վարուեց սկզբում, այնպիսին մասը չունի տիրոջ հետ և նրա արքայութեան մէջ չ'ա մ ա խ մ բ ե լ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒՄԾ

Յ ի ս ու ս մ ա տ ն ա ն ի շ է ա ն ու մ թ է ո Վ է մ ա տ ն ի չ ը (Մտթ. իգ. Յովհ. Ժգ. 21—26. 34—36):

Ն ա Վ ա տ ա կ: Վերնազիրը:

Յուդան ինչպիսի հոգեկան տրամագրութիւն կ'ունենար, երբ Յիսուս նրա ոտները լուանում էր:—Անշուշտ խիղճը կըտանջէր իրան: Յիսուս նրա ոտները ևս լուաց և սրանով առիթ տուաւ մատնչին յիշելու այն բազմաթիւ սիրոյ ապացոյցները, որ նա վայելել էր, սակայն Յուդայի սիրտն անզգայ է մնում. նա մտածում է լոկ իւր շահի, իւր անձի վրայ—նա մտածում է թէ ինչպէս գլուխ հանէ իւր անմիտ նախազիծը: Նա կարող էր զղջալ և ներողութիւն խնդրել անառակ որդու նման:

Պ ա Ր Գ Ե լ — Յիսուս տրտում է, սիրտը յուզւում է, որ իզուր է անցել ամենայն ինչ. որ իւր անկեղծ սէրը Յուդայի սրտի վրայ ոչինչ տպաւորութիւն չէ թողել—կարճ նա վշտանում է, որ իւր սէրը չ'կարողացաւ մատնչին յետ կանգնացնելու չար դիտաւորութիւնից: Այո, նա ցաւում էր, որ իւր աշակերտներին մինի ձեռքով իւր անձը թշնամեաց պիտի մատնուի: Աշակերտներից իւրաքանչիւրը նոյնպէս տխուր է, որովհետեւ մի այդպիսի ցաւալի իրողութիւն իրանց շրջանից պիտի ծագի: Իսկ Յուդան փոխանակ իւր նողկալի վարմունքի վրայ մտածելու և

զղջալու՝ անամօթաբար ինքը ևս հարցնում է, թէ փրկչի լի-
շած մատնիչն արդեօք ինքն է, և երբ զգում է, որ իւր
անձը մերկացաւ ամենի առաջ, դուրս է գնում գիշերով, սիրտը լի
վրէժի տգորութեամբ զգուելի մտադրութիւնն ի կատար ածելու:

Ի՞նչ էր Յիսուսի նպատակը, որ նա պարզ խօսեց և որո-
շեց մատնիչի անձնաւորութիւնը: Կամենում էր վերջին անգամ
ևս յորդորել մտածելու իւր արարքի վրայ, զուցէ զղջար և
դարձ գար: Միւս կողմից աշակերտներին ամենայն ինչ կանխօ-
րէն էր կամենում ցոյց տալ, որ նրանք չկարծէին թէ Յու-
դայի նման մինը խաբեց իրան: Դարձեալ՝ Յուդան իւր քարա-
ցած սրտովը և իւր ներկայութեամբ չպիտի արատաւորէր ադ-
նիւ մարդոց շրջանը, մանաւանդ որ փրկիչը վերջին անգամ
կամենում էր խօսել իւրաքինների հետ և իւր ամբողջ սիրտը
նրանց առաջ բաց անել — մի այդպիսի սուրբ բոլորում անար-
ժանը ներկայ չպիտի լինէր: Այն սիրտը, որից սէր է բղխում
բոլորի համար, նաև իւր աշակերտների, բնականապէս պէտք է
միատեսակ լինեն, միատեսակ բաբախեն: Այս այն
սէրն է, որ Յիսուս հրաժարական առնելիս պահանջեց իւր աշա-
կերտներից — սէր առ միմեանս, սէր առ եղբայրս և սէր առ
Աստուած: Յիսուս ասում է, նոր պատուիրան եմ տալիս ձեզ,
որ իրար սիրէք, այն ինչ սրանից 1,500 տարի առաջ Մովսիսի
գրքում (III Մովս. ԺԺ. 18. V Մովս. գ. 5.) նոյնը գրած է:
Բայց Յիսուսը շարունակում է, ինչպէս որ ես ձեզ սի-
րեցի, որովհետև նրան քաջ յայտնի էր, որ երկրիս վրայ
դեռ ևս ոչոք այդպէս չէ սիրել, որ ցօրս ոչ ոք իւր ոյժերն
այնպէս չէ զոհել յօգուտ իւր մերձաւորի (ամենին առանց բա-
ցառութեան) և ի փառս Աստուծոյ չէ գործ դրել. այդ հին
օրէնքն առաջին անգամն է, որ գործ է դրում, կատարում
է և ոչ թէ միայն կատարում, այլև կատարուելուց մի բան
էլ աւելի, որովհետև Յիսուս մարդոց ոչ թէ իւր հաւասար սի-
րեց, այլ՝ իրանից աւելի: Համախմբել:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Հաղորդութեան խորհրդի հաստատութիւնը:
(Մտթ. իգ.... Մրկ. ժգ. Ղուկ. իբ. I. թ. ա. կորնթ. Ժա.):
Բաղարջակերաց տօնի վերջում Յիսուս իւր աշակերտներին
հետ մի անգամ ևս ընթրիք ունեցաւ, բայց այդ ընթրիքը

սուրբ և խորհրդաւոր էր: (Յիշել այս տօնի նշանա-
կութիւնը (նիսանի տասն և չօրս — աղատութիւն եղիպտական
ծառայութիւնից): Բացի բաղարջակերաց տօնի ընթրիքից ուրիշ
սուրբ, խորհրդաւոր ընթրիք չկայ: Բայց ամենից առաջ ես ձեզ
կպատմեմ, թէ հին ժամանակն ինչ սովորութիւն կար իսրայէ-
լացիների մէջ՝ տօն եղած օրերի ընթրեաց ժամանակ: Ընթրի-
քից յետոյ տան մեծը հացը կտրում և տալիս էր տան միւս
անդամներին այս խօսքերով. «Փառք քեզ Աստուած, աշխար-
հիս թագաւոր, որ դու երկրից մեզ համար հաց ես բացնում»: Յետոյ
բաժակն էր առնում և նոյն կարգով տալիս էր ամենին
ասելով. «Փառք քեզ Աստուած, աշխարհիս թագաւոր, որ դու
որթի պտուղ ես ստեղծել»: Փրկիչը՝ յարգելով եղած սովորու-
թիւնը՝ բաղարջակերաց տօնի ընթրիքը խորհրդաւոր
ընթրեաց վերածեց:

Պարզել: Ի՞նչ էր մտածում փրկիչը հացը կտրելիս և
զինին տալիս: Ի՞նչն ստիպեց նրան այս մտքին դալու: Երբ
նա հացը կտրում էր և աշակերտներին տալիս՝ մտածում էր
(նրա սիրտը լիքն էր դառն վշտերով իւր մահուան առթիւ —
տէս Յիսուսի օժումը Բեթանիայում) իւր անձի վրայ, որ թրշ-
նամիներն իրան պիտի ոչնչացնեն: Նա մտածում էր միւս կող-
մից, որ իւր անձը չեն կարող ոչնչացնել, այլ ինքը իւր յօժար
կամքով պիտի զոհէ ի սէր ամենի և մասնաւորապէս ի սէր իւր
աշակերտների, դրա համար ևս աշակերտները պէտք է լիշեն այս
սէրն ամեն անգամ հացը կտրելիս: Եւ երբ Յիսուս զինին առնում
է ձեռը և տալիս է աշակերտներին, մտածում է իւր արեան
վրայ, որ շուտով պիտի թափուի. բայց այդ արիւնը բռնի չպիտի
առնուի նրանից, այլ իւր կամքով պիտի տայ՝ իւր աշակերտների
համար, հետեւաբար և աշակերտները քանիցս որ խմեն այս բա-
ժակից, պէտք է լիշեն իրան և իւր սէրը: Ի՞նչ է նշանակում
«այս բաժակը նոր ուխտն է՝ իմ արիւնով»: Հին ուխտը, հին
կտակարանը, որ Աստուած Մովսիսի ձեռքով կռեց իսրայէլացի-
ների հետ, նուիրագործւում էր կենդանիների զոհի արիւնով և
այնպէս ընդունելի դառնում: Իսկ նոր ուխտը, որ Աստուած իմ
միջնորդութեամբ կռում է բոլոր մարդկութեան հետ, կա-
մենում եմ ես իմ սեպհական արիւնով նուիրագործել, որպէսզի
ընդունելի լինի: Այո, ես նոր ուխտ եմ կռում և իմ արիւնով

նուիրագործում. դա ձեր բոլորի համար երկնաւոր օրհնութիւն է, ուստի ինձ մնում է ասել, որ ես իմ արիւնք ձեզ համար եմ թափում: Այս օրհնութիւնը, որ Յիսուս իւր կամաւոր մահուամբ է տալիս աշակերտներին, մեղաց թողութեան համար է: Քայց մենք մի ուրիշ աղբիւր էլ գիտենք, որով մեղքերին թողութիւն կարելի է տալ: — Ապաշխարութիւն և հաւատ մարդոց կողմից, շնորհ և ողորմածութիւն Աստուծու կողմից (անառակ որդու առակը): Արդեօք Յիսուս իւր աշակերտների համար մի նոր թողութեան աղբիւր էլ է բաց անում: Ով գիտէ և հաւատում է, որ Յիսուս սիրուց զրգած մեռաւ, այնպիսին փրկչին նորից կսիրէ. ով սուրբ, աղնիւ ասած բանը սիրում է, նա կառէ իւր սեպհական մեղքերը և կցաւէ (զղջումն) զբանց վրայ. այդպիսի անձնաւորութիւնը կհաւատայ նաև փրկչին և նրա խաղաղարար աւետարանին, որ աւետում է մեզ, թէ ինչպէս գթած և ողորմած է Աստուած: Եւ այսպիսի հաւատ ունենալով դէպի Յիսուս Քրիստոս մեր մեղաց թողութիւն կըստանանք և կազատուինք մեղաց իշխանութիւնից: Այս միւսնոյն աղբիւրն է, որ մենք անառակ որդու առակի մէջ տեսանք, զանազանութիւնն այն է, որ Յիսուս իւր մահուամբ ամեն մի քրիստոնէի համար հեշտացրեց այս աղբիւրը գնալու ճանապարհը:

Կենդանի Յիսուսը ցանկանում է այստեղ մի բան, որ դեռ ևս իւր մահուանից լետոյ պէտք է գործադրուի: — Աշակերտները հացը կտրելիս պէտք է մտածեն նրա մահուան և սիրոյ վրայ — սէր, որ նրան դէպի մահը տարաւ: Ուրեմն ամեն օր, երբ հաց ուտենք կամ գինի խմենք, պէտք է մտածենք այդ բանի վրայ: — Ո՛չ, այն կտոր հացը, որ պիտի ուտենք և այն կաթիլ գինին, որ պիտի ընդունենք, սովորական հացն և գինին չեն, այլ գոյափոխուած սրբազան խորհրդով, ուրեմն հացի և գինու տեսակաւ ընդունում ենք Յիսուսի իսկական միս և արիւնը, որը մենք սուրբ սրտով ենք ընդունում և մտածում Յիսուսի սուրբ մահուան վրայ: Սրանով հաղորդակից ենք լինում կենդանի փրկչին: Արդեօք այս լիշատակը, այս սուրբ խորհուրդն աշակերտները պէտքէ շարունակեն, թէ՛ մի քանի անգամ միայն պիտի կրկնեն: — Միշտ, քանի որ կենդանի են: Իսկ մահուանից լետոյ: — Իրանց լաջորդները, որովհետև այս լիշատակը

Յիսուս ոչ թէ միայն տասն և մէկ առաքեալներին աւանդեց, այլ բոլոր քրիստոնեաներին, որոնք լիշում են նրան և մտածում նրա մահուան ու սիրոյ վրայ:

Հաղորդութեան սուրբ խորհուրդն այժմ էլ կատարւում է: Աշակերտներին պէտքէ պատմել տալ, ինչ որ գիտեն հաղորդուել թեան խորհրդի մասին և որոշել նրանց ձեռով նախկին և ներկայ ձեռ (զորօրինակ առաջին անգամ զիշերը կատարուեց, իսկ այժմ ցերեկն ենք կատարում բացի ծննդեան և դատկի ճրագալոյց երեկոններից: Հնումը պատեքի տօնից առաջ կատարուեց, իսկ այժմ առանց այդ տօնի ևս կատարւում է. այժմ քրիստոնեաները չեն նստում սեղանի շուրջը, այլ՝ կանգնում են տիրոջ սեղանի առաջ. քահանան հաղորդին մասնակից է անում ցանկացողներին և ոչ բոլորին, ինչպէս առաջ): Քահանան նախապէս ասել է այն խօսքերը, որոնք Յիսուս աւանդեց մեզ, որն աներևութաբար բաղմած է սեղանի վրայ և որի պատկերը զրած է նոյն սեղանի վրայ: Աներևութաբար նա այն քրիստոնեաների սրտի մէջն է, որոնք բարեպաշտութեամբ մտածում են նրա սիրոյ և մահուան վրայ:

Համախմբել հաղորդութեան խորհրդի կրօնական — բարոյական նշանակութիւնը:

III.

Նախկին երեք հատուածների քննութիւնից նկատելի է, որ Յիսուս, երբ վերջին անգամ իւր աշակերտների շրջանումն էր, մի ակնարկ է անում, ինչպէս իւր ամբողջ անցեալի, նոյնպէս և դալոց փորձութիւնների մասին. նմանապէս թէ ինչ կեանք պիտի վարեն իւր աշակերտները և թէ ինքը ինչպէս յաւիտեանս իւր աշակերտներից անբաժան պիտի լինի:

Յիսուս իւր ամբողջ կեանքի ընթացքում գործով ցոյց տուաւ, որ նա ընդհանրապէս ուրիշների և մասնաւորապէս կարօտների վրայ է մտածում և նրանց համար գործում (ապացոյց): Նրա աշակերտները ևս նոյնպիսի կեանք պիտի վարեն: Յիսուս իւր աշակերտներին ուրիշ սիրով սիրեց՝ ընտրելով նրանց իւր ընկերներ և երկնից թագաւորութիւնը իւր սրտիցը նրանց սիրտը փոխադրեց, ուստի և ապագայում աշակերտները նոյն սէրն ըստ մտաց Յիսուսի պիտի գործ դնեն: Յիսուսի սէրն այնքան մեծ է դէպի իւր աշակերտները, որ նրանց համար իւր

անձը մահու տուաւ — սա ամենամեծ, ամենափառաւոր և ամենազգայուն ապացոյցն է նրա մեծ սիրոյ, ուստի և աշակերտներն այս մահը միշտ անմոռաց պիտի պահեն ի յիշատակ, որպէսզի սրանով միշտ վառ մնայ այդ սէրը թէ դէպի Յիսուս և թէ դէպի իրանց եղբայրները: Յիսուսի յիշատակն իւր աշակերտներին մօտ, այն, այս սէրը պէտքէ լինի. այս սէրը կամենում է, որ նրանց սրտերի մէջ շարունակուի, երբ ինքն այլևս երկրիս վրայ չի լինի և որպէսզի այս յիշատակը կենդանի լինի նրանց մէջ, սահմանեց Հաղորդութեան խորհուրդը, որն ընդունակ է ևս աւելի վառ պահելու նրանց մէջ Յիսուսի անսահման սէրը:

Ինչ որ Յիսուս 11 աշակերտներին է ասել, միևնոյն է թէ մեզ է ասել, վասնզի մենք ևս նրա աշակերտներն ենք: Մենք նրա հարազատ աշակերտներն այն ժամանակ կլինինք, երբ մեր վարդապետի նման Հեղութեամբ, խոնարհութեամբ կծառայենք նրանց, որոնք կարօտ են մեզ. երբ մենք ևս այնպէս կսիրենք, ինչպէս նա մեզ սիրեց. երբ մենք երբէք նրա սէրը չենք մոռանայ — սէր, որ ստիպեց նրան ի սէր մեր մահ ընդունել՝ ազատելու մեզ մեզաց կապանքներից: Դրա համար ևս յաճախ պէտքէ յիշատակենք մեր սէրը՝ ընդունելով նրա միս և արիւնը ընդ տեսակաւ հացի և գինւոյ և այսպէս դորացնենք փրկչական սէրը դէպի մեր նմանները, դէպի նոյն ինքը փրկիչ և դէպի նրա հայրը:

IV.

«Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, եւ տալ զանձն իւր ի փրկանս փոխանակ բազմաց»: Մտթ. ի. 28.:

Յարմար է նմանապէս և «պատուիրանն ուր տամ ձեզ, զի սիրիցէք զմիմեանս. որպէս սիրեցի ես զձեզ, զի եւ զուք սիրեսցիք զմիմեանս: Յայսմ գիտացցեն ամենեքեան, եթէ իմ աշակերտք էք, եթէ սիրիցէք զմիմեանս»: Յովհ. Ժգ. 34.35. Կրկնել — «Մենք սիրեսցուք զԱստուած, վասնզի նախ...»: «Զի եւ Քրիստոս մեռաւ եւ եթող մեզ օրինակ...»:

V

Դու ինչ կարող ես անել Յիսուսին նրա անհուն սիրոյ փոխարէն: Փրկիչը, որ շատ երիւն փրկել կամենում է, արդեօք քեզ ևս: Հաղորդութեան խորհուրդը որպէս սիրոյ և յի-

շատակի ընթրիք: Արդեօք առանց Հաղորդութեան խորհրդի չի կարելի Յիսուսի մահուան վրայ մտածել: Բարեպաշտ քրիստոնեան ինչ պիտի մտածէ պատարագի ժամանակ: Հաղորդութեան խորհուրդն ընդունողն արդեօք տեսանելի պարգևի հետ և անտեսանելին ընդունում է: Սուրբ Հաղորդութեան վերաբերութեամբ ինչպէս պէտք է հասկանալ այս խօսքերը. «Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»: Մտթ. Ժը. 20.):

Ոտնալուան մեկնեցէք: Ո՞վ է ամենամեծը քրիստոնէութեան մէջ (Մտթ. ի. 26. 27. «Որ կամիցի ի ձէնջ մեծ լինել, եղիցի ձեր պաշտօնեայ եւ որ կամիցի ի ձէնջ առաջին լինել, եղիցի ձեր ծառայ»): Ապացուցէք, որ Յիսուս այս մտքով ամենամեծն է: Աւագ Հինգշաբթի օրը կաթողիկոսը լուանում է տասն և երկու եպիսկոպոսի և վարդապետի ոտները, նմանապէս եպիսկոպոսը քահանաների և քահանան ժողովրդի ոտները — այդ ինչ նշանակութիւն ունի: Ի՞նչպէս կարող է տանտիկինն աղախինն, տէրը ծառային, ուսուցիչն աշակերտին, քահանան ժողովրդին.... ծառայել: Մի թագաւոր ասել է. «Թագաւորը տէրութեան առաջին ծառան է»: Ի՞նչ մտքով պիտի հասկանալ: Վաճառութիւն — «Լեր հաւատարիմ....»: «Զի եկն որդի մարդոյ....»: «Թէև մեր յանցանքը մեծ է....»: «Զգործսն զոր ես գործեմ....»: «Եկայք առիւն ամենայն....»: «Եկայք զկնի իմ....»:

§ 54

ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆՈՒՄ

Նպատակ: Յիսուսի հոգեկան վշտերը:

I.

Ինչո՞ւ պէտք է Յիսուս վշտեր ունենայ:—Յիշում է այն սոսկալի մահը, որ փոքր ժամանակից յետոյ մատնիչը պիտի պատճառէ: Թէև առողջ է մարմնով և կենդանի, բայց հոգին զգում է նախապէս այն վիշտը և մահուան երկիւղը, որ կրելու է և այդ հոգեկան վիշտը յաճախ աւելի մեծ է և զարհուրելի, քան թէ մարմնականը: Իրօք պէտք է կրէր նա խա-

չի վշտերը: Արդեօք չէր կարող հեռացնել իրանից: Արդեօք որ
ևէ ազատութեան միջոց չգիտէք:

Նա կարող էր հետևեալ օրը Երուսաղէմի ժողովրդի մեծա-
գոյն մասը իւր կողմը գրաւել. կարող էր ողբերկը նրանց և
ղէնքի հրաւիրել, իսկ ինքը որպէս Մեսսիա, ղեկավար լինել:
Նա կարող էր հռովմայեցիներին Անտօնիոսի աշտարակի մէջ
խեղդել և երկրի իշխանութիւնը կորզելով նրանցից՝ իւր ձեռն
առնել: Այդ բոլորը կարելի էր և հնարաւոր, բայց այդ չէր
նրա կոչումը: Մենք յաճախ լսել ենք նրա բերանից, որ հրէ-
ական իշխանութիւն չէ կամենում հիմնել, այլ երկնային
թագաւորութիւն. նա ոչ թէ կամենում էր ժողովրդին փրկել
հռովմի իշխանութիւնից, այլ՝ բոլոր մարդկութիւնն ազատ կա-
ցուցանել մեղաց կապանքներից:

Եւ կամ նա կարող էր այսպէս անել—[Թող յայտնէր իւր
թշնամիներին և բոլոր ժողովրդին, որ ես Մեսսիան չեմ. ես
այն չեմ, որին դուք սպասում էք. [Թող ասէր ես մի բարե-
պաշտ մարդ եմ և կամենում եմ ուրիշներին էլ բարեպաշտ
դարձնել, [Թողէք ինձ հանդիստ, որ բժշկեմ և քարոզեմ: Այս-
պէս չէր կարող խօսել Յիսուս, ըստ որում նա ճշմարիտ Մես-
սեան էր, որին Աստուած խոստացել էր ուղարկել. Յիսուս իւր
սուրբ և անբիծ սէրը դէպի իւր ժողովուրդը, իւր հայրը և իւր
փրկչական կոչումն ապացուցանելու համար յանձն էր առել այդ
մահը: Արտաքին, հանգամանքները չէին, որ նրան ստիպեցին
այդ ուղիով գնալու, այլ՝ նրա կամքը, մաքուր սիրտը և անկեղծ
սէրը դէպի իւր փրկչական կոչումն—նա իւր ազատ կամքով
դիմեց Գողգոթա մահ ընդունելու (Յովհ. Ժ. 18.):

II.

Աւանդել նոր նիւթը:

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ.

Յիսուսի մարգարէութիւնը (Մտթ. իգ. Մրկ-
Ժգ. Ղուկ. իբ. Յովհ. Ժգ.):

Աշխարհագրական—Ձիթենեաց լեռը գտնւում է
Երուսաղէմի և Բեթանիայի ճանապարհի վրայ: Այդտեղ մի
լեռնային պարտէզ կա՛ր Գեթսեմանի անունով, որ նշանակում
է ձիթենու հնձան, որովհետեւ լեռան այդ տարածութիւնը ձի-

թենու ծառերով էր ծածկուած և հաւանական է, որ այդ
պարտէզը Յիսուսի բարեկամներից մինին լինէր: Փրկիչը յաճախ
գիշերներն այդտեղ էր անցկացնում (Ղուկ. իա. 37):

Պարզել: Այս հատուածի մէջ խօսքը անցեալի և գա-
լոցի մասին է: Յիսուս մարգարէանում է, որ այս գիշեր բոլոր
աշակերտները պէտք է գալթակողուեն իրանից. այժմ նրանց հա-
ւատը փորձութեան պիտի ենթարկուի և յաջող հետևանք չպի-
տի ունենայ. նրանք պէտք է ուրանան և հեռանան իրանից,
որովհետեւ նա այլ Մեսսիա է՝ քան թէ նրանք կարծում են—
նա այս գիշեր իւր թշնամիների ձեռք պիտի մատնուի, սա-
կայն այս բոլորն աստուածային տնօրէնութիւն է, կանխապէս
նախասահմանուած է, թէ հովուին (Յիսուսին) կհարկանեն, իսկ
հօտը՝ ոչխարները՝ աշակերտները, կփախչեն կցրուեն:

Պետրոսն, ինչպէս միշտ, (տ. նրա խոստովանութիւնը)
հօր կամքով խոստանում է ամենի առաջ, որ ինքը բացառու-
թիւն կկազմէ, եթէ բոլորն էլ ուրանալու լինին: Փրկիչը, որին
ամենայն ինչ յայտնի է, պարզ նկատում է Պետրոսի ողբորու-
թիւնը և սխալ չափը, ուստի և ասում է, թէ հէնց այս գիշեր
երեք անգամ ուրանալու է իրան: Սակայն Պետրոսը պնդում է
մեռնել տիրոջ համար, եթէ այդ հարկաւոր լինի. սրա օրինա-
կից միւսներն էլ ողբորում են և նոյն խոստումն անում: Բո-
լորն էլ սխալ են չափում իրանց հաւատարմութիւնը և հաս-
տատ են կարծում իրանց տուած խոստման մէջ: Այժմ տես-
նենք, թէ ո՞ր աստիճան տէր են սրանք իրանց խոստման և
թէ ի՞նչ աստիճանի մեծ է փորձութիւնը: Համախմբել
գլխաւոր վճիռները:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ

Յիսուսի հոգեկան վշտերը (Մտթ. իգ. Մրկ-
Ժգ. Ղուկ. իբ.)

Արդեօք կարողացանք գուշակել Յիսուսի հոգեկան վշտերը:
—Այո, նա որպէս մարդ հոգում է և տրտմում, լիշելով մահ-
ուան դառն ըրպէները: Նա առաջուց է գուշակում այդ բոլորը
իւր հոգույ մէջ, ուստի և երկիւղ, ծունկ չոքել, աղօթել,
քրտնել. կարեք է զգում օգնութեան (հրեշտակը զօրացնում
է նրան):

Մթթէ ճիշտ է—Յիսուս և երկիւղ մահուանից—չէ՞ որ

ուսանք, որ մահուան ձեռից նա խլեց իրաւունքը.... (տ. § 28):

Արդեօք միայն մարմնական վիշտը և մահու երկիւղն է, որ Յիսուսի հոգին լցրել է վշտերով:—Նա ողբում է իւր ազգի որդւոց անգթութեան վրայ, որ նրանք իրանց բարերարին խաչ պիտի հանեն՝ փոխանակ երախտագէտ լինելու և լիշելու Աստուծու բարիքը. նա ցաւում է, որ այս ցաւեր պատճառողը իւր աշակերտներն է. նրա սրտին ցաւ է, որ իւր տառն և մէկ աշակերտները զեռ ևս չեն կարողացել հասկանալ, թէ նա ինչ Մեռսիա է ցանկանում լինել. նրանք երազում են զեռ ևս երկրային փառքեր ստանալու. նա դառնում է, ինչպէս ուրախութեան և տրտմութեան ըստէնքում, նոյնպէս և այժմ դէպի հայրն Աստուած և խնդրում է ամենից առաջ այս բաժակն անցկացնել, (ինչպէս) եթէ հնար է, այսինքն եթէ հայրը գիտէ մի ուրիշ ճանապարհ, որով նա կարող լինէր երկրիս վրայ մնալ իւր աշակերտների մօտ և ստանձնած փրկչական կոչումը շարունակել, սակայն այս ամենից յետ իսկոյն աւելացնում է—բայց ոչ թէ այնպէս՝ ինչպէս ես եմ ցանկանում, այլ ինչպէս քո կամքն է: Այդ ինչ է նշանակում:—Եթէ քեզ յայտնի չէ մի երկրորդ ճանապարհ, ինչպէս երբեմն Աբրահամի վերաբերութեամբ, այն ժամանակ ես իմ յօժար կամքով իմ կեանքը քեզ կղոհեմ. հեղութեամբ կյանձնեմ իմ անձը քո վճռին. քո անունը, քո փառքը թանկ է իմ կեանքից. ես կմեռնեմ քեզ համար:

Նա աղօթում է միշտ և միշտ սրտեռանդն կերպով և որքան յաճախ աղօթում էր, այնքան գալիս էր այն մտքին, որ ուրիշ հնար չկայ, պէտք է ըմպել բաժակը—թող քո կամքն էլ իմ կամքը դառնայ: Այն մեծ փրկչական գործը, որ ինձանով սկսեցիր, թող յաղթական կերպով ի կատար ածուի, այլ և մահու և զերեզմանի գնով—այո, Աստուծու խորհուրդը զարմանալու է ու նրա իմաստութիւնը գերազանց: Ի՞նչ եղան փորձութիւնը և, ներքին պատերազմը և վշտերը Յիսուսի մէջ:—Փորձութիւնն անցաւ, պատերազմը վերջացաւ, մահու երկիւղն անհետացել էր և աստուածայինը յաղթող հանգիստացել ընդդէմ մարդկայինի (Մտթ. Ժդ. 23): Սրանով վիշտը դադարեց. այժմ ուրախութիւն և խաղաղութիւն է տիրում Յիսուսի ներքինում. աստուածային խաղաղութեամբ նայում է նա խաչի բարձրութիւնից դէպի վայր, դէպի խաչը և դէպի զերեզմանը: Աղոր-

մելի, խղճուկ մարդիկն ինչ պիտի անէին նրան, երբ նա աստուածային ճանապարհով է գնում: Ի՞նչ պիտի խանգարէին տխմարները, երբ Աստուծու փրկութիւնը, չնայած խաչին և զերեզմանին, դարձեալ կամենում է ի կատար ածել («Թէպէտ եւ զնացից ես ի մէջ....»: «Եթէ Աստուած ի մեր կոյս է....»: «Եւ այս է յաղթութիւն, որ յաղթէ....»):

Բայց մրտեղից յառաջացաւ այդ մխիթարութիւնը:—Աստուած զօրացնում էր նրան: Իլի ումնից կարող էր մխիթարութիւն սպասել փրկիչը:—Իւր աշակերտներից, զոնէ որտով կարող էին մասնակից լինել այդ մեծ վշտին, որ անշուշտ կը մեղմէր նրա ցաւի աստիճանը, վասնզի բաժանած ցաւը կէս ցաւ է: Սակայն աշակերտները անկարող եղան՝ անգամ իրանց քնին յաղթելու, թէև փրկիչը քանիցս անգամ բարեկամաբար խնդրեց նրանց օգնութիւնը: Այսպէս շուտով մոռացան իրանց խոստումը—կեանք էին խոստացել զոհելու, բայց մի ժամ անգամ չկարողացան արթուն մնալ. այն աստիճան անհոգ և ապերախ դառնուեցան, որ զոնէ խօսքով չմխիթարեցին իրանց վշտացած վարդապետին: Թէ և ցանկանում էին օգնել նրան, բայց նրանց մարմինը տկար էր. չունեցան այն զօրեղ կամքը, որ համոզուած գործի համար կարեւոր միջոցներն էլ գործ դրնէին: Հէնց սրա համար էլ փրկիչը թոյլ է տալիս նրանց քնել մանուկների նման և ինքը նորից պաղատում է Աստուծուն և միայնակ մղում է իւր պատերազմը մինչև յաղթութիւն:

Հ ա մ ա ի մ բ ե լ — բարոյական — կրօնական գլխաւոր դադաւարները:

ԵՐՐՈՐԴ ԷԱՏՈՒԱԾ

Յիսուսի մատնութիւնը (Մտթ. իդ. Մրկ Ժդ. Ղուկ. իբ. Յովհ. Ժր.):

Պ ա Ր Գ Ե Լ:—Վ ա Ր Գ Օ Վ լիշեցէք այն բաղմամբիւ իրողութիւնները, որոնք կարճ ժամանակուայ մէջ տեղի ունեցան:—Զինուորների խումբը մօտենում է Գեթսեմանի դրանը՝ մատնել առաջնորդութեամբ: Յիսուս դուրս է գալիս նրանց առաջ. յանդիմանում է ամենից առաջ Յուդային, որ համբուրում է իրան և խիստ յանդիմանութիւն ստանում: Ապա մօտենում է զինուորներին և սարսափեցնում է նրանց իւր պատասխանով և պատուիրում է ձեռ չտալ աշակերտներին: Զինուորները ձեռն

են միտում Յիսուսին. Պետրոսը հարուածում է սրով. Յիսուս արգելում է նրան. ծառայի ականջը բժշկում է. խօսում է զօրականների հետ, որոնք կալանաւորում են իրան և տանում. աշակերտները ցրւում են՝ փախչում, թողնելով իրանց վարդապետին.... և այլն այսպէս նկարագրել ամբողջ տխուր պատկերը:

Այս բոլոր գործերից և խօսակցութիւններից կարելի է մի եզրակացութիւն անել գործող անձանց վարմունքի և մտածողութեան մասին: Բարձրագոյն ատենի զօրականները որոնում են զոհերին ջահերով՝ որպէս թէ Յիսուս թաք է կացել. ձեացնում են իրանց, որ պատերազմելու են եկել, ուստի և սրելով, բայց ոչ մինն էլ հարկաւոր չէ, վասնզի փրկիչն աստուածային անվեհերութեամբ յանձնում է իւր անձը թշնամուն: Նրանք չաջ յայտնի է, որ իրան այն միայն կարող են անել, ինչ որ իւր հօր կամքն է:

Յուդան, որին յայտնի է, Յիսուսի զիշերելու օթեանը, ոգևորուած ամենից առաջ է գնում՝ իւր նախագիծն ի կատար ածելու, մոռացած այն սէրը, որ վայելել էր մեծ վարդապետից: Նրա սիրտը մնում է անզգայ, ոչ մի ներքին յորդոր չէ ստիպում նրան սթափելու և սառը կերպով սպասում է մօտեցող սպասաւորներին:

Յիսուս ալրական քաջութեամբ յառաջ է գնում, հարցնում է, թէ ի՞նչ են կամենում և պատասխանում է նրանց հանգիստ և անմեղին յատուկ անդորրութեամբ, թէ ես եմ այն, որին փնտռում էք: Կոպիտ զինուորներին դեռ չէր պատահել, որ յանցաւորը յօժարակամ անձնատուր լինէր և երբ նրանք ջահերի լուսաւորութեան ներքոյ տեսնում են նրա անվրդով կերպարանքը և լսում այդ հաստատ խօսքերը, զարհուրում են՝ սա մարգարէ պիտի լինի, ուստի ետ ետ են գնում և երեսի վրայ ընկնում: Յիսուս իւր անձի վերաբերութեամբ ոչինչ երկիւղ չունի. նրա մտածողութեան առարկան լոկ իւր սիրելի աշակերտներն են: Յիսուս խնդրում է խնայել նրանց, իսկ ինքը կամովին յանձնում է իւր անձը՝ դետնից նոր վերկացող ծառաներին:

Յիսուսի անհուն սէրը վրդովում է Պետրոսին, երբ տեսնում է, որ զինուորները Յիսուսին ձեռ են տալիս. լցւում է արդար բարկութեամբ և վիրաւորում է ծառաներից մինին:

Յիսուս արգելում է. նա օգտաւէտ չէ համարում պատերազմելը (Յիսուս եթէ կամենար, կարող էր օգնել իրան, ինչպէս տեսանք Նադարէթում), որովհետեւ նա վճռել էր բաժակը խմել, որ իւր հայրն էր տուել: Բայց երբ վիրաւորուածին բժշկում է, ցոյց է տալիս իշխանութեան անտեղի վարմունքը, որովհետեւ խաղաղ մարդկանցն աւազակների հետ է հաւասարեցնում: Իշխանութիւնը ինքն ևս զգում է իւր ապօրինի վարմունքը, որ օրը ցերեկով, լուսով, երբ նա քարողում էր տաճարում, չվստահացաւ կալանաւորել: Իսկ անժամ.... — Անարգարները միշտ զիշերուալ մթութեան քողով են ծածկում իրանց ստոր վարմունքները: Երբ Յիսուս անարգար իշխանութեան երեսին ճշմարտութիւնն ասաց, այնուհետեւ գնաց ծառաների հետ, իսկ նրա աշակերտները, երբ տեսան Յիսուսին անզէն և կապկապուած, թերահաւատեցան, ինչպէս փրկիչն ինքը գուշակել էր և երկնչում էին՝ կարծելով որ իրանք ևս նոյն վիճակը կրնգունեն, ուստի թողնում են Յիսուսին և փախչում: Արգարեւ նրանք սկզբում սխալ չափեցին իրանց քաջութիւնն ու հաւատարմութիւնը: Երբ հասաւ ժամը, որ նրանք պէտք է գործով ցոյց տային իրանց խոստումը, որով պարծենում էին, թողին և հեռացան:

Համառօտակի համախմբել գործող անձանց մասին եղած վճիռները:

III ա.

Այս երեք հատուածի մէջ զանազան տեսակ փորձութիւններ երեւան եկան և զանազան ձևով էլ հեռացուեցան: Յիսուս ամենից առաջ իւր աշակերտներին, այսպէս ասած, երեւակայեալ փորձութեան մատնեց — «Դուք ամենքդ այս զիշեր կրայթակողուէք ինձանից»: Այս խօսքի փորձութիւնից աշակերտները յաջող դուրս եկան (չիշել իրանց խօսքերը): Բայց երբ ըստ հասաւ, որ նրանք գործով պիտի ցոյց տային իրանց սէրը. մի ժամ միայն արթուն պիտի լինէին իրանց վարդապետի հետ և աղօթէին, նրանց սէրն այնքան փոքր երեւաց, որ կարճ ժամանակով անգամ չկարողացան անհանգստութիւն պատճառել իրանց մարմնին — նրանք փոքրիկ փորձութեան մէջ ընկան և անյաջող դուրս եկան: Այն նախաբանը, որին հաւատարիմ կամենում էին մնալ, մոռացան և չարը յաղթեց իրանց որոշած բարի որոշման: Բայց երբ փորձութիւնը իրական

կերպարանքով է յառաջ դալիս և աւելի զօրեղ (աշակերտներն այս անգամ արթուն են և հոգւով արի) — երբ իրանց վարդապետը՝ Մեսսիան, բոլորովին հակառակ իրանց սպասածին անձնատուր է լինում թշնամեաց և զրանով իրանց ազատութիւնը վտանգի է ենթարկում, իրականապէս նոր է նկատուում, թէ ինչ աստիճանի հաւատարիմ է եղել նրանց գոված սէրը. այստեղ նկատուում է, թէ անձակա՞ն բարեկեցութիւնը (մարմին) բարի կամքին ինչպէս շուտ թլացնում է և յաղթում — այն, նրանք փորձութեան են մատնուում և փորձութիւնից յաջող չեն գուրս գալիս, այլ ընկնում են: Նոյն իսկ Պետրոսը բացառութիւն չէ կազմում, և եթէ նա՝ Համաձայն իւր կրակոտ բնաւորութեան, սուր է առնում ձեռք Յիսուսի պաշտպանութեան համար, դա իսկապէս առած, րոպէական տպաւորութիւն է և ոչ թէ սիրոյ և հաւատարմութեան հուրն է — Պետրոսին պակասում է հաստատակամութիւնը, որովհետեւ սա ևս միւսների հետ փախչում է՝ փոխանակ առանց երկիւղի փրկչի մօտ մնալու: Այսպէս սա ևս ընկնում է փորձութեան մէջ և մոռանում է իւր խոստումները:

Մենք ևս յաճախ առաքեալների նման ենք վարվում և կարծում ենք, թէ կարող ենք դիմադրել փորձութեան (օրինակ): Մենք ևս, փորձութիւնից առաջ, խիստ հաստատ ենք մեր խօսքին, բայց հէնց որ փորձութեան դէմքն անգամ նկատում ենք, որքան էլ նա փոքր լինի, մոռանում ենք մեր ընտրած բարի նախաբանը և թոյլ ենք տալիս չարին յաղթող հանդիսանալու մեր՝ խօսքով սիրած բարի և արդար բաների դէմ, ասել է թէ մենք ևս ընկնում ենք փորձութեան մէջ: Խօսքով մեր կեանքն անգամ զոհում ենք մեր բարեկամների, մերձաւորների... Համար, իսկ երբ հասնում է ժամը՝ նոյնը զործով ցոյց տալու, մոռանում ենք մեր խօսքը, նոյն իսկ ամենափոքր ձեռով էլ չենք կամենում անհանգստութիւն պատճառել մեր մարմնին՝ յօգուտ մեր մերձաւորի...: (Օրինակներ աշակերտական կեանքից, նոյնպէս և հետեւեալ անձինքը, որոնք չկարողացան իրանց որոշած բարի նախաբանները պաշտպանել զործով, ինչպիսիք էին Յակովբ, Սաւուղ, Դաւիթ, Սողոմոն, Իսրայէլի ժողովուրդը...):

Ո՞րտեղից է յառաջանում այս տխուր երևույթը բոլոր

մարդոց, այլ և մեր մէջ: — Մեր ոգին արդարև բարի կամքեր (նախաբան) ունի՝ արդարը, իրաւացին զործելու և պէտք է ասած՝ դրան հարկաւոր ոյժն ու զօրութիւնն էլ չէ պակասում, բայց մարմնին հաճոյք պատճառող հանգամանքներն, ինչպէսիք են — հանգստութիւն, յարմարութիւն, վայելք, ապահովութիւն... աւելի զօրեղ են, քան թէ բարի կամքերը և դրա համար ևս այդ բարեկեցութեան հանգամանքները բարոյական թուլութեան են մատնում մեզ և մեր կամքի հակառակ զործել տալիս:

Արդեօք ոչ մի միջոց չկայ մեր կամքը զօրացնելու, որ կարողանայ փորձութեան դիմաւալ: — Այդ միջոցը Յիսուսն ինքը մեզ ցոյց է տալիս՝ ասելով, «սկեցէք եւ աղօթս արարէք...»: Այսինքն՝ հ ս կ ե ց է ք ձեր սիրտը, ձեր մտքերը և մանաւանդ ձեր բարի նախաբանները (տ. լիմար կոյսերը), իսկ երբ փորձութիւնը գայ, աղօթեցէք, այսինքն մտածեցէք Աստուծու և նրա սուրբ կամքի վրայ, մտածեցէք նրա մասին, ինչ որ խոստացել էք, այն ժամանակ նա էլ ձեզ կգորացնէ, որպէսզի ձեր հոգին և ոչ թէ մարմինը յաղթող հանդիսանայ:

Յիսուսի փորձութիւնից առաջ ևս շատ փորձութիւններ են եղել, որոնք նոյնպէս յաջող հետեւանք են ունեցել, զորօրինակ Աբրահամ, Յովսէփ, Դաւիթ, քանանացի կիներ... բայց ոչ մէկն այնպէս մէծ չէ եղել, ինչպէս փրկչինը (ապացոյց) և այդ չեալ անձինք բոլորն էլ աղօթում էին և շարունակ հսկում իրանց ներքինը՝ բայց հէնց որ թուլացել են և անհոգ դտանուել իրանց սրտի վերաբերութեամբ (տ. Դաւիթ, Սաւուղ, Սողոմոն), իսկոյն փորձութեան մէջ են ընկել: Եթէ Յիսուս Քրիստոս փորձութեան մէջ կաշիք ունեցաւ աղօթելու և հսկելու, որքան առաւել ևս մենք՝ տկարամիտներ: Եթէ մենք նրա ոգին մեր մէջ ընդունենք, մենք ևս կարող ենք յաղթել մարմնին (Մտթ. իղ. 41. տ. հ—ո. § 56):

III. բ.

Յիսուս կամենում էր, որ այն սարսափելի րոպէն վերանար. այն բաժակն անցնէր. նա չէր ցանկանում ստիպել հօրը, որ փոխէ իւր վճիռը, վասնզի իսկոյն կցում է. «Բայց ոչ որպէս ես կամիմ»: Սակայն աղօթելիս պարզ երևում է, որ նրա մահը Աստուծու կամքն է, դրա համար ևս իւր կամքն իսկոյն թողնում է և կամենում է միայն այն, ինչ որ հօր կամքն է և

ահա այդ որոշումն է, որ նրան ոչ ոք և զօրութիւն է տալիս և այնուհետեւ մահը, սարսափելին այլեւս սարսափելի չէ համարուում, այլ երևում է որպէս արդարացի ճանապարհ երկնաւոր հօր, որն այս անգամ իւր անխորհելի, անքննելի սիրոյ վճիռը արտայայտում է մի փոքր այլ ձևով, որին մարդիկ ցաւ և վիշտ են անուանում: Այս որոշումը սիրուց է բղխում, վասնզի սրա գործողը սիրոյ և իմաստութեան Աստուածն է և ինչ որ նա անում է, միշտ բարի է:

Այսպէս և մենք քրիստոնեաներս պիտի վարուենք, եթէ կամենում ենք ճշմարիտ քրիստոնեայ լինել: Եթէ մեզ կամ մեր մերձաւորներին մի վտանգ պատահի, մեր մտքովն անգամ չպիտի անցնի՝ աղօթքով ստիպելու Աստուծուն, որ նա այլապէս տնօրինէ և մեր ցանկութեանը բաւականութիւն տալ, այլ մենք ևս Քրիստոսի նման մեր վիշտը և նեղութիւնը ջերմեռանդ կերպով պիտի ներկայացնենք և նրա նման ասենք. «Քայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»: Այնուհետեւ թող նրա կամքը լինի: Այնուհետեւ մենք կմխիթարուինք. աստուածային զօրութիւնն ու ուրախութիւնը աշխարհիս մէջ սարսափի կերպարանքով չի ներկայանայ մեզ—չէ՞ որ այս բոլորը վերելից՝ Աստուածանից է գալիս, որ մեր բարքն միայն ցանկանում և կամենում է՝ նոյն իսկ այն բոլորին, երբ մեզ ցաւ է պատճառում:

Ուստի և մենք պիտի մտածենք, թէ մեզ կարող է միայն այն պատահել, ինչ որ Աստուծու կամքն է և ինչոր յօգուտ մեր է: («Եթէ որոց սերենն զԱստուած, յամենայնի գործակից լինի ի բարիս»: «Եւ այս է յաղթութիւն, զոր յաղթէ աշխարհի հաւատքն մեր»:) Այնուհետեւ թող ինչպէս ուզում է կատարուի: Արդեօք մեր աղօթքը մի փոփոխութիւն կլաւաջացնէ արտաքին իրողութեան մէջ թէ ոչ, այդ միւսնոյն է, վասնզի գլխաւոր ցանկութիւնը կամ նպատակն այն է, որ մենք Աստուծուն ճանաչենք—մեր անձը նրա բազմակների մէջն է, մենք սիրով պիտի բնդունենք, ինչ որ մեզ կտայ, վասնզի հաւատացած ենք, ինչոր նա անում է, յօգուտ մեր է: Թէ Աստուած կատարէ մեր խնդրուածքը և թէ այլ լինի նորա տնօրէնութիւնը, մենք պիտի գոհանանք նրանից և ասենք—քեզ աւելի լսւ է յայտնի, թէ որը յօգուտ մեր է. («Ձի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր....»):

IV

«Արթուն կացէք եւ աղօթս արարէք, զի մի անկանիցիք ի փորձութիւն: Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար (տ. հ—ո. § 56. Մտթ. իղ. 41»):

«Հայր իմ, եթէ հնար է՝ անցցէ բաժակս այս լինէն, բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»: Մտթ. իղ. 39:

V

Գուք ամենքդ էլ կրօնի դասերին այնպէս էք վարվում, ինչպէս Յիսուսի աշակերտները Գեթսեմանի պարտէզը հասնելուց առաջ: (—Գուք ամենամեծ փորձութիւնից անգամ խօսքով յաջող էք դուրս գալիս և մի կարգ գեղեցիկ նախաբաններ էք խոստանում, իսկ ձեր Գեթսեմանի մէջ—իրական կեանքի մէջ ձեր մարմինն էլ զօրեղ է հանդիսանում՝ քան թէ յօժար կամքը, ուստի ամենից շատ ձեզ է կարեւոր լիշել փրկչի խօսքը. «սկեցէք եւ աղօթս արարէք....»: Արդեօք այսօր ևս կան քրիստոնեաներ, որոնք այնպէս են վարւում, ինչպէս Յիսուսի աշակերտները Գեթսեմանի պարտիզում: Ի՞նչ կանէք այն մարդկանց, որոնք իրանց յանցանքը և թուլութիւնը Յիսուսի խօսքով կամենային արդարացնել—թէ «Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար»:

Յիսուսի հոգեկան վշտերից ինչ օգուտ կարող ենք քաղել մեզ համար:—Երկիւղ կրել վտանգի ժամանակ յանցանք չէ, եթէ մեր բարեպաշտ զգացմունքները և մեր բարի կամքը չէ յաղթում կամ ճնշւում: Յիսուսի աղօթքը Գեթսեմանում, ինչ նմանութիւն ունի հայր մերի հետ: Ի՞նչպէս կարող ենք մեր բոլոր աղօթքները Յիսուսի Գեթսեմանի աղօթքին նմանեցնել: Ի՞նչ է այն հրեշտակի անունը, որ մինչև այսօր էլ, ինչպէս երբեմն Գեթսեմանում, աղօթողների մօտ վայր է իջնում:—Ամեն մի ճշմարիտ քրիստոնեական աղօթք լսում և ընդունում է Աստուած:

Մ ե կ ն ե լ և վ ա Ր Ժ ե լ—«Մի ոք ի փորձութեան իցէ, ասիցէ թէ յԱստուծոյ փորձիմ. զի Աստուած անփորձ է չարեաց. փորձէ նա եւ ոչ զոք. իւրաքանչիւր ոք փորձի առ յիւրոցն ցանկութեանց ձգեալ եւ պատրեալ»: Թ. Յակ. ա. 13—15. «Փորձութիւն ի վերայ ձեր ոչ է եկեալ՝ բաց ի մարդկանէ. այլ հաւատարիմ է Աստուած, որ ոչ արկցէ զձեզ ի փորձութիւն առա-

ւել քան զկար ձեր. այլ արասցէ ընդ փորձութեան եւ զելսն, զի համբերել կարասցիք: I, Թ. ա. Կրնթ. Ժ. 13.: «Բայց զայս ասեմ....»: Թ. ա. Դադ. Ե. 16—24.: «Գիտեմ զի (մեղքն) ոչ բնակեալ է....»: Թ. ա. Հռմ. Է. 18—25. Ը. 13. Ժա 33.

Վ ա ռ Ժ Ե Լ—«Տէր ետ եւ տէր էառ....»: Եթէ Աստուած ի մեր կոյս է....»: Մերձ է տէր առ ամենեանս....»: Զի զոր սիրէ տէր....»: «Սէր յաւիտենական սիրեցի....»: «Աստուծու խորհուրդը զարմանալի է....»: «Զի զօրութիւն իմ ի տկարութեան....»: «Լեր հաւատարիմ....»: «Որ սերմանէ ի մարմին....»: «Կարգասցես առիս յառուր....»: «Եւ այս է յաղթութիւն....»: «Զի եւ Քրիստոս մեռաւ....»: ¹⁾

§ 55

ՅԻՍՈՒՍԸ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԱՏԵՆԻ ԱՌԱՋ

Ն ա ա տ ա կ: Յիսուս իւր դատաւորների առաջ:

I.

Ո՛վքեր են այդ դատաւորները: Ինչո՞ւ բռնել տուին Յիսուսին: Ինչո՞ւ հէնց տօնից առաջ: Ի՞նչ բանի համար պիտի դատեն նրան: Ի՞նչ յանցանք է գործել մեղադրեալը: Բարձրագոյն ատեանն ինչպէս պէտք է դատէ նրան: Նա հօ չի կարող ասել, թէ մենք կալանաւորեցինք եւ դատեցինք, որովհետեւ նա անպարտ էր: Ատենի անդամներն անշուշտ Յիսուսին մի բանի մէջ կմեղադրեն, որպէսզի ժողովրդի առաջ արդար դատաւորներ երեւան: Ի՞նչ յանցանք պիտի բարդեն նրա վրայ. ինչո՞ւ պիտի մեղադրեն: Յիսուսն ի՞նչ գիրք կրճնէ նրանց դէմ:

II.

Ա լ ա ն դ ե Լ նոր նիւթը—(Մտթ. իդ. տ. Մրկ. Ժդ. Ղուկ. իբ.):

Դ ա ս ա լ ո Ր Ե Լ նիւթը:

Հարց ու փորձ Աննա եւ Կայիափա քահանայապետների տանը. Յիսուսի մահուան դատավճիռը: Պ ա Ր Գ Ե Լ նիւթը:

1.

Գործողութիւնն սկսում է հինգշաբթի երեկոյից՝ լոյս ուր-

¹⁾ Ծանօթութիւն: Այստեղ կարելի է Յիսուսի փորձութիւնը թանձրացեալ ձևով աւանդել. (Մտթ. դ. 3—11):

բաթ: Այդ ի՞նչպէս էր, որ երկրի առաջնակարգ մարդիկը իրանց քունը կոտրում են եւ ամեն ինչ զիշերով են կամենում գործել. ինչո՞ւ չէին բանտարկում եւ առաւօտեան՝ հանգիստ քուն առնելուց յետոյ, դատում:—Քահանայապետի համար ամեն մի րոպէն թանկ էր. նա կամենում էր Յիսուսին դատապարտել հէնց զիշերով, քանի որ ժողովուրդը քնած է եւ առաւօտեան վաղ՝ Հռովմայեցի դատաւորին յանձնել, որ մահու պատիժ նշանակէ, այնուհետեւ մահուան դատապարտողին էլ ո՞վ կրնգունէր որպէս Մեսսիա: Յիսուսին էլ ոչ ոք չէր կարող հօգը Հռովմայեցիների ճիրաններից խլել եւ զրա համար էլ բարձրագոյն ատենի անդամներին զիշերով կանչեցին, որոնք, իհարկէ, սիրով եկան, վասնզի ամենքն էլ Յիսուսի մահն էին ցանկանում:

Ինչո՞ւ նախքան Յիսուսին դատապարտելը ներկայ քահանայապետի աներ Աննայի տանը հարց ու փորձ սկսուեց:—Սրա տունը գտնւում էր այն ճանապարհի վրայ, որտեղից Յիսուսին պիտի տանէին եւ որովհետեւ բարձրագոյն ատենի անդամները դեռեւս կարեւոր թուով չէին ժողովուած (վճիռն անվաւեր կը համարուէր, եթէ որոշ թիւ անդամների ներկայ չլինէր), ուստի եւ Աննայի տուն տարան, որ մասամբ ուշանայ, մասամբ էլ հարց ու փորձ անելով՝ թերեւս կարողանան մի որեւէ մեղադրական կէտ գտնել, որ առիթ ունենան դատապարտելու, ուստի եւ Աննան հարցնում է նրա աշակերտների մասին (այսինքն քանի հոգի հետևող ունի) եւ նրա վարդապետութեան էութեան մասին: Աննան իւր նպատակին չհասաւ, ոչինչ հետևանք չկարողացաւ դուրս բերել: Յիսուս՝ փոխանակ ընդարձակ կերպով պատմելու նրան ամեն ինչ, կարճ եւ պարզ կերպով վերջացրեց՝ ասելով. «Ես յայտնի կերպով քարոզել եմ աշխարհին, ես միշտ սովորեցրել եմ ժողովարանումը եւ տաճարումը, ուր բոլոր հրէաները ժողովում էին—ծածուկ ոչինչ չեմ խօսել: Ինչո՞ւ ես ինձ հարցնում, լսողներին հարցրու, թէ ինչ եմ քարոզել նրանց»: Այս խօսքերի մէջ մի տեսակ նուրբ նկատողութիւն էլ կայ—եթէ դու իմ վարդապետութեանը տեղեակ չես, ուրեմն եւ իրաւունք չունիս ինձ բռնել տալու. քեզ՝ որպէս երկրի գլխաւորի, ամօթ է, որ այդպիսի մի նշանաւոր իրողութեան վերաբերութեամբ անհոգ ես եղել. իսկ եթէ գիտես իմ վարդապետութիւնը, ուրեմն ինձ չպիտի իրաւունք համարէք բռնելու, վասնզի ոչ ոք երեք

տարի շարունակ չէր վստահանալ օրէնքի հակառակ քարոզելու:

Յիսուս ինչ պատասխան ստացաւ:—Քահանայապետը լռեց — ճրմարտութեան դէմ ոչինչ չունէր ասելու, բայց նրա ծառան, որին յայտնի էր իւր տիրոջ (Աննայի) բարկութիւնը դէպի Յիսուս և միւս կողմից ցանկանալով շողոքորթել, ապտակեց Յիսուսին, կարծես թէ ճշմարտութիւն խօսելը յանցանք լինէր: Յիսուս հանգիստ սրտով պատասխանեց նրան: «Մի դալ հակառակ չարին» ինչպէս է յարմարում այստեղ:

Հ ա մ ա խ մ բ ե լ համառօտակի կերպով էական կէտերը և նրանց բարոյական արժէքը:

2.

Բարձրագոյն ատենի առաջ եղած ամբաստանութիւնն ինչ հետեւանք ունեցաւ:—Յիսուս պէտք է մահուան դատապարտուէր և այդ դատապարտութիւնն աշխարհի առաջ իրաւացի, արդարացի պիտի ճանաչուէր: Այն դատաւորը, որը վճռել է իւր մէջ՝ նախ քան դատաստանն սկսելը, մեղադրեալին դատապարտելու (որն է արդար դատաւորի յատկութիւնը), այդպիսին, իհարկէ, դատաւոր չէ, այլ՝ մարդասպան: Երբ ոչինչ մեղադրելու կէտ չեն գտնում, սկսում են սուտ վկաների դիմել, որոց վկայութեան հիման վրայ մահու վճիռ են կամենում կայացնել և այսպէս իրանք իրանց դարձնում են կոյր և խուլ այն բոլորի առաջ, ինչ որ յօգուտ Յիսուսի է (նախաւճիւ):

Յիսուսի դատապարտութեան վճիռն ինչ նախագծով են գլուխ բերում:—Կաշառուած վկաները (տ. Նաբովթի պատմութեան մէջ կեղծ վկաները. ութերորդ պատուիրան) ոչինչ չեն գտնում, որով կարելի լինէր չնչին մեղադրանք անգամ բարդել Յիսուսի վրայ: Վերջապէս այդ երկու վկաները (երկուսն ըստ V. Մովս. Ժէ. 6) մատնեցին այն են փաթաթում, թէ Յիսուսն ասել է, որ ես քանդած տաճարը երեք օրում նորից կշինեմ (Յովհ. բ. 19.): Բայց ինչպէս պիտի հասկանալ այդ խօսքերը:—Հրէից կրօնը, որ գլխաւորապէս արտաքին արարողութիւն էր դարձել, (տաճարին ծառայել և ոչ թէ տաճարումն Աստուծուն ծառայել), ես կարող եմ լուծել և կարճ ժամանակուայ մէջ նոր կրօն սահմանել, որ առանց զոհի և ծիսակատարութեանց Աստուծուն «հոգւով և ճշմարտութեամբ» կարելի լինի պաշտել: Բարձրագոյն ատեանն ինչ մեղադրական

կէտ կարող էր կազմել դրանից: Իսկ եթէ բարձրագոյն ատեանը չհասկանար այդ:—Այն ժամանակ կարող էին ասել—Յիսուս արհամարհական ձևով խօսեց ժողովրդի սրբութիւնների վերաբերութեամբ: Իսկ եթէ իսկական մաքով հասկանար, կարող էր ասել, թէ Յիսուս կամենում էր մեր հայրենի կրօնն ուսովորութիւնները փոխել: Արդեօք այդ հիմունքը բաւական էր մեղադրելու համար: Եթէ ատեանը մեղադրէր Յիսուսին, թէ նա արհամարհում էր ժողովրդից յարգուած սրբութիւնները, Յիսուս կարող էր ասել, թէ ես խոստացայ շինել (քանդելն ուրիշին թողնելով), այն ժամանակ դատաւորներն այս բանը կծաղրէին և երազ կհամարէին: Իսկ եթէ ասէին, թէ նա մեր հայրենի կրօնը փոխում է, Յիսուս կարող էր համարձակ ձևով ասել—ես անում եմ այն, ինչ որ բոլոր մարդարէներն են արել (տ. Նսայի). ես կամենում եմ հայրենի կրօնը մաքրել մարդկային նորամուծութիւններից (յեղափոխել) և նրան այն կերպարանքը տալ, ինչ որ Մովսէսն էր կամենում և այս բանը ոչ թէ յանցանք է, այլ ծառայութիւն:

Այդ միւսնոյն քահանայապետն էլ զգաց, որովհետեւ տուած վկայութիւնը հիմք չհամարեց մեղադրելու Յիսուսին, այլ՝ իւր կարծիքով, ստիպեց փրկչին պաշտպանողական միջոցների դիմելու, որպէսզի այդ խօսակցութեան միջոցին մի կասկածաւոր կէտ կարողանայ գտնել: Այդ միջոցը ևս չօգնեց, վասնզի Յիսուս լռեց: Այո, նա լռեց, որովհետեւ գիտէր, ինչ էլ որ ասելու լինէր, աւելորդ էր. նա գիտէր որ կանգնած է ոչ թէ դատաւորների, այլ մարդասպանների առաջ (լռելն էլ մի պատասխան է, բայց այս անգամ ինչպիսի):

Քահանայապետին մի բան էր մնում միայն, նա ստիպուած էր հարցնել Յիսուսին, թէ ուղիղ է որ նա խոստացեալ Մեսսիան է (Քրիստոս=օծեալ), ուրեմն և որդի Աստուծոյ: Կենդանի Աստուծու անունը հրապարակաւ, ի տես ամենի երդուելով, կամենում էր ներկայ եղողների ուշադրութիւնը զրաւել և ասել, որ իւր հարցին պատասխան տալը հայհուցութեան հաւասար է: Բայց ինչու հիմա լռեց Յիսուս և ոչ առաջ:—Ներկայ լռութիւնը նշանակում էր—կամ ես չեմ Մեսսիան, կամ ճիշտ չգրտեմ, կամ երկիւղ եմ կրում ասելու: Սակայն Յիսուս ճշմարիտ Մեսսիայ էր և ոչ ոքից երկիւղ չէր կրում, ուստի և

նա ասաց. «Դու ասացիր», այսինքն ես եմ այդ Մեսսիան, ճշմարիտ Աստուծու որդին:

Բայց ինչու իսկույն շարունակեց. «սակայն ասում եմ ձեզ, որ հիմիկուանից կտեսնէք մարդու որդուն...», այդ ինչ է նշանակում: Արդեօք փարիսեցիները կամ այն ժամանակուայ քրիստոնեաները և կամ մենք տեսել ենք Յիսուսին հայր Աստուծու աջ կողմում նստած երկնքի ամպերի վրայ դնալիս: — Այս բանը փոխաբերական մտքով պիտի հասկանալ— Յիսուս երկնքիցն է եկել՝ երկրորդ անգամ ևս կգայ միլլիոնաւոր մարդոց՝ այսինքն քրիստոսնէից մօտ (սիրտը): Սրանից աշխարհը կարող է տեսնել, որ նա ճշմարիտ Մեսսիա է, որ նա հայր Աստուծու սիրելին է և որդին: Յիսուս այսպէս է հասկանում— եթէ դուք ինձ արհամարհէք և իմ անձը ոչնչացնէք, իմ սկսած գործը և իմ մեսսիական կոչումն անկարող էք անհետ առնել. ամենակարող Աստուածն ինձ կհաստատէ որպէս Մոսսիա. նա կտայ այն դօրութիւնը, որով կտիրապետեմ բոլոր ազգերի սրտերը— ահա այս է իմ անտեսանելի գալուստը երկրիս վրայ: Վերջին օրերում ես կգամ և տեսանելի կերպով՝ պատած երկնային փառքով՝ գատելու բոլոր ազգերին, այլ և ձեզ, ով իմ դատաւորներ:

Այո, սա մի կարեւոր խօսք է: Մեզ համար: — Այո, սա մի դաւանութիւն է, որ մենք լսում ենք Յիսուսի սուրբ բերանից, թէ նա որդի Աստուծոյ է: Իսկ դատաւորների համար: — Այն մեղադրանաց կէտը, որ նրանք որոնում էին, ահա Յիսուս ինքը յայտնեց (թէ ես Աստուծու որդի եմ): Բայց չէ՞ որ Յիսուս ճշմարիտ Մեսսիա է, ինչպէս կարող էին նրա այս ճշմարիտ խոստովանութիւնը յանցանք համարել: Նրանք վաղուց որոշել էին իրանց մէջ, որ Յիսուս Մեսսիա չէ և դրա համար էլ ոչ նրա խօսքերին էին հաւատում, ոչ դործած հրաշքներին և ոչ նրա վարած սուրբ կեանքին, այլ մտածում էին, որ նա Մեսսիա չէ և չպիտի վստահանայ էլ ինեւ (ապա թէ ոչ մենք կգրկուենք մեր փառք և պատուից)— նա ինքն է ասում, թէ Մեսսիա եմ, սուտ է:

3.

Ի՞նչ վերջաւորութիւն է ստանում գործողութիւնը: Քա՛հա— նայապետը Յիսուսի խօսքերի մէջ հայհոյանք է նկատում Աստուծու գէմ և այս կէտը բաւական է համարում մահու վճիռ

կարդալու: Նա պատառում է իւր հանդերձը՝ ցոյց տալու իւր վիշտը և բարկութեան չափը, որ այդպիսի աններելի յանցանք է գործում բազմութեան առաջ (կեղծաւոր— Աստուծու փառքը նրա համար ոչինչ է, իսկ իւր սեփական փառքը շատ մեծ է, ուստի և իւր սրտում ուրախանում է, որ վերջապէս գտաւ մի ելք, որով այս վտանգաւոր մարդարէին յանուն արդարութեան և օրինաց՝ ասպարիզից պիտի հեռացնեն): Յետոյ հարցնում է ատենի անդամներին, թէ արդեօք նրանք ևս միւսնոյն կարծիքի են: Ինչ ասել կուզէ, որ ամենքն էլ նոյն վճռին համաձայնում են:

Ի՞նչ էր մտածում փրկիչն այս վճիռը կայացնելիս: — Կեղծաւորներ, ես ձեզանից վաղ զիտէի, թէ ուր պիտի հանգի ձեր խաղը, ես ձեզնից շատ վաղ եմ վճռել դիմելու դէպի մահ՝ ի փառս իմ Աստուծու, իմ գործնէութեան, իմ աշակերտների և բոլոր մարդկութեան: Այն անձը, որի սիրտն ու հոգին այսպիսի մարդասիրական մտածմունքներով էր զբաղուած՝ յօգուտ մարդկութեան, արժանանում է անգութ թրշնամիների կողմից զգուելի վարմունքի:

Ի՞նչպէս համբերեց Յիսուս այս անգթութիւններին: Այդ մասին մեզ ոչինչ չեն պատմում աւետարանիչները, բայց լռութիւնն էլ մի պատասխան է— նա տարաւ այդ բոլոր անգթութիւններն ամենայն համբերութեամբ և հեզութեամբ համաձայն իւր քարոզածի, թէ «երանի հեզոց» և նրա մխիթարութիւնն էր, «զի նոքա ժառանգեսցեն զերկիր»: Համառօտակի համալսմբել գործողութեան ընթացքը և որոշել գործող անձանց մտածողութիւնները: (Վկայ, դատաւոր, զինուորականներ:)

III.

Ամբաստանեալը, դատաւորները և մենք քրիստոնեայքս ինչպէս ենք վարվում այն ճշմարտութեան հետ, թէ Յիսուսը կենդանի Աստուծու որդին է:

Յիսուս հարիւրաւոր անգամ ապացուցել է (§ 29), որ նա Աստուծու որդին է, այստեղ նոյնը կրկնում է իւր սեփական խօսքերով, թէ և նա զիտէ որ այս խոստովանութիւնը մահու չափ թանկ պիտի նստէ իրան: Յիսուսի թշնամիները թէ և զիտեն բոլոր գործերը և քարոզութիւնները, թէ և իրանց

ականջով՝ նրա բերանից՝ նրա Աստուծու որդի լինելը լսել են, բայց չեն կամենում հաւատալ, վասնզի սիրում են իրանց անձը, իրանց փառքն ու զօրութիւնը աւելի քան թէ Աստուծուն և ճշմարտութիւնը: Մեր ժամանակներում ևս շատ մարդիկ կան, որոնք ոչնչով չեն զանազանում դժանցից (տ. § 40.): Իսկ մենք խոստովանում և ընդունում ենք այն բոլորը՝ սկսած Պետրոսի խոստովանութիւնից մինչև փրկչի իրա բերանով յայտնածը, թէ նա Աստուծու որդի է: Եթէ մենք չհաւատանք Յիսուսի որդի Աստուծոյ լինելուն, այն ժամանակ մեր բոլոր քրիստոնէական հաւատը կեղծ կլինի, այն ժամանակ չկայ մեզ համար ոչ ճշմարտութիւն, ոչ շնորհ, ոչ փրկութիւն, ոչ յաւիտենական կեանք և ոչ երանութիւն: Մեր քրիստոնէութիւնը հիմնուած է այն հաւատի վրայ, որ Յիսուս Աստուծու որդին է: Փրկչի այս խոստովանութիւնը, ինչպէս և ինքը կանխօրէն դուշակեց, իրան մահուան դատապարտեց, իսկ մեզ համար «բանս կենաց յաւիտենականաց» (տ. Յովհ. դ. 69. 70.) դարձաւ:

IV.

«Տէր, առ ո՞վ երթիցուք. բանս կենաց յաւիտենականաց ունիս: Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք, եթէ դու ես Քրիստոս որդի Աստուծոյ կենդանույ»: (Յովհ. դ. 69. 70.):

Կեկնել—«Ես եմ լոյս աշխարհի....»:

«Զի լոյս եկն յաշխարհ....»:

«Երանի հեղոց....»:

V

Ի՞նչից պիտի երևայ, որ դու ևս հաւատում ես, թէ Յիսուս Աստուծու որդի է: Յիսուսի էլի ո՞ր խօսքերը մեզ համար յաւիտենական կեանք են շնորհում: Յիսուս իւր վշտերի ժամանակ ցոյց տուաւ թէ մարդկային տկարութիւնը և թէ աստուածային մեծութիւնը:

Մեկնել և վարժել—Յովհ. ա. 14.... «Եւ բանն...»: «Զայն խորհեցի իւրաքանչիւր ոք ի ձէնջ, որ եւ ի Քրիստոս Յիսուս»:

Վարժուել—«Զի որդի մարդոյ եկն....»: «Երանի սգաւորաց....»: Մի՛ դատիք....»: «Լեր հաւատարիմ մինչեւ....»: «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր....»: «Զգործսն զոր ես գործեմ....»: «Զի եւ Յիսուս մեռաւ եւ եթող մեզ օրինակ....»:

§ 56

ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՎԱԽՃԱՆԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

Պետրոսի ուրացու թիւնը:

Նպատակ: Այժմ տեսնենք՝ Պետրոսը, որ մինչև քահանայապետի սրահը Յիսուսին հետևեց, ինչպէս կվարուէ:

I

Պետրոսն ինչու էր հետևում փրկչին: — Թերևս սէրը, կարեկցութիւնը, անվեհերութիւնն ստիպեցին այդպէս վարուել կամ գոնէ Գեթսեմանի թուրութիւնը ցանկանում է գէթ սրանով ուղղել: Պետրոսն անշուշտ լիշխիս կլինէր Յիսուսի խօսքերը, թէ մինչև հաւիտենական կեանք անգամ ինձ կուրանաս: Նա քանի լիշու էր այս խօսքերը, թէ «սկեցէք եւ աղօթս արարէք....» խղճահարում էր. ներքին պատերազմի մէջ էր. ցանկանում էր մի ձևով վերականգնել իւր հաւատարմութիւնը: Քահանայապետի սրահումն արդեօք Պետրոսին ճանաչող կլինի: Իսկ եթէ լինի, ինչ կպատահէ:

II.

Աւանդել նոր նիւթը (Մտթ. իդ. Յովհ. Ժը. Մրկ. Ժդ. Ղուկ. իբ.):

Յիսուսն իրաւացի դուշակեց—Պետրոսը երեք անգամ ուրացաւ հաւիտենական խօսքից առաջ: Առաջին ուրացութեան պատճառն ինչ էր:—Պատժի երկիւղը. նրա ուրացութիւնը լոկ ինքնասիրութիւն և մարդկային երկիւղ կարելի է անուանել: Ի՞նչ էր երկրորդ և երրորդ ուրացութեան պատճառը:—Նա դեռ ևս նոյն մտածողութիւնն ունէր, թէ մի գուցէ իրան էլ դատապարտեն: Նրա երկիւղը կրկնապատկուեց, երբ տեսաւ, որ իրան շատերն են ճանաչում (վերջին անգամ ճանաչեցին նրա արտասանութիւնից—նա խօսում էր գալիլիական բարբառով, որը բաւական կոշտ արտասանութիւն է և ունի բազմաթիւ կոկորդային հնչիւններ), դրա համար էլ արհամարհական ձևով վերաբերուեց դէպի Յիսուս—խօսակցութեան մէջ նա օտար համարեց Յիսուսին, երգուեց, որ նրան բաց է ի բաց չէ ճանաչում: Երրորդ անգամն իրան անիծեց, այսինքն ուղում էր ասել,

Թող ես անիծեալ լինիմ, եթէ իմ խօսքերը սխալ են: Այդ բոլորը նրա համար էր, որպէսզի ամենին հաւատացնէ իւր ստախօսութիւնը և իրան Յիսուսի աշակերտ չհամարէ: Այսպէս Պետրոսը մոռացաւ Յիսուսի առաջին յորդորն ու զգուշացուցիչ խօսքերը. մոռացաւ նմանապէս իւր հրապարակական խոստովանութիւնը, որ ամենի առաջ խօսք տուաւ չմոռանալ Յիսուսին, եթէ հարկ լինի մեռնել անգամ նրա համար — իսկ այժմ քաջութիւն չունեցաւ իրան Յիսուսի աշակերտ անգամ անուանել — կարճ՝ Պետրոսը փոխանակ իւր անձը և իւր շահը մոռանալու, մոռացաւ փրկչին՝ իւր վարդապետին:

Այդ ինչպէս պատահեց: — Պետրոսը սխալ չափեց իրան. չափազանց սէր, զոհաբերութիւն և հաստատակամութիւն խոստացաւ: Պետրոսը իւր բարի, գեղեցիկ նախաբանները ստորագրեց մարդկային երկիւղին, իւր եսին և այս բոլորը նրանից յառաջացաւ, որ չնայելով Յիսուսի յորդորին, չհսկեց, չաղօթեց, այսինքն մտքով շարունակ Աստուծու մօտ չեղաւ: Դրա համար և փորձութեան ենթարկուեց — նրա անկումն այնքան մեծ եղաւ, որքան մեծ էին նրա խոստումներն սկզբում: Ահիշտ է, նա սիրում էր իւր վարդապետին, ապա թէ ոչ չէր հետևի նրան, բայց իւր անձն աւելի սիրեց:

Որքան ժամանակ տուեց առաքեալի ուրացութիւնը: Հաւի խօսելը մի կողմից, միւս կողմից փրկչի հայեացքը՝ ի նորոյ զարդեցրին նրա մէջ՝ ինքնասիրութիւնից ընկճուած նախաբանները: Փրկչի լռելեացն հայեացքն ինչ էր ասում: — Միգ է քո հաւատարմութիւնը և խոստումը, որով դու պարծենում էիր. մի՞թէ այդ իմ ցոյց տուած սիրոյ տրիտուրն է — քեզ էիր կամենում ուրանալ, իսկ նրա փոխարէն ինձ մոռացար:

Պետրոսն ինքն իրան ինչ կասէր, իրա հետ ինչպէս կ'իստէր: — Առաջ ես իմ կեանքը զոհ էի կամենում բերել վարդապետիս համար, իսկ այժմ չեմ էլ վստահանում ասելու, թէ նրան ճանչում եմ. խօսքով ես հաւատում էի և քաջ էի, իսկ գործքով՝ ապերախտ և երկչոտ. երևակայութեամբ հաստատ և աներկիւղ էի համարում ինձ՝ նոյն իսկ ամենամեծ փորձութեան և վտանգի առաջ, իսկ ամենաչնչին փորձութիւնից ընկճուեցայ, ընկայ և այն ոչ թէ մի անգամ, այլ՝ երեք անգամ, մինը միւսի ետևից. ես ոչ թէ հերոս եմ, ինչպէս կար-

ծում էի, այլ երկչոտ՝ ողորմելու մինը: Ես իմ քաջութեամբ և հաւատարմութեամբ կամենում էի վարդապետիս ուրախութիւն պատճառել, վարդապետի, որը քաջութեամբ դիմում է դէպի մահ՝ հաւատարիմ մնալով իւր հօրը և զոհելով իւր անձը իւրայիններին, այլև ինձ համար: Իսկ ես իմ վարմունքով այնպիսի մի վիշտ պատրաստեցի նրա համար, որ նրա ոխերիմ թշնամիները միայն ընդունակ էին անել — ամօթ ինձ՝ Պետրոսիս՝ աւագից կազմուած «վիմիս»:

Ի՞նչից ենք նկատում, որ Պետրոսն այսպէս էր մտածում: — Նա դուրս գնաց և դառնապէս լաց էր լինում իւր երկչոտութեան, թուլութեան, ինքնասիրութեան — կարճ՝ իւր յանցանքների համար: Սրբեօք բացի այս մտքերից՝ արտասուող Պետրոսի մէջ ուրիշ մտածողութիւններ ևս կային: — Ես սխալս կուղղեմ և այլ ևս չեմ կրկնի նոյնը: Այժմեանից սկսած խոստանում եմ բոլոր աշխարհի առաջ խոստովանել քեզ, էլ ոչ ոքից ես չեմ վախենալ և եթէ իմ կեանքն էլ կարեւոր լինի տալ, աներկիւղ կ'սեմ — ես քոն եմ, դու իմն ես. ես քեզ կ'խոստովանեմ մարդոց առաջ, որ դու էլ ինձ չմոռանաս Աստուծու առաջ:

Ում սրտի մէջ այս տեսակ մտքեր կան, ցաւը, վիշտը երկար չի կարող տևել: Վշտին կհետևէ միևիթարութիւնը, իսկ վերջինիս՝ հաւատ, որ ասում է լռելեացն — Աստուած ողորմած է, չլիքած է, նա կներէ քո սխալները (երանի՜ սգաւորներին, որովհետև նրանք պէտք է միևիթարուին): Հ ա մ ա խ մ բ ե լ բ ա լ ո յ ա կ ա ն կ է տ եր ը:

ԵՐԿՐՈՐԿ ՀԱՏՈՒԱԾ

Յ ու դ ա յ ի վ ա խ ճ ա ն ը:

Ն պ ա տ ա կ: Սյսպէս վարուեց այն աշակերտը, որ Յիսուսին մոռացաւ, ուրացաւ, այժմ տեսնեմք, ինչպէս կ'վարուէ նա, որը մատնեց իւր վարդապետին:

I.

Յիշեցէք մի անգամ ևս Յուդայի վարմունքը (կրկնել § 52): Քայց լքօք ինչպէս էր: Յիսուս որպէս Մեսսիա յայտնի էր ամենուրեք և հէնց դրա համար էլ թշնամիները նրան մահուան դատապարտեցին: Նա երբէք չէր մտածում այն մասին, որ ոչնչացնէ թշնամիներին և երկնաւոր թագաւորութիւն հիմնէ, այլ ընդհակառակն՝ թոյլ տուաւ հակառակորդներին ամենայն

չարութիւնն դործելու և այդ բոլորը նա տանում էր աստուածային հեղութեամբ և համբերութեամբ: Յուդան կուրացած արծաթսիրութիւնից՝ մատնեց իւր վարդապետին: Այնուհետև ինչ կմտածէր և ինչ կանէր Յուդան:

II.

Աւանդել նոր նիւթը (Մտթ. Իէ.): Յուդայ և զղջումն, այդ անհաւատալի է: Երևի նա չէր սպասում, որ իւր վարմունքն այդպիսի հետեանք կունենայ, ապա թէ ոչ Յիսուսին դատապարտելը ցաւ չէր պատճառի նրան: Նրա կարծիքով Յիսուս այլ ևս Մեսսիա չէ կարող լինել. նա այժմ համարում է նրան մի բարեպաշտ և արդար ոմն. նրա խիղճը տանջում է իրան, որ անմեղ մարդու մահուան պատճառ դարձաւ, ուստի և սիրտը լիքն է երկիւղով—խիղճը տանջում է: Ի՞նչիցն է երևում այդ խղճի խալթը:—Փրկանքի փողը լետ է բերում և քահանայապետին է տալիս. նա կարծում է թէ այդպիսով կազատուի խղճի խալթից, ուստի և հրապարակական կերպով խոստովանում է, որ նա անմեղ արիւն է մատնել—փրկանաց փողը չի կարող վերցնել: Ի՞նչ ընդունելութիւն է գտնում քահանայապետից:—Մատնիչներին յատուկ սառնութեան է յանդիպում. ոչ մի մխիթարական խօսք չէ լսում ոչ ոքից. ընդհակառակն արհամարհում են—մատնիչը հարկաւոր էր նրանց մինչև այժմ, նա գործիք էր նրանց ձեռին, իսկ այժմ աւելորդ է: Յուդային այս պատասխանն են տալիս—եթէ դու կարծում ես, թէ անմեղ արիւն ես մատնել, յանցանք գործել, այդ քո բանն է, գնա և ինչ ձեռով կամենում ես քաւիր քո սխալանքը: Յուդան ինչպէս է կամենում քաւել իւր յանցանքը:—Արեան փողը շարտում է տաճարի մէջ: Միթէ նա դրանով քաւեց իւր սխալը.....

Ի՞նչ խորհուրդ կտաք Յուդային, ինչպէս կարող է նա ազատուել խղճի խալթից:—Թող գնա՛ փրկիչի մօտ, ոտներն ընկնէ, խոստովանէ իւր յանցանքը և ներողութիւն խնդրէ: Յիսուսն անշուշտ կներէ. նա ընդունում է յանցաւորներին անառակ որդու հօր նման: Ի՞նչու Յուդան փրկութեան այս միակ ճանապարհով չընթացաւ:—Նա չէր հաւատում թէ Յիսուս և Աստուած կներեն իրան—նրա մէջ միայն զղջումն կար, իսկ հաւատ՝ ոչ: Յուդան նկատում է միայն իւր զղուելի արարքը, որ

անդառնալի է. լսում էր միայն այս սարսափելի պատուիրանը, թէ «մի սպանաներ»: Քարոյական միակ միջոցն, ինչպէս վերև յիշեց, այսպիսի մաշող և տանջող դրութիւնից ազատուելու համար այն էր, որ շնորհ խնդրէր Աստուածանից, բայց մասամբ թերահաւատութիւնը, մասամբ յամառութիւնն արգելեցին նրան ճշմարտութեան ուղիով ընթանալու: Այս պատճառով նրա ներքին աշխարհում ծագեց անհանգստութիւն, վրդովմունք—փոխանակ խաղաղութեան և հանգստի, փոխանակ շնորհի, ողորմութեան նա տեսնում էր միայն իւր յանցանքը.....: Եւ որովհետև հոգեկան այս մաշող դրութիւնը երկար չէր կարող շարունակուել, ուստի երկրորդ յանցանքը գործեց—մատնիչն ինքնասպան դարձաւ (մի յանցանքը միւսի մայրն է. թէև մեր յանցանքները մեծ են, բայց Աստուծու ողորմութիւնն աւելի ևս):

Մի խօսք էլ քահանայապետի և ձերերի (բարձրագոյն ատենի անդամների) մասին: Ի՞նչ կարծիք ունիք նրանց վարմունքի մասին:—Մատնիչ Յուդայի խոստովանութիւնը, թէ նա անմեղ արիւն է մատնել, ամեն մի դատաւորի համար վերին աստիճանի հետաքրքրական պիտի լինէր, բայց նրանք ասում են, թէ մեզ ինչ փոյթ: Նրանք միայն այս են մտածում—այդ մենք ևս գիտենք, որ նա անմեղ է, բայց մեր ցանկութիւնն է նրան աշխարհիցս վերացնել, որովհետև նա սպառնում է մեր իշխանութեան. զոհ ենք, որ քո միջնորդութեամբ մահու վճիռ կայացաւ—զղջման մասին խօսք չի կարող լինել մեզ մօտ: Պովելի վարմունք չէ, որ այդ փողը գանձանակի մէջ չեն ձգել:—Այս վարմունքն իսկ փարիսեցական է—այդ փողը Աստուծու գանձանակի մէջ ձգելն անվայել են համարում, իսկ իրանց սիրտն ու միտքը զբաղեցնել մարդասպանութեամբ՝ ներելի, վայել է: Այդ միւսնայն է նրանց համար. մարդասպանութեան համար կարելորդ է նրանց համար այդ փողը, իսկ տաճարի գանձանակի համար անպէտք: Նրանք էլի նոյն են, ինչպէս Յիսուս միանգամ նկարագրեց—«մօղուկները քամում են, իսկ ուղտերը կլանում»: Թէ նրանք այդ փողով բարի բան են կատարում (բրտի ագարազը գնում օտարական մեռելների համար), բայց այդ նրանց յանցանքն այնքան թեթեւացնում է, որքան որ Յուդան փողերը տաճարը ձգելով՝ ազատեց խղճի խալթից:

Համախմբել բարոյական վճիռները:

III ա.

Ներկայ Պետրոսին Համեմատել նախկին (տ. § 29 և § 54.) Պետրոսի, փրկչի (տ. § 55.) և Յիսուսի ներկայ աշակերտների հետ: — Փրկիչը Հաստատ կամքով, յայտնում է սուրբ ճշմարտութիւնը, որ նրանից իւր կեանքը պիտի խլէ — նա իւրայիններին երջանիկ անող ճշմարտութիւնը բարձր է դասում իւր սեպհական կեանքից: Իսկ Պետրոսը՝ այդ գովաբանեալ վէմը, որ աշխարհիս մէջ առաջին անգամ խոստովանեց ճշմարտութիւնը («դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ») և մինչև մահ կամենում էր Հաւատարիմ մնալ Աստուծու որդուն, քաջութիւն չունեցաւ դիմադրելու թուլութեան, երկչոտութեան, երկիւղին և յայտնի կերպով խոստովանելու իւր դաւանածը: Այսպէս Պետրոսն ուրացաւ իւր ճշմարիտ տիրոջը և ճշմարիտ Հաւատը այն անյարմարութիւնների պատճառով, որոնք կարող էին ծագել նրա խոստովանութիւնից — ինքնասիրութիւնն աւելի մեծ է նրա մէջ քան թէ Հաւատը (տ. փրկչին անձնատուր լինելը):

Իսկ Յիսուսի ներկայ աշակերտները: — Չատերը կան, որոնք սիրում են Յիսուսի խօսքերն և Հաւատում, ինչպէս Պետրոսը, բայց շատերն էլ, նոյն Պետրոսի նման՝ երկիւղից, հոգսից ըստիպուած՝ քաջութիւն չունին ամենուրեք և ամենի առաջ, ուր կարիք կայ, խոստովանելու, թէ ես Հաւատում եմ Աստուծու որդի Յիսուսին, որը ճշմարտութիւն է և որի խօսքի և քարոզութեան Համաձայն պէտք է լինէր այս և այն... (թանձրացեալ օրինակներ): Կան բազմաթիւ մարդիկ, որոց առաջ ծաղրի է ենթարկուում Քրիստոսի անձը և քարոզութիւնները, քրիստոնէական բարեպաշտութիւնը և բարոյականութիւնը..., բայց այդպիսիք բերան անգամ չեն բաց անում և մի խօսք ասում՝ ի պաշտպանութիւն քրիստոնէութեան և ճշմարտութեան, այլ լուում են զանազան պատճառներով (թանձրացեալ օրինակներ): Բոլոր այդ տեսակ վարուողները Պետրոսի նման ուրանում են Յիսուսին միւլենոյն պատճառով, այսինքն չեն հրսկում իրանց անձը և չեն աղօթում — իրանց աւելի են սիրում փրկչից: Այդ տեսակները ևս կցանկանային ըստ Պետրոսի հեռանալ իրանց ամօթ բերող շրջանից. հեռանալ երկչոտու-

թիւնից. դառնապէս լալ և բարի նախաբանով փոխարինել իրանց թուլութիւնն ու երկչոտութիւնը: Նոքա, որոնք քաջութիւն չեն ունենում դուրս գալ այդ ամօթալի դրութիւնից, անունով քրիստոնէաներ են, որոնք արդարեւ «տէր, տէր» են կոչում, բայց գործով ցոյց են տալիս, որ իրանց տէրը ոչ թէ Յիսուս Քրիստոսն է, այլ իրանց սեպհական սիրելի ետր. այդ տեսակներին փրկիչը վերջին դատաստանի ժամանակ կասէ. «եթէ ոչ երբէք դիտէի դձեզ, ի բաց կացէք լինէն ամենեքեան, ոչք գործէք զանօրէնութիւն» (Մտթ. է. 23): Մեր Հաւատը դէպի Քրիստոս այն ժամանակ միայն կենդանի է և կատարեալ, երբ մենք քաջութեամբ խոստովանում ենք նրան և Հարկ եղած ժամանակ պատերազմ մղում նրա թշնամիների դէմ: Իսկ ուր այդ ողին չկայ, կնշանակէ մեր Հաւատը զուրկ է ճշմարիտ զօրութիւնից (թերահաւատութիւն): Ուստի պէտք է հսկենք, և աղօթենք, որպէսզի փորձութեան (ուր կարիք կայ խոստովանելու նրա աստուածութիւնը) մէջ չընկնենք Պետրոսի նման, իսկ եթէ պատահի որ ընկնենք, պէտք է կամենանք վերստին կանգնելու նոյն Պետրոսի նման, որպէսզի Հանդիպած լինինք Քրիստոսի երկու խօսքերից ոչ թէ խօտին, այլ՝ բարեկամականին, որ ասում է. «Ամենայն որ խոստովանեսցի լիս առաջի մարդկան...»: (Մտթ. Ժ. 32. 33.):

III. բ.

Համեմատել Պետրոսին Յուդայի հետ: — Ինքնասիրութիւնը (Յիսուսի վերաբերութեամբ) երկուսին էլ յաղթում է. երկուսն էլ զգում են, խոստովանում և զղջում իրանց յանցանքը, սակայն Պետրոսի զղջման հետեւում է Հաւատ, որ յուսատրում է նրան արժանանալու Աստուծու շնորհաց: Նա ընդունում է շիտակ նախաբաններ՝ դառնալ և ապագայում ուղղել իրան — ահա սա է ճշմարիտ և իսկական զղջումն, որ տանում է դէպի Աստուած և դէպի երջանկութիւն (կրօնական լեզուով ասում ենք առտուածային, երկնային տրտմութիւն): Յուդայի զղջման չհետեւեց Հաւատը՝ Աստուծու շնորհացն և նեղողութեան արժանանալու. նոր կեանք ոտանալու յոյս չծագեց նրա մէջ — ահա սա էլ կեղծ զղջումն է, որ յաճախ աշխարհային մարդկանց մէջ կարելի է փնտռել (աշխարհային խորամանկութիւնը, խորագիտութիւն և չարութիւն ասածները

ևս այս տեսակին են պատկանում): Այս տեսակ կեանքը. այս տեսակ վիշտը (աշխարհային) մարդուս հեռացնում է Աստուածանից, ձգում է յուսահատութեան մէջ, որի օղակներէից մինն էլ մահն է (կեղծ զոյժումը նախ սպանում է հոգու մէջ այն բոլորն, ինչ որ աստուածային է և ապա մահացնում է տրտմողին): Անցեալ պատմութիւնից զոյժման ուրիշ օրինակներ չիշել, այսինքն Գաւթի, Սաւուղի, մաքսաւորի, անառակ որդու... կեանքից և քննել այն տեսակէտից, որ պարզաբանեն և հաստատեն այս սկզբունքը II. Թ. ա. Կրնթ. է. 10.:

IV.

«Ամեանայն որ խոստովանեցի լիս առաջի մարդկան, խոստովանեցից եւ ես զնմանէ առաջի հօր իմոյ, որ յերկինս է: Եւ որ ուրացի զիս առաջի մարդկան, ուրացայց եւ ես զնա առաջի հօր իմոյ, որ յերկինս է.»: Մտթ. Ժ. 32. 33.:

«Զի որ ըստ Աստուծոյն տրտմութիւն է, ապաշխարութիւն ի փրկութիւն առանց զոյժալոյ գործէ. իսկ աշխարհի տրտմութիւն մահ գործէ»: II. Թ. ա. Կրնթ է. 10.:

V

Ներկայումս դու ի՞նչպէս կարող ես Յիսուսին խոստովանել: Քրիստոնէի գործած իւրաքանչիւր յանցանքը մի տեսակ ուրանալ է Քրիստոսին (ապացոյց): Ե՞րբ կարող է մեր տրտմութիւնն աստուածային և երբ աշխարհային կոչուել:

Մ ե կ ն ե լ և վ ա Ր Ժ ե լ — Մտթ. ե. 10. 11. Ժգ. 24 — 26. Ժ. 28.:

Վ ա Ր Ժ ու թ իւ ն — «Հսկեցէք եւ աղօթս արարէք...»: «Մի սիրէք զաշխարհս...»: «Երանի՛ սգաւորաց...»: «Զի զոր ինչ սերմանէ մարդ...»: «Լեր հաւատարիմ մինչեւ ի մահ...»: «Տէր առ ով երթիցուք...»: «Եթէ ասիցեմք...»:

§ 57

ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌԱՋ

Ն պ ա տ ա կ: Վերնագիր:

I.

Ո՞վ է այս Պիղատոսը: — Երկրի կառավարիչը՝ մեծ դատա-

ւորը՝ կայսեր տեղապահը: Նստում էր Կեսարիայում (Պաղեստինէ). պատեքի տօնին Երուսաղէմ էր գալիս, որպէսզի հսկէ Ժողովրդի տրամադրութիւնը և եթէ խռովութիւն պատահէ, հռովմէական զնտի զօրութեամբ (Անտոնիոսի աշտարակում) ընկճէ: Յիսուս ի՞նչ գործ ունէր այս հեթանոսի հետ: — Բարձրագոյն ատենի անդամները կայսեր տեղակալի մօտ բերին նրան, որպէսզի դատէ, վասնզի հրէաները, որպէս Հռովմի հպատակներ, մահու պատիժ տալու իրաւունք չունէին: Պիղատոսը պէտք է հաստատէր մահու վճիռը և հռովմայեցի զինուորների ձեռով ի կատար ածէր:

Այսպիսի մի բարձրաստիճան մարդուց ի՞նչ կարելի էր սպասել: — Որ արդարութեամբ կդատէ (հռովմայեցիները թէև զօրաւոր էին և երկրներ տիրապետելու վարպետ էին, բայց դատարաններում խիստ միջոցներ էին գործ դնում արդարութիւն պաշտպանելու համար), ուստի և ուղղակի՝ առանց մանրամասն քննութեան չէր կատարի բարձրագոյն ատենի անդամների կամքը. անշուշտ նախ դատապարտեալի յանցանքը կուզէր իմանալ և ապա վճիռ կկարդար: Ի՞նչ հաշիւ կտային զրպարտողները: — Մենք նրա համար ենք դատապարտել սրան, որովհետեւ Աստուծուն հայհոյում է և իրան էլ նրանից ուղարկուած Մեսսիա (որդի Աստուծոյ) է համարում, այն ինչ իրօք այսպէս չէ: Այս պատճառաբանութիւնն անշուշտ մահու վճիռ տալու հիմք չէր համարի հեթանոս Պիղատոսը. նա կասէր՝ ինձ չէ հետաքրքրում ձեր Աստուածը և նրա որդին. աւելորդ խօսակցութիւններ են. դուք հաւատում էք սուտ աստուծուն, եթէ Քրիստոսն էլ իրան Աստուծու որդի է անուանում, ուրեմն նա էլ ձեզ նման մոլեռանդի մինն է: Եթէ ուրիշ ծանր հիմք ունէք, ասացէք:

Ուրեմն Պիղատոսը չէր դատապարտի Յիսուսին: Փարիսեցիներն այդ բանը գիտէին, որ հեթանոսի մինն այդ տեսակ պատճառաբանութիւնը մահու վճիռ տալու հիմք չի համարի: Ուրեմն ի՞նչ մեղադրանք պիտի բարդէին վրան: Խնդրի հոլութիւնը աշակերտներին պարզելու համար՝ կարելի է մատնանիշ լինել ա. հարկի դահեկանը և բ, թէ հրէաները ի՞նչ էին սպասում Մեսսիայից: Փարիսեցիներն անշուշտ կասէին — Յիսուս իրան կամենում էր Մեսսիա հրատարակել. ով Մեսսիա է, նա

Թագաւոր պիտի լինի և մեր ազգն աղատէ ու անկախ դարձնէ, որպէսզի հրէաներն այլ ևս հարկ չվճարեն հռովմայեցիներին: Այս բանն ի հարկէ մեծ հիմք կհամարուէր Պիղատոսի համար, ուրեմն ապստամբութիւն կայսեր դէմ: Ի՞նչ կանէր Պիղատոսը, եթէ մի այդպիսի զրպարտութիւն լսէր:—Նա հետամուտ կլինէր, թէ ճշմարիտ է արդեօք, որւէ ձեռով չեն շարժում ժողովրդի ազգային զգացմունքը: Այսպիսի բան չէ արել Յիսուս, փարիսեցիներն ինչպէս փէտք է հաստատեն: Ի՞նչպէս երևում է, չպիտի կարողանան հեթանոս դատաւորին համոզելու, որ մահու վճիռը հաստատէ: Ուշադրութեամբ լսենք, թէ գործն ինչպիսի շրջաններ է առնում:

II ա.

Աւանդել նոր նիւթը—Մտթ. իէ. Մրկ. Ժէ. Ղուկ. իդ. Յովհ. Ժէ. Ժր.:

ԱՌԱՏԻՆ ՀԱՏՈՒԱԾ

Յովհ. Ժր. 28—39: Նիւթը (ա. հատուած) կարգով պատմել: Գանգատաւորները (բարձրագոյն ատենի անդամները) մեղադրեալի հետ ներս չեն մտնում դատաւորի տուն, որպէսզի չպղծուեն: Իրանց սովորութեան համաձայն, եթէ այդ տօնին հեթանոսի տուն մտնէին, այնուհետեւ անարժան կլինէին վախելիու պասեքի գառը: Պիղատոսը հարցնում է, թէ ի՞նչ գանգատ ունին, իսկ նրանք կոպիտ, յանդուգն պատասխան են տալիս, չեն ուղղում կասկածել անգամ, թէ իրանց դատապարտածը յանցաւոր չի կարող լինել—սրանով կամենում էին հեթանոս դատաւորի վրայ ճնշում գործել: Պիղատոսը վերաւորում է և հեգնում է նրանց ասելով—տարէք և ձեր օրէնքով դատեցէք: Փարիսեցիները, որոց համար յոյժ կարեւոր էր հեթանոս դատաւորի տրամադրութիւնը՝ Յիսուսի մահուան վճիռը հաստատելու համար, պատասխանում են, որ իրանց օրէնքը թոյլ չէ տալիս մահու վճիռ կայացնել: Սրանից յետոյ, ինչպէս որ մենք գուշակեցինք, սկսեցին ամբաստանել Յիսուսին՝ որպէս թէ նա կամենում է թագաւոր լինել, ժողովրդին ապստամբեցնում է հռոմի դէմ, արգելում է կայսեր հարկ վճարելը—կարճ՝ նա յեղափոխական է, դաւաճան, ապստամբ:

Պիղատոսն ի՞նչ կմտածէր այս բանի վրայ:—Կասկածում է, չի հաւատում ամբաստանութեանը: Ճիշտ է նա Յիսուսի

մասին շատ բան լսած ունէր, միայն ոչ քաղաքական միտումներ: Այս ամբաստանութիւնը օտարոտի թուաց Պիղատոսին, որովհետեւ մեղաւորները փարիսեցիներն էին, որոց նա շատ լաւ ճանաչում էր. նա գիտէր որ փարիսեցիները հռոմի իշխանութեան հալաւակ մարդիկն են, եթէ Յիսուսի մէջ մի այդպիսի բան նկատած լինէին, իրանց սրտից կլինէր և նրան ոչ թէ կմտնէին, այլ ամենայն ձեռով կպաշտպանէին, որովհետեւ դրանք կազմում էին ազգային կոչուած կուսակցութիւնը, որ ճրգնում էր հռոմի լուծը թոթափել:

Որովհետեւ Յիսուս ոչ մի պատասխան չէ աւելիս իրան մեղադրողներին, ուստի հռովմայեցի դատաւորը ներս է տանում ամբաստանեալին, որ ամեն ինչ անձամբ ստուգէ: Ամենից առաջ հարցնում է, թէ նա արդեօք հրէից թագաւոր չէ:—Յիսուս չէ մերժում իւր թագաւոր լինելը, բայց աւելացնում է, որ կայսրը կարիք չունի երկիւղ կրելու, վասնզի նրա թագաւորութիւնն այս աշխարհից չէ՝ ապա թէ ոչ նրա ծառաները (տ. Պետրոս) կպատերազմէն և չէին թոյլ տալ թշնամիների ձեռն ընկնել: Պիղատոսը չէ հասկանում Յիսուսի «իմ թագաւորութիւնն այս աշխարհից չէ» խօսքերը, որովհետեւ իբրեւ հռովմայեցի և հեթանոս՝ նրան յայտնի էր միայն մի աշխարհ, այն է երկրային (այսինքն այս աշխարհը, նրանց համար հանդերձեալ չկայ), ուստի և չէ կարողանում ըմբռնել, թէ Յիսուս՝ էլ ինչպէս կարող է թագաւոր լինել: Ամբաստանեալը պարզում է նրան, որ ինքը ճշմարտութեան թագաւոր է, որ եկել է ճշմարտութիւնն աշխարհին յայտնելու (մի Աստուած կայ. նա մեր ողորմած հայրն է. ով ինձ կհաւատայ, նա միայն կարող է դալ այդ հօր մօտ) և նոքա, որոնք բոլորովին կոյր չեն ճշմարտութեան համար, կլսեն նրան: Պիղատոսը չի լսում այս յորդորին, նա չի ըմբռնում, այլ թեթեւամտութեամբ հարցնում է, թէ ի՞նչ է ճշմարտութիւնը: (Ճշմարտութիւն չկայ—մինն ասում է թէ սա է ճշմարիտը, միւսը միւսնոյնն ուրիշ բան է ասում, դու բոլորովին աւելորդ պաշտօն ես յանձն առել—հեթանոսական իմաստասիրութեանն այդքանը միայն յայտնի էր այդ ժամանակ:) Պիղատոսը միայն այսքանը կարողացաւ հասկանալ, որ նա յեղափոխական, ապստամբ.... չէ, ինչպէս մեղադրում են, այլ աւելորդ գործով պարապող

ամն, ուստի և դուրսը կանգնող զանգառաւորներին յայտնում է, որ նա մահու պատիժ նշանակելու արժանի յանցանք չէ գտնում նրա մէջ:

Հ ա մ ա խ մ բ ե լ — Յիսուս ամբաստանում է Պիղատոսի առաջ որպէս հրէաների թագաւոր, իսկ ինքն իրան ճշմարտութեան թագաւոր է յայտնում. Պիղատոսը յանցանք չէ գտնում նրա մէջ:

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Ղ ու կ. ի գ. 5—12:

Աւրեմն այսպէս էլ դատը կվերջանար: Ի՞նչու: Էլի ի՞նչ է պատահում:

Քահանայապետները հեշտութեամբ ձեռք չեն վերցնում իրանց զոհից—յամառութեամբ դիմադրում են դատաւորին և նոր մեղադրանքներ բարդում Յիսուսի վրայ, որպէս թէ նա շրջում էր երկրի մէջ՝ Գալիլիայից սկսած մինչև այստեղ և աղմկում է ժողովրդին: Երբ Պիղատոսն իմացաւ, որ Յիսուս Գալիլիայիցն է և Հերովդէսի իշխանութեան հպատակ, ուղարկեց նրա մօտ, որպէսզի նա դատէ (Հերովդէսը պատեքի տօնի պատճառով Երուսաղէմ էր եկել): Նա այդ բանը չպիտի անէր, որովհետև ինքը հրէից երկրի ամենամեծ դատաւորն էր. Յիսուս միայն Գալիլիայի սահմաններում ենթակում էր Հերովդէսի իշխանութեան: Այս վարմունքն ուրիշ կողմից տարօրինակ էլ էր, որովհետև հպարտ հռովմէացին՝ առանց մի կարևոր հիմքի, դատի վերջնական վճիռը յանձնում է մի անձնի, որը հրէա է և որի հետ անձնականապէս ինքը լաւ չէ: Այսքանը պարզ երևում է, որ դատն ամբողջովին նրան դուր չէր գալիս—մեղադրեալին առանց հիմքի դատապարտել չէր կարող, բայց միևս կողմից չէր ուզում երկրի մէջ կշիռ ունեցող քահանայապետներին և առեւտրի անդամ փարիսեցիներին վիրաւորել և նրանց կամքը չկատարել, դրա համար էլ իրանից հեռացրեց և Հերովդէսի մօտ ուղարկեց:

Հերովդէսի մօտ ի՞նչ պատահեց:—Չատ ուրախացաւ Յիսուսի գալստեան համար. ոչ թէ սիրուց և յարգանքից զրդած, այլ հետաքրքրւում էր տեսնել նրան, որով ամենքն էին զբաղուած: Նա կամենում էր միևս կողմից նրա հրաշքներն և նշանները տեսնել: Յիսուս արհամարհում է այս հետաքրքրութիւնը և ոչ մի

պատասխան չէ տալիս՝ չնայելով հակառակորդների խիստ դանդառնութեան: Հերովդէսը վիրաւորւում է Յիսուսի վարմունքից, անարդու, ծաղրում է և ինչ կարծիք, որ նրան փրկելու մասին խօսք չէր կարող լինել: Հերովդէսը նկատում է քահանայապետների և ժողովրդի կատաղի յարձակումները, առանց իրան էլ նրանք Յիսուսին կենդանի չեն թողնիլ, ուստի աւելորդ է համարում մի երկրորդ մարզարէի (տ. § 49) մահուան պատճառ դառնալ, ուստի նախատեալին յետ է դարձնում Պիղատոսի մօտ՝ սպիտակ հանդերձ հազցրած: Սրանով ծաղրում է Յիսուսին, որպէս թէ իսկ թագաւոր է, որովհետև արևելքի թագաւորները կամ ծիրանի և կամ սպիտակ հանդերձ էին հագնում: Հերովդէսը յիշում էր կայացնում, այլ անորոշ կերպով Պիղատոսին է դարձնում, վասնզի ինչպէս Պիղատոսն իրան յարգել էր (զոհէ ինքն այդպէս է ընդունում) և դատապարտեալին իւր մօտ ուղարկել, միևնույն յարգանքն էլ սա է տալիս նրան՝ վերջնական վճիռը նրան թողնելով: Այս փոխադարձ վարմունքը վերացնում է երկուսի մէջ եղած թշնամութիւնը և ի նորոյ բարեկամացնում: Բայց սրտեղից էր յառաջացել նրանց թշնամութիւնը:—Հերովդէսն իբրև հրէա իշխան՝ արհամարհում էր հեթանոս տիրապետողին, իսկ Պիղատոսը որպէս հռովմայեցի իշխող՝ ատում էր հրէա ստորադրեալ իշխանին:

Հ ա մ ա ո ս տ ե լ վճիռները—Գալիլիայի Հերովդէս իշխանը իւր մօտ ուղարկած մեղադրեալ Յիսուսին ծաղրում, յետ է ուղարկում:

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Ղ ու կ. ի գ. 13—24.:

Հիմա ի՞նչ պէտք է լինի:—Պիղատոսն ստիպուած է մի անգամ էլ իշխել ժողովրդին (որ հեղեղի նման հետզհետէ խռնւում էր) և նրա ղեկավարներին, որ նա, ինչպէս և Հերովդէսը, ոչինչ յանցանք չեն գտնում նրա մէջ, ուստի և պէտք է արձակէ:

Բայց ի՞նչ հետևանք: Յիսուս յանցաւոր չէ, նա պէտք է արձակուի՝ ծեծելուց յետոյ: Ջարմանալու չէ, որ դատաւորը պատուիրում է Յիսուսին ծեծել—եթէ նրան արդար է համարում, էլ ի՞նչ ծեծ, ուրեմն պիտի աղատութիւն շնորհի, իսկ եթէ յանցաւոր է, պէտք է դատապարտէ: Արձակել չէր կա-

մենում, որ մի գուցէ նրանով խանգարէր իւր յարաբերութիւնը քահանայապետներին և ժողովրդեան հետ: Դատապարտել զբժուարանում էր, որովհետև դրանով մեղանշած կլինէր իւր դատաւորական խղճի դէմ, ուստի մի երրորդ՝ միջին ճանապարհ է ընտրում—կամենում է և՛ ժողովրդին բաւականութիւն տալ, և՛ արդարութիւնը բոլորովին ոտնակոխ արած չլինել, ուստի Պիղատոսը արդարին պատժում է՝ որպէս յաջաւոր և ապա որպէս արդար կամենում է ազատութիւն տալ (նա կամենում է երկուց տէրանց ծառայել և արդարութեան և անարդարութեան):

Բայց նախ քան պատժելը՝ մի ուրիշ բան է ընկնում Պիղատոսի միտքը—լիշում է այն սովորութիւնը, որով պատէքի տօնին ժողովրդի ցանկութեան համաձայն մի բանդարկեալ ազատում են: Ուստի ընտրում է մի ծանր յանցաւոր և հարցնում ժողովրդին, թէ որին ազատութիւնն արգեօք կցանկայ նա՝ չարագործ, թէ՛ բարեպաշտ մարդունը: Արժեւում էր թէ այսպիսով կկարողանայ իւր նպատակին հասնել և ազատութիւն տալ արդարին: Բայց հաշիւը սխալ դուրս եկաւ—բաղմութիւնը չարագործի ազատութիւնը պահանջեց:

Հիմա ի՞նչ կանէ Պիղատոսը:—Զգաց սխալը: Բայց օտարօտի է դատաւորի վարմունքը—երբ նա ցանկանում է այս ճանապարհով Յիսուսին ազատել, կնշանակէ Յիսուսին էլ բանտարկեալի հաւասար է համարում, իսկ անմեղ՝ արդար մարդը բանտում գործ չունի: Այսպէս փոխանակ պաշտպանութեան՝ միամտաբար յանցաւորների ցանկի մէջ է դնում արդարին—նա շփոթութեան մէջ է ընկնում և փոքրօրի կերպով հարցնում է—հապա ի՞նչ անեմ ձեր թագաւոր Յիսուսին: Ամենքը միաբերան աղաղակում են. «Նաչիր նրան»: Եւ երբ պատճառն է հարցնում, և՛ս աւելի բարձրաձայն գոչում է ամբօխը. «Նաչիր նրան»: (Նրանց հիմքն այս է—այդ մեր կամքն է:)

Ի՞նչպիսի տրամադրութիւն ունի այժմ Պիղատոսը: Պարզ նկատում է, որ քահանայապետները նախանձից ստիպուած անմեղի մահն են ցանկանում: Դատաւորը իւր դէմ ևս վրդոված է, որ իւր անտեղի հարցով ժողովրդին դատաւորութեան իրաւունք տուաւ—այն պատիժը, որ ինքը միայն իրաւունք ունէր նշանակելու, սխալմամբ ամբօխին յանձնեց: Պիղատոսի կնոջ նախազգացումն և՛ս աւելի վրդովում է նրա

ներքինը և աշխատում է արդարին ազատելու համար միջոց ձեռք առնել:

Համառօտել—Պիղատոսն աշխատում է արդար ճանաչուած Յիսուսին ազատել—առաջարկում է ընտրութիւն անել Յիսուսի և Բարաբբայի մէջ. ամբօխը պահանջում է խաչել Յիսուսին. Պիղատոսի կինը ստիպում է մարդուն անմեղի մահուան պատճառ չդառնալ:

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՒՄԾ

Յովհ. ժթ. 1—12. 15—16—Մտթ. իէ. 24—26.:

Դատն ի՞նչպիսի շարունակութիւն է ստանում: Պիղատոսն էլ իւր նախկին ծրագիրն է ուզում գործ դնել— ծեծել և արձակել: Միւս կողմից էլ սրանով կամենում է ժողովրդի կարեկցութիւնը շարժել: Ուստի պատուիրեց Յիսուսին կարիճով պատժել, որով մի ժամանակ Ռոբոլամը սպառնաց անհնազանդներին (տ. հին ուխտ § 66.): Կարիճի պատճառած վէրքերից հոսում էր արիւնը: Բացի դրանից կոպիտ զինուորները տանջեցին և ծաղրեցին—գլխին փշեայ պսակ դրին, ծիրանի (հռովմէական զինուորի կարմիր վերարկու) հագցրին. որպէս արքայական դաւադան՝ ձեռին եղեգն տուին, չոգում էին առաջը, որպէս թագաւոր, ծաղրում, երեսին թքում, ապտակում և եղեգնով գլխին հարուածում էին:

Այս պատկերով Պիղատոսը Յիսուսին ժողովրդի առաջը հանեց և ասաց. «Ահա այդ ցձեղ»: Այս նշանակում է—նայեցէք այս խեղճ, ծեծուած, արիւնոտ և ամենայն նեղութիւն համբերութեամբ տանող մարդուն, մի՞թէ սա պիտի թագաւոր լինի, թողէք սրան, այս էլ բաւական է իւր աւելորդ քարոզութիւնների և խօսակցութեանց համար: Այս խօսքերը ցանկալի տպաւորութիւն չթողեցին ժողովրդի վրայ, ընդհակառակն կարծես Յիսուսի երեւալը նրանց արիւնուշտ զգացմունքը բորբոքեց: Արքայական տեսքը կատակ են ընդունում—որպէս թէ Պիղատոսը ծաղրում է Մեսսիայի մասին հրէաների մէջ տարածուած կարծիքը, ուստի և՛ս աւելի խիստ ձեռով են պահանջում անմեղի մահը: Այս կատաղի պահանջի դէմ Պիղատոսը ոչինչ բարի միջոց չգիտէ, նա կրկնում է իւր խօսքը, թէ ես սրան յանցաւոր չեմ ճանաչում:

Այն ժամանակ բողոքողները մեղադրանքի ուրիշ կէտ չի-

շեցին—որպէս թէ օրինաց հակառակ է վարուում՝ իրան Աստուծու որդի համարելով։ Աստուծու որդի ասածդ Պիղատոսը, որպէս հեթանոս, այլապէս է ըմբռնում, նա հասկանում է մի մեծ հերոս, զորօրինակ Հերկուլէս, Աքիլլէս, Հռոմուլոս... առ հասարակ թագաւոր ոմն, իմաստուն։ Պիղատոսը երբ տեսնում է Յիսուսի վերին աստիճանի անվրդով, խաղաղ հոգեկան դրութիւնը, նրա համբերութիւնը, վեհութիւնը, լիշում է Արամազդին տաճարում բազմած, կարծում թէ Յիսուս ևս այս աստուածներէց մինի որդին է, ուստի և՛ս աւելի դժուարանում է ձեռնամուխ լինել նրա անձին։ Դրա համար էլ տանն առանձին հարցնում է Յիսուսին. «Դու ի՞նչ տեղից ես», այսինքն մարդուց, թէ աստուածներից ես սերում։ Յիսուս լսում է, նա գիտէ, որ հեթանոսը ոչ կարող է իրան հասկանալ և ոչ էլ համբերութիւն ունի ամենայն ինչ այս կարճ ժամանակուայ մէջ լսելու, թէ ինքն ինչ Աստուծու որդի է։ Այս վարմունքը վիրաւորում է Պիղատոսին. նա արհամարհանք է ընդունում, ուստի և խորխաբար ասում է Յիսուսին. «Մի՞թէ չգիտես, որ ես իշխանութիւն ունիմ քեզ խաչելու և արձակելու»։

Յիսուս պատասխանում է բոլորովին խաղաղ և հանգիստ ձևով—դու ոչինչ իշխանութիւն չէիր ունենայ ինձ վրայ, եթէ քեզ մինը իրաւունք տուած չլինէր բոլորի վրայ տէր լինելու. լիշիր քո դատաւորական կոչումը. լիշիր ամենամեծ տիրոջ, որպէսզի դու սխալ չգործես. ամենամեծ յանցանքը՝ թէ իւր ամենամեծ տիրոջ և թէ միւս բոլոր տէրերի դէմ արդէն իմ ազգի որդիքն են գործել։ Այս խօսքերը Պիղատոսի վրայ մեծ տպաւորութիւն են գործում, նա իմաստուն ոմնի տեղ է ընդունում Յիսուսին և աշխատում է փրկել սրան՝ առանց վիրաւորելու քահանայապետներին,

Պիղատոսի տատանմունքը և անվճռականութիւնը լաւ նշան չեն համարում քահանայապետները. նրանք վճռել են, ինչ միջոցով էլ լինի, ձեռներից բաց չթողնել իրանց զոհին, ուստի վերջին միջոցն են գործ դնում։ Ո՞րն է այդ միջոցը։—Աերջապէս պարզ ասում են—ով իրան թագաւոր է անուանում, նա կայսեր հակառակ մարդ է։ Եթէ դու սրան բաց կթողնես, կնշանկէ կայսեր թշնամի ես։ Եթէ ուշք չես դարձնի մեզ վրայ, մենք քեզնից կայսեր կգանգատուենք։ (Կայսրը Տիբերիոսն

էր, մի կասկածու մարդ, մինի վրայ կասկած չայտնելը՝ չարագործութեան հաւասար էր ընդունում։ Պիղատոսը ևս շատ անարդարութիւններ էր գործել։ Աերջը մի բողոքի համար հրաժարեցրեց պաշտօնից)։ Ի՞նչ տպաւորութիւն արին այս խօսքերը։—Պիղատոս վախենում է, մի գուցէ սրանով առիթ տայ կայսեր իրան յետս կոչելու, ուստի խոհեմութիւն է համարում քահանայապետների կամքը կատարելու։ Նա այժմ վճռական դիրք է բռնում—Յիսուսը պէտք է մեռնի։

Ի՞նչով է վերջանում դատը։ Պիղատոսը հակառակ իւր ցանկութեան նստում է դատաւորական գահի վրայ վճիռը ժողովրդին յայտնելու, բայց նախ քան այդ՝ մի անգամ էլ ծաղրում է ամբօխին և նրա ղեկավարներին իրանց՝ զթալու արժանի թագաւորի հետ, որի մահը միայն ցանկանում են։ Ի՞նչ օգուտ այդ տեսակ վարմունքներից։—Կատաղում են և աւելի բարձրաձայն աղաղակում են. «Խաչիր նրան» և աղաղակը հետզհետէ սաստկանում է։ Պիղատոսն ի տես ամենի լուանում է ձեռները՝ ցոյց տալու, որ ինքն անմեղ է Յիսուսի հարցում, որ իրանց սիրոյ համար միայն համաձայնում է դատապարտել Յիսուսին, հետեւաբար և անմեղի յանցանքն ամբողջապէս իրանց պատասխանատուութեան է թողնում։ Օգը դղրդեցնող թնդիւնով աղաղակում են ամենը միաբերան—թող նրա արիւնը մեր և մեր որդւոց զլիւին լինի։ Ի՞նչ են նշանակում այս խօսքերը։—Եթէ նա անմեղ է և մենք յանցանք ենք գործում՝ նրա արիւնը թափելով, թող այդ արիւնը մեզ էլ, մեր որդւոցն էլ պատժէ։ Այդ մասին մենք կասկած չունենք, թէ յանցաւոր չէ—նա խաբեբայ է և Աստուծուն հայհոյող։ Դուք ինչ էք ասում, նրանց խօսքերն ուղիղ են։ Ո՞չ, Յիսուս արդար է, նրա նման անմեղը չկայ, նրա արիւն թափելը մահացու յանցանք է։ Եթէ Աստուած մի օր ուշադրութեան առնէ իրանց խօսքերը, ինչ ոտքադիւր պատիժ է սպասում իրանց և իրանց որդւոց. ինչ զարհուրելի դատաստան պիտի անէ Երուսաղէմի և նրա բնակիչների զլիւին։ Պիղատոսն ինչ է մտածում։ Զատ բարի, ուրեմն ես անպարտ եմ, ուստի և վճռական ձևով ասում է ամբօխին. տարեք և խաչեցեք սրան, իսկ իւր զինուորներին էլ հրամայեց վճիռն ՚ի կատար ածել։ Համառօտ էլ—Պիղատոսն աշխատում է Յիսուսին ծեծել տալ և արձակել, բայց

ի դուր: Երբ նա սքանչացած Յիսուսի իմաստութեան վրայ՝ արիւնարբու ամբոխին կամենում է համոզել, քահանայապետները սպառնում են կայսեր գանգատուել՝ որպէս մի դաւաճանից: Ժողովուրդն իրաւ իւր որդւոց վրայ է առնում անմեղի արեւնը: Յիսուսը պէտք է մեռնի:

Աւելի ևս համառօտակի յիշել բոլոր հատուածները:

II բ.

Այժմ դուք յայտնեցէք ձեր կարծիքը այս սլաղամութեան մէջ եղած բոլոր գործող անձանց մտածողութեան, խօսակցութեան և գործողութեան մասին:

Քահանայապետները և փարիսեցիները չեն մոռանում իրանց զոգութի նախանձը դէպի փրկիչն և ամենայն միջոց գործ են դնում Յիսուսին խաչել տալու համար: Ամենից առաջ յանդգնութիւն են գործ դնում, իսկ յետոյ ստախօսութիւն (նա արգելում է կայսեր հարկ տալը. «տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ»): Նա կամենում է թագազաւոր լինել, իսկ յետոյ զրգուում են ժողովրդին Յիսուսի դէմ և աղաղակել են տալիս «ի խաչ հան զդա»: Ամենայն ինչ, որ կարելի էր մտածել և մեղադրական կէտ համարել, չխնայեցին դրանք և երբ Պիղատոսն այդ նախանձից ծագած պատճառները չկամեցաւ ընդունել, սպառնացին նրան՝ կայսեր բողոքելու: Եւ սրանով իրանց նպատակին հասան, նրանց ուրախութեան չափ ու սահման չկար: Անշուշտ, այս վարմունքը մի քստմենելի չարութիւն է: Քստմենելի և մահացու է այլև նրա համար, որ այդ գործում է մի այնպիսի անձնի դէմ, որի կեանքը անարատ, գործը սէր և խօսքը սուրբ է եղել: Այս բոլոր չարութիւններն յառաջ են եկել ինքնասիրութիւնից (մոլեռանդութիւնից, տ. § 48) և իշխելու ցանկութիւնից: Այստեղ մի անգամ ևս կրկնում է մեր խոստովանած իմաստը, թէ մի յանցանքը միւսի մայրն է: Այդ չարագործ մարդոց արարքի մէջ ըստ երևոյթին մի բարի գործ նկատում է—սղադարձակերաց տօնին հեթանոսի տան շէմքը ոտք չեն կոխում: Ինչ բարեպաշտ մարդիկ: Սրանք ևս կարող էին առակի միջի փարիսեցու նման աղօթել—քո սուրբ գանձանակի մէջ արեան գնի փող չենք խառնել (տ. § 56). այս մեծ տօնին հեթանոսի տուն ոտք չենք դնում և պասեք չենք արատաւորում, իսկ

քո սուրբ որդուն ի խաչ հանելը մեր սրբազան պարտքն է: Յիսուս ինքը շատ գեղեցիկ կերպով նկարագրում է այս դասակարգին—սրանք արտաքուստ մաքուր են, իսկ ներքուստ լի են յափշտակութեամբ և չարութեամբ: Նրանց ձեռներն անբիծ են, իսկ սրտերից ծնում են ամենաչար մտքերը, որոնք նման են գերեզմանների, որոց արտաքինը շքեղ է, իսկ ներքուստ լի է ապականութիւնով: Սրանք այն կեղծաւորներն են, որոնք մօղովները քամում են, իսկ ուղտերը կլանում են (տ. § 51.):

Ժ ո ղ ո վ ու ը զ: Փոփոխամիտ, նման շարժուն եղեկի, որին հողմը, որ կողմ ուզում է, ծռում է: Վիւրակէ օրն ուրախ սրտով կոչում էին «ովսաննա Գաւթի որդուն», ուրբաթ՝ կատաղած աղաղակում են «ի խաչ հան զդա»: Բայց այդ ինչպէս պատահեց: — Այդ միջանկեալ օրերի ընթացքում ժողովրդին սառեցրել, անտարբեր էին դարձրել, որովհետեւ Մեսսիան իւր՝ ըսպասած երկրային թագաւորութիւնը չհաստատեց և երբ Յիսուսին կապկպած հեթանոսի ձեռին տեսան, այլևս Մեսսիա չհամարեցին, այլ՝ մի սովորական մարդ, որ արժանի էր այդ խիստ պատժին—այսպէս փարիսեցիները դիւրութեամբ գտան նրանց թոյլ կողմը և մինչև կատաղութեան աստիճան զրգուեցին: Զարհուրելի յանցանք է թեթեամտութիւնը—կատաղած ամբոխը չարութեան հետեւանքը իւր և իւր որդւոց վրայ է ընդունում: Սրանք ևս նոյնպիսի մարդասպաններ են, ինչպիսին իրանց առաջնորդները, փարիսեցիները—սրանք իրանց բարձրափող աղաղակներով ստիպեցին Պիղատոսին յարգելու իրանց ղեկավարների ապօրինի պահանջը: Հ ե ռ ո վ դ է ս ը ու նայնասէր և վայր ի վերոյ բնաւորութեան տէր մի անձն է: Յիսուսի մասին այնքանը միայն կարողանում է ըմբռնել, որ նա հրաշք գործել գիտէ և իշխաններին, թագաւորներին ու հարուստներին նկատողութիւն է անում (տ. § 48.): Երբ իւր հետաքրքրութիւնը բաւականութիւն չէ ստանում, զռեհիկ ձեւով ծաղրում է փրկիչին և յետ է դարձնում իբր անմեղի: Նա շատ լաւ գիտէ, որ կատաղած փարիսեցիները իրանից շատ անգամ լաւ մահու վճիռ կընեն մարգարէի կեանքին, ուստի ոչինչ չէ անում յօգուտ անմեղի և իւր ոչինչ չանելով՝ պատկանում է Յիսուսի սպանողների թուին:

Պ ի ղ ա տ ո ս: Հռովմայեցի դատաւորի մասին դուք շատ

բաժնի բաներ լսեցիք, ինչ կարծիք, որ կհաւանէիք: Նա կուրդ-
կուրացն չէ հաւատում գանդատաւորներին, այլ իբրեւ հմուտ և
հեռատես դատաւոր, ինքն անձամբ է հետամուտ լինում
խնդրին և որպէս արդարադատ՝ Յիսուսին անմեղ է համարում:
Որպէսզի Յիսուսին ազատէ, ընտրութիւնը Յիսուսի և Բարաբ-
բայի մէջ է դնում. խռովում, վրդովում է, երբ ամբոխը պա-
հանջում է խաչել, բայց կնոջ նախադուշութիւնը նորից դո-
րացնում է նրան. ծեծել տալով կամենում է բանը վերջացնել
և ազատութիւն տալ: Պիղատոսի համարմունքը հետզհետէ
բարձրանում է Յիսուսի աստուածորդի լինելու վերաբերմամբ:
Նա միշտ ձգձգում է և աշխատում է վատ վերջաւորութիւն
չտալ դատին և երբ նրան սպառնում են, զոնէ անմեղի ա-
րիւնք իւր գլխին չէ կամենում առնել:

Իրօք՝ Պիղատոսը, որ լուացուեց, էլ ոչ մի յանցանք չունի Յի-
սուսի վերաբերմամբ: — Ձեռները, ճիշտ է լուաց, բայց սիրտը՝
ոչ, որովհետեւ ինքը վճռեց իւր քննութեամբ անմեղ ճանաչու-
ածին «ի խաչ հանել»: Միթէ դա հնարաւոր բան է. չէ՞ որ նա
իրաւունք ճանաչող և արդարութիւն սիրող մարդ էր: — Բայց
իրաւունքից և անմեղութիւնից առաջ իւր սեպհական շահը
ճանաչեց և գերադասեց. արդարութիւնից աւելի իւր անձը
սիրեց — իսկապէս ասած՝ նա չարութիւն չգործեց, բայց բարոյա-
պէս թ ո յ լ ս ր տ ի տէր դառնուեց:

Ապացոյց: Առաջին — ամբաստանութեան ժամանակ, երբ
Յիսուսին անմեղ ճանաչեց, եթէ արդար դատաւոր էր, ժողո-
վրդին իսկոյն պիտի յայտնէր, թէ ես կայսեր անունով ազա-
տութիւն եմ տալիս այս անմեղին: Բայց այսպէս չարաւ, որով-
հետեւ չկամեցաւ քահանայապետներին վիրաւորել և փոխանակ
իւր վսեմ պաշտօնը, անմեղութիւնը պաշտպանելու, գլխանց է
անում և ուղարկում է Հերովդէսի մօտ — մի մարդու, որի վրայ
յոյս դնել չի կարելի: Երբ սա էլ որոշ ոչինչ չէ անում, իբրեւ
միջին ճանապարհ արդարութեան և անարդարութեան՝ ծեծն
է համարում (երկուց տէրանց ծառայել): Բայց այդ բանը կա-
տարելուց առաջ՝ իրան յատուկ թուլութեամբ, որոշման իրա-
ւունքը ժողովրդի ձեռն է տալիս և փրկչին էլ նոյնպիսի յան-
ցաւոր է համարում, ինչպէս մահապարտին և երբ այսպիսով
դատաւորական իրաւունքը ձեռնից թողնում է, էլ ոչինչ չի կա-

րողանում անել «ի խաչ հան գդա» աղաղակողների դէմ:

Իրօք ոչինչ օգնութիւն այլ ևս չէր կարելի անել: — Եթէ
Պիղատոսը կամքի տէր մարդ լինէր, միայնակ պիտի գիմարէր
ամբողջ ժողովրդին և ասէր — ես եկել եմ իրաւունք և արդա-
րութիւն պաշտպանելու և ոչ թէ անմեղներին դատապարտելու:
Կայսեր անունով հրամայում եմ ձեզ այս մարդուն անհանգիստ
չանել, ապա թէ ոչ՝ կհրամայեմ զինուորներին օրինաց համա-
ձայն վարուելու ձեզ հետ: Այսպէս չվարուեց, վասնզի ինչպէս
լիշուեց, թոյլ բնաւորութեան տէր էր և ժողովրդի կամքը
շահելը նա գերադասում էր արդարութեան պաշտպան լինելուց:
Փոխանակ այսպէս վարուելու՝ իւր թուլութեամբ և անարդա-
րութեամբ աշխատեց մի նոր անարդարութիւն գործել, որպէս
թէ զրանով շարժել էր կամենում ամբոխի կարեկցութիւնը, որ
Յիսուսին ազատել կարողանայ, այն ինչ առանց դրան էլ կա-
րող էր: Երբ յաջող հետեւանք չունեցաւ այս արարքը, սկսեց
վարանման մէջ ընկնել և թոյլ տուաւ ամբոխին սպառնալ
իրան և կայսեր բողոքել, որով ենթարկեց խաթամութի աղ-
մկին և այսպէս խեղդեց ներքին ձայնը՝ յօգուտ արգարի: Ար-
դեօք նա ստիպուած չէր այդպէս վարուելու: Ոչ ոք ստիպուած
չէ անարդարութիւն կամ մարդասպանութիւն գործելու, աւելի
շուտով կարող էր կայսեր ապացուցանել իւր արդար վար-
մունքը և ցոյց տալ, որ արգելել է հրէաներին մարդասպանու-
թիւն գործելու և ենթադրենք, եթէ պաշտօնից հեռացնէր, գո-
նէ հանգիստ սրտով կարող էր ասել — ես արդար վարուեցի,
աւելի լաւ է հասարակ քաղաքացի կամ զինուոր և կամ աք-
սորեալ լինել, քան թէ մարդասպան:

Պիղատոսն ուրիշ ձեռով ևս կարող էր արդարանալ — ան-
մեղին ժողովուրդն է դադապարտել և ոչ թէ ես: Սրտաքուստ
նայողին թերեւս այդպէս թուալ, բայց հարցի ներքինը նը-
նկատի առնելով՝ նա պարտաւոր էր (և դրա համար իշխանու-
թիւն էր տուած) անմեղին ազատել, բայց չազատեց: Ուստի
Յիսուսի մահուան հարցում Պիղատոսը ևս յանցաւոր է: Նրա
յանցանքն արդարեւ այնքան մեծ չէ, ինչպէս փարիսեցիներինը
(տ. Յովհ. Ժ. 11.), որովհետեւ սրանը յառաջանում է թու-
լութիւնից, իսկ նրանցը սրտի չարութիւնից:

Պիղատոսի մասին եղած վճիռը խիստ չէ: Չէ որ նա հեթա-

նոս էր, չէր ճանաչում ճշմարիտ Աստուծուն, չգիտէր նրա պատուիրանները...: Բայց նրան երկու անգամ զգուշացրեց Յիսուս (Յովհ. Ժբ. 37, ԺԺ. 11.), մի անգամ էլ իւր կինը և վերջապէս՝ խիղճը, որ Աստուած ամենին էլ՝ և՛ հեթանոսին, և՛ հրէին, և՛ քրիստոնէին հաւասարապէս տուել է—այդ խիղճն էր, որ նրան տատանման մէջ էր ձգել և ամեն կողմնակի միջոցներով կամենում էր փրկել, բայց չկարողացաւ—այդ յայտնի է: Մեզ մնում է ասել, որ հեթանոս Պիղատոսն էլ մասնակից է Յիսուսի սպանման գործին—(«որ ոք գիտիցէ զբարին եւ ոչ առնիցէ....» Ժ. Յակ. դ. 17.):

Քրիստոսի վարմունքի մէջ ոչինչ փոփոխութիւն չկայ—նա նոյն ձևով մտածում, խօսում և գործում է, ինչպէս միշտ: Առանց երկիւղի ներկայանում է դատաւորին, որից իւր մահն ու կեանքը կախումն ունի. խաղաղ և հասգիստ կերպով պատասխանում է ամենին. զարմանալի կերպով ստիպում է հեթանոսին ճանաչելու իւր անմեղութիւնը և աստուածային վեհութիւնը. արհամարհանքով լռում է ստախօս, զրպարտիչ հրէաների չարութեան դէմ, նոյնպէս Հերովդէս թագաւորի առաջ, որը կարող էր նրան օգնել. աստուածային խաղաղութեամբ լռում է և Պիղատոսի առաջ. պահանջած պատասխանն աւելորդ է համարում. իրան գերադասեց նրանից, որի առաջ կանգնած էր և մեծին յատուկ վեհութեամբ լիշեցրեց այն տիրոջ (կայսեր), որի համար վործիք ընտրուած էր Պիղատոսը և որին հաշիւ պիտի տար իւր դատաւորական պաշտօնի համար: Երկնային համբերութեամբ և հեզութեամբ տանում է կարիճի սոսկալի հարուածները. նոյն հանդարտութեամբ տանում է զօրականների ծաղրն ու ծանակը. նոյն հոգւոյ անդորրութեամբ համբերում է տանջանքներին... կարճ՝ հանգիստ է, խաղաղ, հեզ, անվրդով, համբերատար, հաստատակամ, մխիթարուած.... նա զարգարուած է աստուածային ամեն յատկութեամբ:

Բայց ո՞րտեղից է այդ համբերութիւնն ու հոգւոյ վեհութիւնը այդքան վշտերի ժամանակ:—Աստուած նրա մէջն է, իսկ ուր Աստուած կայ, այնտեղ խաղաղութիւն է տիրում, ուստի և նա խաղաղ է և անվրդով. ամենախիստ վշտերի ժամանակ ևս նա բարձր է աշխարհիս բոլոր կարիքներից և վշտերից, որովհետև ոչ թէ մարդկային իշխանութեան ներքոյ է

զգում իրան, այլ իւր երկնաւոր հօր: Նա մխիթարուած է, որովհետև գիտէ, որ նրան ան միայն կարող է պատահել, ինչ որ հօր կամքն է: Թէև նա ամենախիստ փոթորկի մէջն է, որի նմանը մարդիկ երբէք չեն տեսել, սակայն նրա հաւատը սպառնում է փոթորկին, հողմին ու ծովին—ամեն ինչ հանգստանում է (տ. § 36. «Եւ այս է յաղթութիւն....»):

Յիսուս հոգեկան մի անհանգստութիւն ունի այդ վշտերի ժամանակ. նա ցաւում է մարդկանց չարութեան վրայ, մարդիկ, որոնք սիրոյ փոխարէն ատելութիւն են գործ դնում: Իւր ցաւերը չեն ցաւեցնում նրա սիրտը, այլ մարդկանց թուլութիւնը, կոյր չարութիւնը....:

Հ ա մ ա ո ս տ ե լ վ ճ ի ու ն եր ը :

III ա.

Համեմատելով Պիղատոսին Պետրոսի հետ՝ հին ճշմարտութիւնը մի անգամ ևս կհաստատենք—«Հոգիս յօժար է, բայց մարմինս տկար»:

III բ.

Յիսուսի ներկայ և անցեալ վարմանց Աստուածային վեհութիւնն երբ ի մի դասելով և համեմատելով նրա անցեալ և ներկայ մարդկային տկարութեանց հետ՝ կարելի է «ահա՛ այդ գձեզ» միտքը գորացնել:

III գ.

Պէտք է դասաւորել և համեմատել—ներկայ պատմութեան գործող անձնաւորութեանց յանցանքների նման բոլոր յանցանքները (կատարեալ չարութիւն, տատանումն, կուրութիւն, թուլութիւն....) լիշել և ցոյց տալ, թէ այդ յանցանքներն ինչպէս են արտայայտուել՝ գործադրուել ալլոց և Յիսուսի վերաբերութեամբ: Յիշել նմանապէս, թէ այդ գործուած չարութիւններն ինչպէս էր կրում, տանում Յիսուս: Այստեղից կարելի է այն միտքը յառաջացնել, թէ մարդոց (աշխարհի) չարութիւնները Յիսուս իւր անձի վրայ է փորձում. չար աշխարհը նրա համար միայն վիշտ և մահ է պատրաստում: Նա փորձեց և հետը միասին կրում էր իւր մէջ. նա դառն վշտեր կրեց աշխարհի (մարդոց) յանցանքի համար: Թէև այդքան մարդոց յանցանքը իւր ուսերի վրայ կրում է, բայց սեպհական ոչինչ յանցանք չունի—նա սուրբ է և ան-

մեղ. միակն է, որ անփոփոխ մնաց բարու վերաբերմամբ՝ ընդ-
դէմ ամեն տեսակ թուլութեանց, տատանման և փորձութեանց
— այո՛, մինչև անգամ, որքան մեծ էր յանցանքի ոյժը, նոյն-
քան էլ փառաւոր կերպով ցոյց տուաւ իւր սրբութիւնը — նրա
անվրդով հոգեկան դրութիւնը և անբաւի աստիճանի մեծու-
թիւնը յառաջանում է նրանից, որ անբաւական էր աստուածութիւ-
նից: Այն բոլոր վշտերը, որոնք չար մարդիկը հասցրին նրան,
իւր ուսերի վրայ առաւ՝ Աստուծու կամաց հնազանդուելով: Նա
նմանում է զոհի զառանք: որ ի փառս Աստուծու և ի սէր
մարդոց՝ մահու վշտեր է ընդունում, այսպէս և Յիսուս կամովին
իւր վրայ է առնում վիշտը և մահը. Յովհ. ա. 29.:

IV.

«Ահա այդ ցձեղ»: Յովհ. ԺԺ. 5.:

«Ահա դառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի»
Յովհ. ա. 29.:

V.

Յիսուս մեղ համար մի օրինակ է — նա մեր մխիթարու-
թիւնն է վշտերի ժամանակ: Մեկնեցէք ինձ այս առածը — «ձայն
բազմաց, ձայն Աստուծոյ»:

Մեկնել և վարժել — Ժ. ա. Փիլ. բ. 8. «խոնարհե-
ցոյց զանձն լիեալ հնազանդ մահու չափ եւ մահու խաչի»: I.
Ժ. Պտր. բ. 21. 23. «Զի եւ Քրիստոս մեռաւ վասն ձեր եւ
ձեզ եթող օրինակ՝ զի զհետ երթայցէք հետոց նորա: Որ ոչն
արար մեղն, եւ ոչ գտաւ նենգութիւն ի բերան նորա»: Թ.
ա. Հռվմ. բ. 16. «Այլ յորժամ հեթանոսք որ զօրէնս ոչ ունին,
բնութեամբ զօրինացն գործիցեն. նոքա որ զօրէնսն ոչ ունին,
անձանց իւրեանց իսկ են օրէնք»: Թ. ա. Եբր. ա. 3. «Որ է
լոյս.... ՚ի բարձունս»:

Վարժու թիւն — «Եւ մեք հաւատացաք....»: «Եթէ
Աստուած ընդ մեզ է....»: «Երանի սգաւորաց....»: «Եւ այս է
յաղթութիւն....»: «Լեր հաւատարիմ....»: «Հոգի է Աստուած....»:

§ 58

ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ *

Ն ա տ ա կ: Վերնագիրը:

I

Աշակերտներին պատմել տալ, ինչ որ գիտեն Յիսուսի խա-
չելութեան մասին. պէտք է զգալ տալ (երևակայութեամբ)
այս պատժից յառաջացած սոսկալի ցաւերը (ոտները, ձեռները
խաչած — ջերմ, ծարաւ, մարմնի զանազան մասներն ուռած,
ցաւը տևում է օրերով, մահ անօթութեան պատճառով, ուժա-
սպառութիւն, ջրաձգութիւն):

II ա.

Աւանդել նոր նիւթը: Մտթ. իէ. Մրկ. Ժե. Ղուկ. իգ.
Յովհ. ԺԺ.:

Կարգով պատմեցէք ինձ այս տխուր իրողութիւնը և
համառօտ կերպով դասաւորեցէք նիւթը — 1. Յիսուս խաչն
ուսին դնում է Գողգոթա. 2. Յիսուսի խաչելութիւնը, նրա
առաջին խօսքը թշնամեաց համար. 3. Յիսուսին ծաղրում են.

* Ծանօթութիւն — ԽԱՉ ԵՒ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ.

Ձեւ է, որ կազմում է երկու միմեանց կտրող գծերից: Նոյն ձևը
կարելի է և փայտից կազմել: Խաչն առաւելապէս յայտնի էր որպէս
պատժի գործիք: Հին ուխտի մէջ յաճախ խօսք է լինում այս քստմը-
նելի պատժէ մասին, զորօրինակ I. Մովս. ի. 19. II. Եզրաս գ. 11. Ես-
թեր բ. 22. ե. 14. գ. 4. է. 9. Թ. 13 IV. Մովս. իե. 4. V. իա.
22—23. Յեսու բ. 29: Մահուան պատժի այս քստմնելի ձևը հաւա-
նական է փիւնիկեցիներից և կարթագիւնացիներից յոյների և հռով-
մայեցիներին է անցել: Հռովմայեցիները գործ էին ածում յանցաւոր ըս-
տրուկների, աւագակների, ապստամբների... համար. բուն հռովմայեցիք
ազատ էին այս անարգական պատժի ձևից: Հռովմայեցիներից Պաղես-
տին անցաւ խաչելու սովորութիւնը, որ Յիսուսի ժամանակն արդէն
սովորական էր դարձած: Խաչը հնումը անարգ պատիժ էր, որ կա-
րող էր զանազան ձևեր ունենայ, այսպէս երբեմն մահապարտին կա-
պում էին հասարակ ձողի վրայ և ձեռները գլխի վրայ դնելով՝ մե-
խում կամ շամբրում էին ձողի վրայ:

Յաճախ ձողի լայնութեամբ մի ուրիշը ևս աւելացնում էին՝
խոտորնակի ուղղութեամբ և ձեռները, մէջքից սկսած, սրա վրայ
էին կապում: Աւետարանիչների գրածին համաձայն Յիսուսի խաչը

4. Յիսուս և իւր թշնամիները (երկրորդ խօսք) 5. Յիսուս և իւր մայրը (երրորդ խօսք) 6. Յիսուսի վիշտը (չորրորդ և հինգերորդ խօսք) 7. Յիսուսի մահը (վեցերորդ և եօթներորդ խօսք) 8. Յիսուսի մահուանից յետոյ պատահած անցքերը: Նիւթը դասաւորելուց յետոյ՝ անմիջապէս վեր առնել իւրաքանչիւր կտոր և պարզել: Երբէք ուսուցիչը ինքը չպիտի ասի այն՝ ինչ որ կարող է աշակերտների միջնորդութեամբ գտնել: Յիսուս վայր է ընկնում խաչը տանելիս, որովհետեւ դադրած էր—վերջին օրուայ վշտերն ուժասպառ էին արել նրան: Դաւար փայտը նշանակում է անմեղներ, արդարներ (Յիսուս ինքը), իսկ չոր փայտը՝ յանցանքով ծանրաբեռնուած չարամիտ իսրայէլացի ժողովուրդն է: Գողգոթա բառացի նշանակում է գագաթ, որովհետեւ սա գագաթնաձև մի փոքր բլուր է: Նրանց ժամերը մեր ժամանակի ժամերի հետ համեմատել: Քացախը լեզու հետ խառնած սովորութիւն էր խաչեալներին խմացնել, որովհետեւ թմրեցնում էր և ցաւը մեղմում (այսպէս մօտաւորապէս քլօրի (Chlor) ներգործութիւն ունէր): Համաձայն ժամանակի սովորութեան՝ յանցաւորների դատապարտման պատճառը գրում էին և խաչի վրայ կպցնում, որ ամենքն էլ իմանան: Յիսուսի խաչափայտի

խոտորնակի ձող ևս ունէր. Իսկական խաչը վերը չիշած ձեն ունի, այն է մի երկար ձող, որի լայնութեամբ խոտորնակի ձեւով գամւում էր երկրորդ ձողը՝ ուղիղ անկիւնով, որ համեմատաբար կարճ էր առաջինից: Խոտորնակի գամուած ձողի մէջ տեղում սովորաբար կպցնում էին մի հատ սպիտակ տախտակ, որի վրայ մահապարտի յանցանքն էին արձանագրում, իսկ ուղղահայեաց ձողի՝ մօտաւորապէս մէջ տեղում, փոքրիկ փայտեայ մեխ կար, որի վրայ խաչեալը կարող էր նստել: Ոմանք կարծում են թէ ոտների տակ տախտակ ևս կար, բայց դա ենթադրութիւն է: Երբ դատաւորը ի խաչ հան խօսքն արտասանում էր, իսկոյն մահապարտին յանձնում էին զինուորներին, որ դատաւորների որոշածը գործադրուի: Խաչելուց առաջ մահապարտին կապում էին մի սիւնից կամ ձողից, ձաղկում էին կամ չուանեայ խարազանով և կամ կաշեայ փոկով: Յանցաւորն ինքն էր տանում խաչի փայտը: Վզին կախած էր լինում յանցանաց տախտակը և կամ մի ուրիշը առաջով տանում էր բարձրաձայն յայտարարելով: Տանում էին սովորաբար մարդաշատ փողոցներով և խաչում որ և է բարձրութեան վրայ: Որպէս բացառութիւն, շատ քիչ էր պատահում, որ խաչը իւր տեղում տնկած լինէր և յանցաւորին յետոյ տանէին այնտեղ: Խաչը երբեմն այնպիսի հաստ գերաններից էր բաղկացած լինում, որ սանդուխտներ էին մեկնում:

վրայ գրած էր հետեւեալ լատիներէն (Jesus Nazarenus Rex Iudaeorum, այսինքն Յիսուս նազովրեցի թագաւոր հրէից, դրա համար էլ խաչելութեան նկարների վերի մասնում կրճատ ձեւով գրում է Յ. Ն. Թ. Հ.) յունարէն և հրէաներէն խօսքերը: Ի՞նչու համար երեք լեզուով էր գրուած:—Հրէարէն, իսկապէս արամեականը (սա Գալիլիայի բառբառ է. Յիսուս այս լեզուով էր քարոզում՝ ժողովրդին հասկանալի լինելու պատճառով: Սյդ լեզուի մի քանի նախադասութիւններն, ինչպէս որ Յիսուս արտասանել է, բառացի ձեւով պահպանուել են աւետարանի մէջ, այսպէս «էլի էլի լամա ասաբ[թանի]», «տալիթա կոււ», «եփիփա[թա]» նրա համար, որովհետեւ ժողովրդի լեզուն էր: Յունարէնը իբրեւ բարձր դասակարգի լեզու (նոր-ուխտի լեզուն), իսկ լատիներէնը (դաղմատերէն) տիրող ազգի լեզուն էր (սրանով պարզ որոշւում է, թէ այն ժամանակ Պաղէստինէում երեք տիրապետող լեզու կար): Ծարաւը խաչեալների գլխաւոր չարչարանքն է: Վարագոյլը գտանւում էր սրբութիւն սրբոցի և սրբութեան մէջ տեղը—սա բաժանում էր տաճարի մի մասը միւսնից: Գերեզմանները, ինչպէս և Պաղարօսիներ, ժայռերի մէջ էին փորած:

վարից վեր. մարդիկ էին կանգնում վրան. չուանով ձգում և մեխում: Բայց սովորաբար խաչում էին փայտի վրայ և յետոյ բարձրացնում ու տնկում: Խաչուածները շատ ուշ էին մեկնում և սարսափելի ցաւ զգում: Յաճախ սրունգները կոտրատելով՝ կամ կողը տէգով խոցելով, արագացնում էին թշուառների մահը: Մահապարտների ցաւը մեղմելու և նրանց նեարդերը թմրեցնելու համար խմացնում էին մի տեսակ հիւթ՝ քացախ լեղիով խառը (մօտաւորապէս հաւասար է մեր քլօր (Chlor)-ին. Յիսուսի վերաբերութեամբ Մարկոս չիշում է քացախ, իսկ Մատթէոսը՝ գինի և լեղի. Հռովմայեցի զինուորները զինու հետ քացախ էին խառնում և այնպէս խմում: Կարեկցելով Յիսուսին իրանց զինուց բաժին տուին. Խաչածների շորերը հանում էին վրաներից և մի սփածանելի միայն թողնում: Թէ քանի տեղից էին մեխում, դրա մասին կարծիքները տարբեր են—ոմանք ասում են թէ ձեռները միայն և ապացոյց են բերում այն հանգամանքը, որ հեղինէ թագուհին, երբ խաչը գտաւ, երկու մեխ միայն կար, ոմանք չորս, այսինքն ոտներն առանձին առանձին և ոմանք երեք, այսինքն երկու ոտը մի մեխով գամած (աթոս, մաթոս, գաթմաթոս): Այս դրութեամբ մարմինը արեւի ճառագայթների տակ կախուած մնալով փայտի վրայ, խաչեալը քստմնելի տանջանքներ էր կրում—սաստիկ ջերմ էր չառաջանում, լեզուն պապակում էր, արիւնը խփում էր գլուխը և սիրտը, գլխացաւ

II. բ.

Խ ո Ր ա ս ու զ ե լ սաներին բարոյական — կրօնական զգացման մէջ: Ի՞նչպիսի հոգեկան տրամադրութեամբ է ընթանում փրկիչը իւր մահուան ճանապարհը: Թէև նրա տկարացած մարմինը ընկնում է խաչի տակ, սակայն հոգեպէս զօրեղ է. նա մխիթարուած տանում է հոգեկան վշտերի աւելի ծանր խաչը՝ ի սէր մարդկութեան՝ նրա մեղաց փրկութեան համար: Կանանց ասած խօսքերը գեղեցիկ վկայութիւն են նրա սիրտը ճանաչելու համար — ինչպէս միշտ, նոյնպէս և այժմ՝ մահուան ընթացքի բարեկեցութիւնն ու վիշտը իրանից միշտ բարձր է դասել: Կարեկից կանանց արտասուքը պէտք չեն նրան, որովհետև իւր ցաւը շուտով կանցնի, նա աւելի հեշտ կտանէ այս ցաւը՝ քան թէ կանայքն՝ իրանց գալոց վշտերն ու տրտմութիւնը: Թող նրանք լան իրանց որդւոց գլուխը, այլև Երուսաղէմի կործանումն: Եթէ արդարն այսպէս է վշտանում, որքան սարսափելի պէտք է լինի յանցաւորների մահը: Այն ժամանակ շատերը երջանիկ կհամարեն իրանց, եթէ լեռները ծածկեն իրանց, որպէսզի ազատուին այն մաշող ցաւերից, որ թշնամին պիտի պատճառէ: Այսպէս Յիսուս իւր ցաւերի մէջ, մահուան

մինչև որ մահանում էր: Սովորաբար 6—12 ժամ տևում էր այս տեսարանը, բայց երբեմն 24 ժամ և մինչև անգամ մի քանի օր, մինչև գիշատիչ թռչունները կամ շներն ուտում էին մարմինները:

Քիտուորները հսկում էին խաչուածներին և ոչ ոք իրաւունք չուներ դիակը վերցնելու, բայց վերջը՝ Օգոստոսից սկսած՝ ցանկացողներին տրւում էր մարմինը: Կարծիք կայ, որ Կոստանդին մեծի օրօք վերացուեց խաչի պատիժը:

Յիշենք այստեղ մի քանի տեսակ խաչեր, որոնք աւելի արուեստի մէջ են երևում, քան թէ հին ազգերի: Կատինական խաչ — եթէ խոտորնակի ձողը երկայնութեան ձողի մէջ տեղից բարձր է, այսինքն (+): Այս միևնույն ձևը գլխի վայր շուռ տուած՝ կոչւում է Պետրոսի խաչ (+), որովհետև Պետրոս առաքելին այսպէս պիտի խաչած լինեն: Եթէ չորս կողմերը միմեանց հաւասար են, այնպիսին կոչւում է յուսնական խաչ, այսինքն (+):

Խաչը նախ քան զՔրիստոս, անարգական նշանակութիւն ունէր իսկ Յիսուսի մահուանից յետոյ, քրիստոնէութիւնը նրան սուրբ նշան է համարում:

Երեսին՝ մատներով խաչակնքելու սովորութիւնը օգի մէջ, հասնում է մինչև երրորդ դարը, որից յետոյ եկեղեցական աստուածապաշ-

տպէում անգամ, կարեկցում է իւր ազգի որդւոց ապագայ դառնութեան — նա իւր ազգին Մովսիսի նման հաւատարիմ է սիրում:

Ի՞նչ է մտածում Յիսուս խաչափայտի ներքոյ: — Ես իմ հոգին, զգացմունքները դառն ըմպելիքով չեմ թմրեցնի, իմ հօր ուղարկած վշտի բաժակը մինչև վերջին կաթիլը՝ մինչև մրուրը կիմեմ. գիտակցաբար կտանեմ ցաւերը և կմեռնեմ, որպէսզի ցվերջին կէտ կարող լինիմ մտածելու երկրիս վրայ՝ իմ եղբայրների, իսկ երկնքում՝ հօրս վրայ:

Ի՞նչ է մտածում Յիսուս խաչի վրայ: — Մի մարդ, որի ձեռները և ոտները մեխուած են, ի՞նչ կարող է մտածել — տրտուեց, դժգոհութիւն, անէծք խաչողներին և դատաւորին: Այդպէս պիտի լինէր, մենք մարդիկս այդպէս սովոր ենք, բայց «զի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր...»:

Յիսուս ին դրում է երկնաւոր հօրից ներողամիտ լինել դէպի իւր թշնամիները, վասնզի համոզուած է, որ նրանք չգիտեն, թէ ինչ են գործում: Ո՞վքեր են այդ թշնամիները. իրօք չգիտէն նրանք իրանց գործածը: — Ջորականները գործիք են իրանց տիրոջ ձեռին, որոնք կատարում են հրամանները, նրանք չեն էլ մտածում իրանց արածի վրայ: Միւս կողմից՝

տութեան մէջ ընդունուեց: Արեւմտեան ազգերը խաչակնքում են ձախից դէպի աջ, իսկ արեւելեան ազգերը՝ աջից դէպի ձախ: Միաբնակները (մօնօֆիզիտները) մի մատով, իսկ միւս քրիստոնէաց ազգերը երեք մատով: Խաչակնքելիս հետևեալ խօսքերն են լինում — «չանուն հօր, եւ որդւոյ եւ հոգւոյն սրբոյ»: Քրիստոնէութիւնը չբաւականացաւ այս հասարակ նշանով. մարդիկ սկսեցին և խաչ նկարել առանց Յիսուսի պատկերի և կամ պատկերով: Կոստանդին մեծից սկսած՝ խաչելութեան պատկերը յունական Χϛ. (X և ϛ = քա և յ)՝ Քրիստոս բառի երկու սկզնատառերով) էին նկարում: Հռոմէական գետնափորներում գտնուած հին քրիստոնէութեան խաչի նշանը T տառի ձևն ունի, որ դրօշակների վրայ էին նկարում: Կոստանդին մեծի դրօշակը մեր ներկայ խաչափայտի ձևն ունէր, որի պաշտպանութիւնը չիտուն քաջ զինուորների էր յանձնուած: Յետոյ սովորութիւն եղաւ գործ դնել և տներում, փողոցներում, գերեզմանների վրայ՝ սկզբում միայն մարտիրոսների, նահատակների դերեզմանի վրայ, իսկ չետոյ եկեղեցիներում, առաւելապէս սեղանի վրայ — նոյն իսկ եկեղեցիները խաչաձև յատաղիժ ունեցան: Երբ հեթանոս երկրներ էին նուաճում, ամեն ուրեք խաչեր էին տնկում: Եկեղեցական զգեստների վրայ նկարում, գործում կամ կարում էին խաչեր, մինչև անգամ մետաղից

որպէս անկիրթ և հեթանոս մարդիկ, չեն էլ ճանաչում այն անձի մեծութիւնը և փառքը, որին ի խաչ են հանում: Հարկաւորապէս նոյնպէս ոչինչ գիտակցութիւն չունի իւր գործածի մասին—նա Պիղատոսի գործին է: Ամենից լաւ Պիղատոսն էր ճանաչում Յիսուսին, բայց նա էլ՝ մասամբ երկիրդից, մասամբ ինքնասիրութիւնից և մասամբ էլ որպէս հեթանոս, չկարողացաւ ճանաչել թէ ով է նա, որի համար համաձայնում է՝ որ ի խաչ հանեն: (Թէ Պիղատոսը բարկացել էր քահանայապետների վրայ, այդ պարզ երևում է նրանից, որ զիրը չփոխեց: Պիղատոսը ծաղրում էր իրանց թագաւորի խաչողներին. երանի՜ նա փոխէր զիրը և կատարէր հակառակորդների կամքը, բայց նրա փոխարէն ունենար նոյնպիսի կամքի մեծութիւն և վճռակա-նութիւն իւր դատաւորական պաշտօնն արդարութեամբ՝ առանց աչառութեան վարելու): Տեսնում էք, սա էլ մօզուկները քա-մում է, իսկ ուղտը կուլ է տալիս:

Քահանայապետները և փարիսեցիները նոյնպէս լաւ չեն ճանաչում Յիսուսին: Բայց միթէ նրանք չպիտի գիտենային իրենց գործածը: Նրանցից և ոչ մինը ներքին կերպով համոզուած չէր, որ Յիսուս ճշմարիտ Մեսսիան է.

պատրաստած և կպցնում էին վրան: Բազմաթիւ միաբանութիւններ սկսեցին իրանց շորերի վրայ զանազան ձևի խաչեր գործածել. նոյնպէս ծիսակատարութեանց ժամանակ (խաչվառ):

Երբ հեղինէն Յիսուսի իսկական խաչափաշտը գտաւ, նրա մի մասը Կոստանդնուպոլ բերաւ:

Հինգերորդ դարում սովորութիւն էր եղած փոխանակ խաչի՝ գառը ներկայացնել, որի կրծքից արիւն էր հոսում, բայց (80 թ. Կ. Պոլսի վեցերորդ ժողովում արգելուեց և որոշեց զառան փոխանակ փրկչին իրան նկարել խաչափաշտի վրայ՝ խաչուած դիրքով:

Վեցերորդ դարից սկզբին է առնում այն սովորութիւնը, որ անգրագէտները փոխանակ ստորագրելու իրանց ազգն ու անունը, երեք խաչ էին քաշում: Այս սովորութիւնը նրանով էր բացատրւում, որ խաչը պիտի չիշեցնէր ստորագրողներին արդարութիւնը: Վերջը սովորութիւն դարձաւ հրովարտականների և վկայագրերի վրայ ևս ազգի և ազգանունան ստորագրութեան հետ նաև խաչ գծագրել: Ըստ ձեռագրերի, նոյնպէս ուսման վկայագրերի (դիպլոմ) ձևկատին՝ փոխանակ Աստուծու անունը չիշելու՝ խաչ էին նկարում: Զանազան մարդիկ զանազան գոյնի մելանով էին նկարում խաչերը, օրինակ բիւզանդիայի իշխանները գրում էին կանաչ թանաքով, չունաց կաշարները՝ կար-

ձիշտն այն է, որ բոլորն էլ նրան սուտ մարգարէի տեղ են ընդունում (մանաւանդ երբ նա յաղթուեց), բայց զխաւորապէս նրա համար էին այդպէս համոզուած, որ նա շօշափում էր իրանց իշխանութիւնը, ակնարկում էր իրանց սխալները և որ զխաւորն է՝ հայրենի՝ ծերոց աւանդութիւնները քննութեան էր ենթարկում: Այսպէս ուրեմն ինքնասիրութիւնից և մոլեռանդութիւնից դրդած են գործում (տ. § 48.)—ուրեմն սրանք ևս Մեսսիայի մահը անգիտակցաբար են յառաջ բերում: Թէ Յիսուսն անմեղ էր, այդ նրանք պէտք է գիտենային. թէ նա Մեսսիան էր, այդ էլ կարող էին իմանալ նրա կենցաղավարութիւնից և կատարած գործերից, բայց նրանց փառասիրութիւնը և մոլեռանդութիւնը չթողեց, որ ճշմարտութիւնը ճանաչեն—ահա՛ սա էլ նրանց սխալն է: «Ի խաչ հան զգա» աղաղակով ժողովուրդը կոչը գործիք էր կոչը առաջնորդների ձեռին. նրա համար միայն լսում և հաւատում էր նրանց, որովհետև յաղթող հանդիսացան և Մեսսիան երկրաւոր թագաւորութիւն չկարողացաւ հիմնել: Երկրի մէջ ապրող բոլոր ժողովուրդը պէտք է ճանաչած լինէր փրկչի անմեղութիւնը, ուստի նա ևս առանց յանցանքի չէ: Յիսուս բոլորի յանցանքն էլ անգիտութեան է վերաբերում և ոչ թէ ծնունդ չարամիտ գործողութեան:


Բայց և այնպէս խնդրում է երկնաւոր հօրը, որ այս յան-

միր, իսկ անդիպչի թագաւորները՝ նորմանների նուաճումից առաջ՝ ոսկւով էին գրում: Մեր կաթողիկոսը կարմիր գոյնէ գործ դնում: Կնքագիտական և դրամագիտական արուեստի մէջ անգամ ամենահին ժամանակներում գործ էին ածում խաչի զանազան ձևեր: Խաչի սովորական ձևերն են—1, սովորական կամ յունական խաչ, եթէ չորս թւերն էլ իրար հաւասար են, այսինքն +. 2, լատինական կամ եպիսկոպոսական խաչ, եթէ ներքևի թւեր վերևինից երկար է, գործինակ +. 3, թեք կամ Անդրէասի խաչ, որովհետև Անդրէաս առաքեալին այդ ձևի խաչի վրայ նահատակեցին, գործինակ X. 4, Փիլիպպոսի խաչ (T), որովհետև աւանդութիւնն ասում է, թէ առաքեալն այս ձև խաչի վրայ նահատակուեց: Այս ձևը կոչւում է և եպիսկոպական կամ Անտոնիոսի խաչ, որովհետև սուրբն անտոնիոս Եգիպտոսում սրանով խորտակեց կուռքերը և հալածեց ժանդախտը. 5, աւագական խաչ, գործի-նակ Y. 6, դաւագանեայ խաչ, որի իւրաքանչիւր թւեր ընդ-

ցանքն էլ ներէ, ինչպէս որ ինքը ներել է: Յիսուսից առաջ դեռ ոչ ոք այդպէս չէ աղօթել իւր թշնամեաց բարեկեցութեան համար և այն էլ այն թշնամիների համար, որոնք ամենադառն վշտերն էին պատրաստել նրա համար: Օրինակի համար՝ Գաւիթն այնքան կարողացաւ զսպել իրան, որ իւր թշնամիներին (Սաւուղ և Սեմէի) չարութիւնն չհասցնէ— փրկչի համեմատութեամբ նա շատ աղքատ է սիրով: Այսպէս ուրեմն մենք տեսնում ենք, որ նա իւր խօսքերը, քարոզածները («սիրեցէք զթշնամիս ձեզ...») ոչ թէ խօսքով միայն ասել է, այլ և գործով կատարել է և այն օրից սկսած՝ միայն բարի քրիստոնեաները նմանապիսի վշտերի ժամանակ աղօթել են— հայր ներիւր նրանց, որովհետեւ չգիտեն, թէ ինչ են գործում:

Ի՞նչ կմտածէր Յիսուս, երբ ժողովուրդը և նրա գլխաւորները ծաղրում էին իրան: Անշուշտ կցաւէր նրանց չարախնդացութեան և անդթութեան վրայ, որոնք փոխանակ ի դուր շարժուելու, նախատում են. նա անշուշտ այսպէս կմտածէր— այս ծաղրը և այսն առնելը յառաջանում է թիւրիմացութիւնից— նրանք սխալ են հասկանում Մեսսիական կոչումը: Ես կամենում էի յանցանքը ջնջել երկրիս երեսից, բայց դրա

հատում է խոտորնակի սիւնով, զորօրինակ ¹⁾ 7, բրախաչ, զոր օրինակ ²⁾ չորս ուղիղ անկիւն ունի, որի իւրաքանչիւր ծայրը նույնպէս ուղիղ անկիւն է կազմում. 8, քառաթև խաչ ³⁾, որի ամեն թևն առանձին խաչ է կազմում. 9, յարութեան խաչ կամ խաչվառ կամ խաչադրոշ ⁴⁾ որի ուղղահայեաց կողմը երկար է և վերելում մի խաչ ունի. 10, կրկնակի խաչ կամ պատրիարքական ⁵⁾, գործ է ածում կաթոլիկ եկեղեցին: Վերևի գիծը նշանակում է այն տախտակը, որի վրայ Պիղատոս գրեց Յիսուս նազովրեցի՝ թագաւոր հրէից. 11, կրկնաթև խաչ, որի երկու թևը առանձին առանձին խաչեր են կազմում. գործ են ածում Ռուսաց ըստկոյնիկները, զորօրինակ ⁶⁾ 12, երրակի խաչ ⁷⁾, գործ է ածում պապը և իւր նուիրակը: Կրկնակի խաչ կրում էին պատրիարքների, իսկ սովորական (+) խաչը եպիսկոպոսների առաջով: 13, Առաջնորդական խաչ (+) սովորական խաչ, ոսկեայ շղթայով, որ կրում է բողոքականների առաջ-



հակառակն է կատարում— մեղքը սարսափելի ձևով աճում է. անշուշտ երկնաւոր հօրից կխնդրէր ներելու և այս յանցանքը: «Յրուսաղէմ, Յրուսաղէմ, դու որ մարգարէներին կոտորում էիր, քանի քանի անգամ կամեցայ քո երեխաները ժողովել այնպէս, ինչպէս հաւը ժողովում է իւր ձագերին թեւերի տակ, բայց չկամեցաք: Ահա՛ ձեր տունը աւերակ կթողնուի ձեզ»: Եթէ չէք դառնայ և չէք ապաշխարի, Ստուած ձեզ թողութիւն չի տայ, ուստի պատիժն անխուսափելի է:

Ի՞նչ է մտածում Յիսուս իւր վիճակաւից երկու աւաղակների վրայ: Երբ թշուառներն աղաղակում էին վշտի ձեռից, համբերութեան հեղինակը կարեկցում էր նրանց վշտին. երբ աւաղակներից մինը՝ փոխանակ զղջալու իւր յանցանքները և ներողութիւն խնդրելու երկնային դատաւորից, ժողովրդի բաղմութեան հետ ծաղրում և պահանջում է ցոյց տալու իւր մեսսիական զօրութիւնը և իրան խաչից ազատելու, այն ժամանակ փրկչի ներքինը և՛ աւելի վշտանում է: Սակայն միւս աւաղակի ձայնը որպէս երկնային մեղեթի է հնչում փրկչի ականջին, վասնզի նրա մէջ իւր որոնած սիրտն է նկատում. այս յանցաւոր սրտի մէջ երևում է զղջումն, ապաշխարութիւնն, (և դու չես վախենում Աստուածանից, մենք իրաւացի կերպով ենք պատժուած) հաւատ (Յիսուսն անմեղ է, նա այսօր և եթ երկնային արքայութեան մէջ կլինի. նա՛ թշուառիս չի մոռանայ, եթէ ես նրան սրտանց խնդրեմ):

Նորդի պաշտօն վարողը. 14, Պետրոսի խաչ (+), լատինական խաչը հակառակ ձևով, որովհետեւ Պետրոս առաքեալին գլխի վաչր խաչեցին, ուստի և Պետրոսի խաչ. 15, Հայկական խաչն (+), ըստիս այս ձևը պիտի ունենայ խոտորնակի երկու թևերը հաւասար, երրորդ կողմը (վերին) նախկին երկուսից երկար, իսկ չորրորդն (վարի) ամենից երկար; ինչպէս նկատում է հին խաչաքարերի պատկերներից:

Անիքների և դրամների վրայ փորագրած խաչը նշանակում է այնտեղը, որտեղից պիտի սկսել կարգալը— տողի սկիզբն:

Ներկայումս խաչի ձևը զանազան դիրքով գործածութիւն ունի գիտութեան զանազան ճիւղերի մէջ, զորօրինակ թուաբանութեան մէջ յունական խաչը նշանակում է աւելացնել, իսկ անդրէասի խաչը՝ բազմապատկել, կրկնապատկել: Խաչը ջերմաչափի 0-ից բարձր նշանակում ջերմութիւն: Երաժշտութեան մէջը հասարակ խաչը ձայնը բարձրացնելու նշան է, կրկնակի խաչը՝ կէս ձայն բարձրացնել....

Այս խօսքերի վրայ Յիսուս էլ ինչ կմտածէր (կարծէք նրա պատասխանը մեր ականջին ձայն է տալիս): Այժմ աւելի ուրախ է—«ճշմարիտն եմ ասում ձեզ, իսրայէլի մէջն էլ այսպիսի հաւատ չգտայ»: Յիսուս մտածում է—քանիցս փնտռել եմ հաւատ ասած բանը հարստի և աղքատի, հիւանդի և առողջի, մեղաւորի և արդարի մօտ, բայց՝ քչերի մօտ եմ գտել, իսկ այժմ իմ որոնած հաւատը ինձնից հեռի չէ՝ արիւնսով ներկուած և վշտի մէջ ընկղմած խաչին բեւեռած մի աւազակի, մի մարդասպանի մէջ. նա ինձ բացէ ի բաց խոստովանում է մարդկանց առաջ, որոնք ծաղրում և այսպէս են առնում իմ մեծօրական կոչումը. նա միայնակ պաշտպան է հանդիսանում ինձ, երբ իմ աշակերտները երկիւղից լռեցին: Արդարեւ բարին մարդոց սրտի խորքում դեռ ևս չէ մահացած. նա յանցանքից դեռ ևս զօրաւոր է: Ես քեզ չեմ մոռանայ, ես քեզ կյիշեմ. քո հաւատը մեղմեց իմ ցաւերը: Ես եկել եմ հէնց քեզ նմաններին փնտռելու, ողորմութեան և շնորհի կարօտ յանցաւոր: Դու կորած էիր, ես քեզ նորից գտայ. դու մեռած էիր, կենդանացար: Արի ինձ հետ, անառակ որդիդ, դու առաջինը կլինես, որ ինձ հետ իմ հօր թագաւորութիւնը պիտի գաս—երկնային ճանապարհի վրայ փրկիչը և յանցաւորը միասին պիտի լինին: Ես քեզ հետ հօրս մօտ կգնամ և կասեմ նրան—հայր, մենակ չեմ եկել, մէկին էլ հետս եմ բերել յանցաւոր աշխարհից և այն մի յանցաւորի, մի աւազակի, մի մարդասպանի. ես գիտեմ դու կսիրես սրան և կհամբուրես իբրեւ անառակ որդու, հայրդ գթաւատ, վասնզի նա ինձ հետ ցանկացաւ քեզ մօտ գալ: Սրան պիտի հետևեն սրա նմանները. երկիրս այլ ևս կորած չէ, այլ փրկուած է, որովհետեւ իմ սէրը, քո շնորհը և սրա հաւատը շատ միլիոնաւոր սրտեր պիտի երկինք գրաւեն:

Ի՞նչ է մտածում Յիսուս իւր մօր մասին: —Խեղճ մայրիկ, որքան ցաւում է սիրտս քեզ համար, որ դու որդուդ պիտի թողնես: Ի՞նչ ուրախութիւն էր քեզ համար Գաբրիէլի աւետման օրը, հովիւների գալուստը և երկնից հրեշտակների փառաբանութիւնը, թագաւորների բերած ընծաները, Կանայի հրաշքը... և այն ուրախ անցեալը, որ մոռանալ չես կարող: Ի՞նչ յոյսեր ունէիր—քո որդին մի օր Գաւթի գահի վրայ պիտի բազմի, իսկ այժմ գահի փոխարէն խաչի վրայ ես

տեսնում—փոխանակ ոսկեայ պսակի, փշեայ պսակ դրին որդուդ գլխին. դատապարտեցին որպէս մարդասպան. խաչի վրայ բեւեռեցին աւազակների մէջ տեղը. այժմ դու լաւ կյիշես Սիմէօն ծերունու խօսքերը սրի մասին (Ղուկ. բ. 35.): Այժմ սուրը քո սրտի մէջն է արդէն. մի լար, ես քեզ մի ուրիշ որդու կյանձնեմ, որ քեզ կխնամէ, որպէս հարազատ մօր, նա իմ սիրելի աշակերտն է, ինձ սիրում է—նա միայն հետևեց ինձ մինչև խաչը:

Բայց նախ քան Յիսուս իւր հոգին հօրը կաւանդէ, լսենք նրա բերանից չորս հատիկ խօսք ևս (երկուսը վերաբերում են իւր վշտերին, մինը իւր գործերին, իսկ մինն էլ իւր հոգու մասին—այսպէս ուրեմն բոլորն էլ իւր անձի մասին. նախընթաց երեք խօսքերը ուրիշների մասին էր):

Ի՞նչ է չորրորդ խօսքի իմաստը:—Յիսուս բարձր ձայնով աղաղակում է հօրը և դանգատում է, որ նա բարձի թողի է արել իրան: Միթէ Աստուած մոռացել էր Յիսուսին: —Աստուծու հոգին ամենուրեք է, Աստուծու կամքը նոյնպէս, առանց նրա կամքի ոչինչ չի պատահում: Աստուծու սէրը մօտիկ է այն ամենին, որոնք նրան սիրում են. Աստուծու սէրը ամենից առաջ Յիսուսի մօտ պիտի լինէր, ուրեմն Յիսուս ըզգում է, որ Աստուած մոռացել է իրան: Յիսուս ի մանկութենէ՝ թէ մտածութեամբ՝ թէ խօսքով և թէ գործով Աստուծու մօտ է եղել և Աստուած էլ նրա մօտ—նա ինքն ասաց. «Ես եւ հայր իմ մի եմք»: Բայց ինչպէս է, որ նա բարձի թողի է զգում իրան:—Յիսուս վերջին խօսքն ասելուց առաջ երեք ժամ շարունակ լռելեայն տանում էր սոսկալի վշտերը խաչի վրայ: Յաւը հետզհետէ սաստկանում էր. նրա ներքինը մռայլ է. ուստի և աղաղակում է առ հայր: Դա Յիսուսի զգացած ցաւի ամենաբարձր աստիճանն է, աւելի խիստ քան թէ Գեթսեմանումն էր, քան թէ հռովմայեցի զինուորների հարուածները: Ո՞րքան ժամանակ է տևում, որ իրան բարձի թողի արած է զգում: Մի րոպէ միայն, այնուհետեւ ամենամեծ փորձութիւնից յաջող դուրս եկաւ և հոգին նորից զօրեղ հանդիսացաւ մարմնուց—«Ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու»:

Ո՞րն է հինգերորդ խօսքը: Սրանով ցոյց է տալիս իւր մարմնական վշտի վերին աստիճանը և արդարեւ խաչեալ-

ները մեծ ծարաւ են զգում. նա մի ումպ ջուր է խնդրում պապական լեզուն հովացնելու: Զինուորից մինը չէ մերժում նրա խնդիրը և ինչ կարծիք, որ փրկիչն էլ նրան չէր մոռանալ:

Ա երջին խօսքն ասելուց առաջ ինչ էր մտածում Յիսուս:—«Ամենայն ինչ կատարեալ է»— երկրի մէջ ես ինչ որ պէտք է անէի, արել, վերջացրել եմ: Ես մաքուր, անբիծ, առանց յանցանքի կեանք վարեցի, մարդկային առաջին սրբակենցաղ կեանքն արդէն մուտք է գործել երկրի վրայ. ես օրէնքըն ամբողջացրել եմ ոչ թէ արտաքին ձևով (գործով), այլ և ներքին կերպով (սքտով), վասնզի իմ հօրը և եղբորը ինձնից աւելի եմ սիրել և անց եմ արել, ինչ որ հօրս կամքն է եղել: Յանցանքն ինձ շատ անգամ շողոքորթել և զրաւել է կամեցել, բայց միշտ յաղթուել է և այս առաջին անգամն է, որ յանցանքը պարտութիւն է կրում երկրի վրայ: Փրկչական կոչումը կատարել եմ. հիւանդներին բժշկել եմ. նոյնպէս սրտով յանցաւորներին: Աստուծու շնորհաց աւետարանը քարոզել եմ երկրիս վրայ. կեանքիս գնովն էլ ապացուցեցի, որ նա ճշմարիտ է, ուրեմն այդ աւետարանը յաւիտեան պիտի մնայ երկրիս վրայ—մարդիկն ունին այժմ ինչ որ պէտք էր երջանկութեան համար: Ես ցոյց տուի մարդոց, թէ ինչ ձևով պիտի կեանք վարեն. ցոյց տուի, որ եթէ հաւատան և հետևեն իմ օրինակին, երջանիկ են, իսկ եթէ յաջողութիւն չունեցան և փորձութեան մէջ ընկան, դրա համար ևս միջոց ցոյց տուի—թող դիմեն երկնաւոր հօրը, իբրև անառակ որդիք. ես իրկնից թագաւորութիւնը թշուառ երկրի վրայ տեղափոխեցի. յանցանքին յաղթեցի ի սէր իմ եղբայրների: Ով ինձ կհաւատայ և կհետևի, մեղաց իշխանութիւնից ազատուած է, նա երկնքի որդի է:

Յիսուս խաչի վրայ ևս մտածում է այն՝ ինչ որ իւր ամբողջ կեանքի մէջ խօսել և գործել է յօգուտ մարդկութեան. այո՛, նա խաչի վրայ ևս ապացուցեց, որ կատարեալ մարդ է և կատարեալ Աստուած:

Յիսուս ինչպէս է աւանդում հոգին:—Հանգիստ և խաղաղ կերպով, որովհետև հոգեպէս սուրբ և մաքուր (աստուծային) կեանք է վարել. շատերի մէջ նոյնպիսի հոգի է ներշնչել. նա աստուծային գործի հիմքը դրաւ երկրիս վրայ. մաքդկանց փրկեց. երկնային արքայութիւն տարաւ. հրճւում է գործի յաջողու-

թեան վրայ և յաղթութեամբ դնաց իւր առաքելի մօտ: Այս բոլորը Յիսուսի խօսքի մէջն է պարունակուած, որ ասում է. «Հայր, ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ»:

Այս բանից յետոյ Յիսուս խոնարհեցրեց գլուխը և աւանդեց հոգին: Այժմ հրտեղ է Յիսուս:—Ծակոտած, խոցոտած և արիւնաներկ մարմինը կախ է ընկած խաչի վրայից՝ գլուխը փշեայ պսակով պատած, սակայն ճշմարտութեան թագաւորը՝ Աստուծու որդին իւր երկրաւոր հանգերձը երկրի վրայ թողնելով՝ երկրային բնակարանից երկնայինը տեղափոխուեց և տարաւ իւր հետ փրկութեան երեխայիքը՝ աւագակի հոգին:

Ի՞նչ պատահեց երկրիս վրայ, երբ թագաւորը թողեց իւր խաչեայ զահր:—Խաւար, կարծես ամբողջ երկրագունտը ողբալիս լինէր երկրիս սոսկալի յանցանքը, միայն քարասիրտները անզգայ էին: Տաճարի վարագոյրը պատառուեց—այժմ ամենայն ոք կարող է անձամբ Աստուծու մօտ գնալ. քահանայապետի կարեւորութիւն չկայ այլևս, որ նրա համար զոհ մատուցանէ: Յիսուս աստուածային զթութեան շնորհ թողեց, որը մոլորեալին և յանցաւորին դէպի ուղղութեան ճանապարհն է առաջնորդում: Զոհի կարեւորութիւն չկայ այլևս. Աստուծուն հոգւով և ճշմարտութեամբ պէտք է երկրպագանել—կարճ՝ պէտք է Յիսուսի նման կեանք վարել:

Երկիրը շարժւում է, ժայռերը պատառւում են՝ և գերեզմանները բացւում են: Այս նշաններով Աստուած ինչ է ուզում յայտնել:—Որ խաչի վրայի եղածը սովորական մարդ չէ (տ. Յիսուսի ծննդեան նշանները), նա բոլոր մարդկանց թագաւորն է, իմ որդին է: Թերևս Աստուած սրանով մեզ մի ուրիշ բան ևս հասկացնում է: Հին հրէական կրօնը, որ կարծւում էր թէ երկրի նման հաստատուն է, տատանւում, շարժւում է. այլ ևս Մովսէսը և քայանայապետը չեն կառավարողները, այլ՝ Յիսուսը—քրիստոնէութիւնն արդէն սկսում է իւր հսկայական քայլն անել: Վիմային երկիւղը, որ ցարդ ծանրանում էր յանցաւորների սրտի վրայ և այդպիսեաց մահացնում, անընդունակ դարձնում զղջման և ապաշխարհութեան համար, այժմէն իսկ գլորւում է—յանցաւորները դուրս են դալիս իրանց սրտի գերեզմաններից նոր կեանքի համար:

Այս նշաններն ինչ ներդրութիւն ունեցան: Հեթանոս

Հարկերապետը Հաւատաց այն բանին, ինչ որ Աստուած երկրաշարժով ասում էր, թէ արդարեւ սա Աստուծու որդի է եղել, այնուհետեւ միլիոնաւոր Հեթանոսներ նոյնը կրկնեցին: Փողովուրդը զարհուրեց և խփում էր կրծքին, թերեւս այսօր ևս խրփում է իւր չար խղճին և ասում—դու սպանեցիր արդարին, դու մահացրիր ճշմարիտ Մեսսիային:

Արդեօք Յիսուսի խաչափայտի մօտ էլի ոքմին կար, սրա մասին մենք ոչինչ չխօսեցինք:—Աստուած, նա ամենուրեք է, մանաւանդ այնտեղ է, ուր ջերմեռանդութեամբ աղօթում են իրան, այն ձեռով ինչպէս իւր Միածին որդին խաչի վրայ աղօթեց: Սա փոքր ինչ անըմբռնելի է, որ Աստուծու ներկայութեամբ չար մարդիկն սպանում են նրա որդուն:—Որովհետեւ Աստուած ինքն պղպէս էր ցանկանում, այդ նրա կամքովն էր: Բայց ինչու:—Նրա որդւոյ մահը պէտք էր մեղաւոր մարդոց փրկութեան և երջանկութեան համար, ուրեմն մարդոց սիրոյ համար Աստուած իւր միածին որդուն զոհեց:

Հ ա մ ա խ մ բ ե լ վ ճ ի ու ն եր ը:

Առաջին: Խաչի վրայ արտասանած եօթը խօսքերը և նրանց նշանակութիւնը: Դրանք բոլորն էլ փրկչի սրտաբուխը սիրոյ խօսքերն են՝ մարդոց և Աստուծուն ուղղած, որոնք ամենաստուկալի ցաւի ժամանակն անգամ չեն մահանում—այսպէս ուրեմն խաչի վրայ ևս երեւում է ամենա մեծ սէրը:

Երկրորդ: Մարդիկ խաչի ներքոյ: Նրանք զործում են ամենամեծ ոճիրն իրանց բարերարի դէմ, որի նմանը դեռ չէ պատահել երկրիս վրայ՝ դրդած ինքնասիրութիւնից, մոլեռանդութիւնից (ատենի անդամները), թուրութիւնից (Պիղատոս), կուրութիւնից (ժողովուրդ) — ուրեմն յանցանքի ամենամեծ զօրութիւնը և սարսափը խաչի ներքոյ աւկնայատնի է:

Երրորդ: Յիսուսի Հայրը խաչի բարձրում: Նա այժմ ևս աւելի սէր է ցոյց տալիս դէպի մարդիկ՝ զոհելով իւր որդին խաչի վրայ մեղաւորների ձեռքով մեղաւորների փրկութեան համար: Այսպէս ուրեմն Յիսուսի խաչի վրայ ևս յայտնւում է Աստուծու սէրը և շնորհը:

III. ա.

Հ ա մ ա խ մ բ ե լ և ք ն ն ե լ այն Հ ի մ ու ն ք ն եր ը, պ ա տ ճ ա ու ն եր ը, որ տեղից ծագում է Յիսուսի մահը:

Յիսուս Քրիստոսն ինչու համար մեռաւ:—Ով արտաքին պարագաներն է միայն նկատի առնում, կասէ, որովհետեւ դօրեղ թշնամիները յաղթեցին նրան, դատապարտեցին և Հօր Պիղատոսի ձեռով ի խաչ հանեցին. Բայց ինչու այս կէտը Հիմնական պատճառ չենք համարում:—Յիսուս իւր յօժար կամքով մահ ընդունեց. նա կարիք չուէր Երուսաղէմ գնալու իւր արիւնը խմողների մօտ. վերջին օրերում նա կարող էր արտասահման հեռանալ. կարող էր յետ առնել իւր քարոզածները և մեսսիական կոչումն ու այսպէս հաշտուել թշնամիների հետ և կամ ժողովրդին գէնքի հրաւիրել և պատերազմել նրանց հետ մեսսիական կոչման ներքոյ (տ. § 50. 54), բայց նա և ոչ մինն էլ այս միջոցներից գործ չդրաւ. նա իրաւունք ունէր, երբ ասում էր թէ ոչ ոք իրաւունք չունի խլելու իմ կեանքն ինձնից, ես ինքս յօժար կամքովս կտամ այդ (Յովհ. Ժ. 18.):

Ինչու Յիսուս որ և է ձեռով չազատեց իւր կեանքը:—Եթէ նա մահ չընդունէր, այն չէր լինի, ինչ որ պէտք է լինէր, որովհետեւ այն Մեսսիան, որ երկիւղ է կրում խոստովանելու իւր պաշտօնը, Աստուածանից ուղարկուած չէ կարող լինել և եթէ նա իւր քարոզները յետ առնէր, այն ժամանակ իրաւունք տուած կլինէր ամենին այլ կարծիք կազմելու իւր վրայ. հակառակած կլինէր ճշմարտութեան սկզբունքին, որի հիմնադիրն էր, այլևս ոչ ոք չէր հաւատայ նրան, ուստի և ոչ քրիստոնէութիւն և ոչ եկեղեցի կլինէր:

Բայց ինչու այսպիսի մահ ընդունեց—Միայն կամաւոր մահուամբ կարող էր ցոյց տալ աշխարհին, թէ ինչ որ ես ուսուցանում եմ և ինչպէս ես եմ կեանք վարում, այն է միայն կատարեալը, ճշմարտութիւնը. նա միայն կարող է Աստուծու մօտ գնալ, ով ինձ նման կեանք է վարում, իսկ ով այլապէս է կեանք վարել, նա էլ զղջմամբ և ապաշխարութեամբ կարող է Աստուծու շնորհացն սրբանանալ: Իւր կամաւոր մահուամբ միայն կարող էր ապացուցանել աշխարհին, որ ինքն է ճշմարիտ աստուածաբան և մարգարէն և Մեսսիան. նա մեռաւ ոչ թէ իւր սակաւթիւ աշակերտների և հետևողների

Համար, որոնք կենդանի էին իւր օրօք, այլ բոլոր մարդոց Համար, որոնք ապագայում նրա աշակերտները և հետևողները պիտի լինէին, որովհետև երջանկութիւն պարգևող ճշմարտութիւնը չէր տարածուի, եթէ քարոզողը քարոզածի Համար մեռած չլինէր: Այն ժամանակ մարդիկ էլի իրանց մեղքերի մէջ շաղախուած պիտի մնային՝ հեռու Աստուծու արքայութիւնից և նրա երջանկութիւնից: Յիսուս մարդկանց մեղքի Համար մեռաւ: Եթէ Յիսուս մեռած չլինէր, մենք ամենքս էլ մեր մեղքերի մէջ կ'մնայինք. մեր սիրտն այդ մեղքերի մէջ հետզհետէ կ'մեռնէր, բայց Քրիստոսն ինքը մեր փոխարէն մեռաւ, որպէսզի մեզ ազատէ հոգեկան մահուանից:

Ի՞նչն էր ստիպում Յիսուսին այդքան միլլիօն մարդոց մեղքերի Համար մեռնել:—Որովհետև ամենին էլ սիրում էր, դրա Համար էլ տուաւ իւր ամենաթանկագին ունեցուածք՝ իւր կեանքը, մեր բարեկեցութեան, մեր երջանկութեան Համար:

Համեմատեցէք այս երկու կէտերը միմեանց հետ, թէ Յիսուսն ի՞նչու Համար էր ապրում և ի՞նչու Համար մեռաւ:—Յիսուս աշխարհ եկաւ ցոյց տալու նրանց նախ՝ թէ որն է սուրբ, մաքուր, մեղքից ազատ, սիրով լի կեանքը՝ Աստուծու և մարդոց վերաբերութեամբ և երկրորդ՝ մեղաւորներին յայտնելու, աւետելու Աստուծու շնորհաց աւետարանը և երկուսով միասին ազատելու մարդկութիւնը մեղքի ճիրաններից: Այս բոլորը նա ցանկանում էր կատարեալ սիրուց դրօշմ և միւս կողմից Աստուծու որդի լինելու երջանկութիւնը միայն իւրեան չէր կամենում սեպհակաւնել: Հէնց սրա Համար էլ (մարդկանց փրկելու Համար՝ ի սէր իւր եղբայրների) մահ ընդունեց:

Բայց այդ ինչպէս եղաւ: Քահանայապետների և փարիսեցիների թշնամութիւնը (որից ազատուելու Համար ոչ մի բարոյական ճանապարհ չկար) անկարելի դարձրեց փրկելն շարունակելու իւր կեանքը յօգուտ մարդկութեան բարօրութեան և որովհետև նա իւր մահով նոյնն արաւ, ինչ որ իւր կեանքով, այն է փրկել մարդկութիւնը, դրա Համար հազարաւոր ապացոյցներ ենք տեսնում նրա խօսքի և գործի մէջ, բայց ամենամեծը և փառաւորն այն է, որ իւր անձը յօթարակամ պարգևում է մեր փրկութեան Համար: Նրա մահը նրա կատարած գործերի ամենափառաւորն է և ամենամեծ ապացոյցը յօգուտ մարդկութեան:

Եւ որովհետև նրա կեանքը (ապրելը) փրկաւէտ կեանք պիտի լինէր յօգուտ բոլոր բարդկութեան, ուստի նրա մահն էլ փրկաւէտ մահ եղաւ բոլոր մարդոց Համար: Որովհետև նրա կեանքն ամբողջապէս մի տեսակ յաղթութիւն է մեղաց դէմ, այսպէս և նրա մահը, որով նրա անմեղք կեանքը վերջանում է, է յաղթութեան կատարելութիւնը ընդդէմ մեղաց. նա առանց երկիւղի դիմեց դէպի մահ, ուստի նրա մեռնելն էլ միւսնոյն ժամանակ յաղթութիւն է մահուան և նրա սարսափների դէմ: (տ. II. Տիմոթ. ա. 10.):

Այսպէս Յիսուսի մահը ամենամեծ գործն է, որ աշխարհիս վրայ գործուել է, որովհետև ոչ ոք սկզբում նրա նման չանձն չէ առել մարդկութեան փրկութիւնը և երջանկութիւնը, ոչ ոք ոչ մի ժամանակ դեռ ևս այդպիսի պաշտպանութեան և այդպիսի սէր առ մարդիկ չէ ստանձնել, ինչպիսին Յիսուս Քրիստոս (Յովհ. Ժե. 13. Մտթ. ի. 28.):

III. բ.

Երբ Յիսուս երկրիս վրայ էր, նրա միակ մտածողութեան առարկան էր մարդկանցն ազատել և երջանիկ դարձնել: Իսկապէս ի՞նչու Համար աշխարհ եկաւ:—Աստուած նրան ուղարկեց, որ մարդիկ նրանով՝ փրկուեն և երջանիկ դառնան, որ նրանց ցոյց տալ, թէ ինչպիսի կեանք պիտի վարեն, որ Աստուծուն հաճելի լինի. նա պէտքէ մարդկանցը յայտնէր Աստուծու շնորհը, ողորմութիւնը. մարդս իւր սեփհական ոյժով չէր կարող Աստուծու շնորհաց աւետարանը գտնել և նրան (մարդուն) մեղաց իշխանութիւնից փրկել: Յիսուսին աշխարհ ուղարկելն ստիպում է մեզ մի խորը հայեացք ձգել Աստուծու սրտի վրայ:—Աստուած մարդկանցը սիրում է սուրբ սիրով. նա չի կամենում, որ մարդս մեղաց մէջ շաղախուած մնայ, դրա Համար ուղարկում է միաձնին՝ դրօշմ իւր անհուն շնորհից, որ երջանիկ դարձնէ ժողովրդին, որին օրէնքն (Մովսիսի) անկարող էր (ի՞նչու): Միւս կողմից՝ կային շատ հեթանոսներ, որոնք առանց Աստուծու էին ապրում: Ահա դրանց Համար նա ուղարկեց իւր միակ որդուն (տ. § 1.): Մինչև անգամ թույլ տուաւ խաչուել ի սէր մարդկութեան փրկութեան: Աստուծու այդ անհուն սիրոյ ապացոյցն ի՞նչ պտուղ տուաւ:—Անթիւ անհամար մարդիկ հաւատացին Քրիստոսին, որովհետև Աստուած

(այլ և Յիսուս ինքն իրան) մահու ձեռք յանձնեց իւր որդուն և այսպէս կորած մարդկութիւնը դտաւ և յաւիտենական երջանիկ կեանք պարգևեց (Յովհ. գ. 16. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ....»):

III գ.

Երբ Յիսուս որոշել էր մահ ընդունել, այն ժամանակ և՛ս մտածում էր մեզ համար: Նա մեզ համար և մեր փոխարէն էլ է մեռել: Ի՞նչպէս: Նա ասում էր

. այն կեանքը, որ ես վարեցի, ամեն բանից բարձր կգասեն—կարձ՝ նրանք այլ ևս ինքնասէրներ չեն լինի, այլ ինձ համար կապրեն, որովհետեւ ես էլ նրանց համար ապրեցի և նրանց համար էլ մեռայ:

Այն ժամանակ իմ մահն աղբիւր կլինի, որտեղից կբխէ միլիոնաւոր բարեպաշտ մարդիկ, որոնք ինձ կնմանեն: Այն ժամանակ Աստուծու միածին որդու մահուանից կծնեն միլիոնաւոր որդիք Աստուծոյ կամ այնպիսիք, որոնք ի սրտէ կցանկանային այդպիսիք լինել: Այսպէս իմ վիշտը և տրտմութիւնը՝ ուրախութեան և ցնծութեան կփոխարկուի բազմաթիւ ժողովրդոց համար. իմ խաչը յաղթութեան դրօշակ կգառնայ, որով Աստուծու արքայութիւնը յաղթութիւն ձեռք բերաւ ընդդէմ չարի իշխանութեան. իմ մահը նոր կեանքի սկիզբն կգառնայ հին երկրի վրայ: Գոհանանք Աստուածանից, որ այդ նոր կեանքը մեր ազգի որդւոց սրտերի մէջ շատ վաղ է սկիզբն առել՝ հէնց անմիջապէս նրա հեղինակի մահուանից յետոյ: Փառք տանք Աստուծուն, որ մեր դրախտավայր երկիրը այս կեանքովն է կամենում յառաջ ընթանալ: Փառաւորեալ լինի Յիսուսի անունը, որ իւր մահով մեզ յաւիտենական նոր կեանք պարգևեց երկնքում—II. Թ. ա. Կրնթ. ե. 15.:

IV.

«Մեծ եւս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ՚ի վերայ բարեկամաց իւրոց»: Յովհ. Ժե. 13.:

«Որպէս որդի մարդոց ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել, եւ տալ զանձն իւր փրկանս փոխանակ բազմաց» Մտթ. Ի. 23 (տ. § 53):

«Ահա գառն Աստուծոյ, որ բառնայ զմեզս աշխարհի» (Յովհ. ա. 29.—տ. § 57): Զի այնպէս սիրեաց Աստուած

զաշխարհ.... «Յովհ. գ. 16 (տ. § 1.): Թէեւ մեր յանցանքն աւելի է, բայց Աստուծու ողորմութիւնն աւելի ևս:

«Քրիստոս ի վերայ ամենեցուն մեռաւ, զի որ կենդանիքն իցեն, մի անձանց իցեն կենդանիք, այլ այնմ, որ ի վերայ նոցա մեռաւ եւ յարեաւ»: II. Թ. ա. Կրնթ, ե. 15.:

V.

Յիսուսի մահը մի տեսակ զոհ է Աստուծու և մեզ համար (ապացոյց): Ո՞րն է մեր ամենամեծ երախտագիտութիւնն այդ առթիւ: (Զոհել մեր սեպհական սիրտը Յիսուսի համար): Արշմարիտ քրիստոնեան այդ զոհաբերութիւնն ինչպէս է արտայայտում: Մենք քրիստոնեայքս ինչու այլ ևս առաջուան նման չենք զոհում: Ամեն մի քրիստոնեայ մի տեսակ խաչակիր պիտի լինի (ապացոյց): Յիսուսի խաչը Յիսուսի գահն է: Այս ինչ է նշանակում, երբ գնդի վերայ տնկած խաչ են նկարում: (Քրիստոնէութիւնը պիտի տիրէ երկրագնդին:) Աւագակի դարձը մի օրինակ է մեզ համար: Ի՞նչու երբեմն քրիստոնէութիւնը խաչի կրօն է անուանում: Ամեն անգամ խաչ տեսնելիս պէտք է մտնե՞րումդ կրկնէք—այդ ես արի քեզ համար, դու ինչ ես արել ինձ համար: Այս հարցի ամենալաւ պատասխանն ինչ է:

Մեկնել և վարժել. Մտթ. իգ. 28. «Զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց»: «Լեր հաւատարիմ մինչեւ....»: «Եւ իմաստունք ծագեսցին....»: «Մեք սիրեսցուք զԱստուած....»: «Աստուած սէր է եւ....»: «Եկայք ամենայն վաստակեալք....»: «Յիւրսն եկն եւ....»: «Բայց եթէ ինչ ի Քրիստոս....»: «Կարգացես առիս յաւուր...»: «Զի նոքին իսկ գործքն....»: «Աստուած կամի զամենայն մարդիկ....»: «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր....»:

§ 59

ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՒԱԾ

Թ ա ղ ու մ ն:

Նշոյատակ: Վերնագիրը:

I.

Պատմել տալ երեխաներին ինչ որ գիտեն այդ մասին:

II. ա.

Աւանդել նոր նիւթը (Մտթ. իէ. Մրկ. ժե. Ղուկ. իգ. Յովհ. ժթ.):

Պարզել նիւթը: Երբ թաղեցին Յիսուսին: Ի՞նչու էին կամենում մարմինը վերցնել: Ի՞նչու Յիսուսի սրունգները ջախճախեցին: Ի՞նչու զինուորը խոցեց Յիսուսի կողը և ի՞նչ իմացաւ դրանից: Եթէ Յովսէփը չէր խնդրել, ի՞նչ կանէին Յիսուսի մարմինը: Ի՞նչ նշանակութիւն ունէին Յովսէփի և Նիկողիմոսի արածները (Հարուստ Հրէաներն այդպէս էին թաղում իրանց ննջեցեալին): Ի՞նչ մտադրութիւն ունէին կանայք:

II բ.

Բարոյական—կրօնական: Նախ քան Պիղատոսի մօտ գնալն ի՞նչ կմտածէր Յովսէփը:—Խնդրել Յիսուսի մարմինը, նշանակում է խաչեալի վարդապետութեան Հետևող լինել, իսկ այդպիսի մի քայլ կարող է բարձրագոյն ատենի անդամների վրէժխնդրութիւնը շարժել: Հապա ի՞նչու էր այդպիսի անգգուշութիւն անում:—Այն սէրը, որ ունէր դէպի Յիսուս, ամեն ինչ մոռացնել էր տուել. թերևս նրա ներքինն անհանգիստ էր անում իրան, որ մինչև այժմ Յիսուսի ծածուկ աշակերտ է եղել, իսկ նրա դատապարտութեան Հարցում ոչնչով չէ օգնել, լռել է: Այլ ևս չէ կարողանում չլսել ներքին ձայնին, որ ստիպում է նրան աշխարհի առաջ խոստովանել փրկչին և իւր թոյլ Հաւատը զօրացնել: Այս Հաւատը դէպի Քրիստոսը մեծ է, որովհետև Յիսուս ատենի անդամներից իբրև Աստուծուն Հայհոյող է դատապարտուել, իսկ այժմ Յովսէփը վստահանում է մի այդպիսի անձնի ուղղութեան Համակիր ներկայանալ:

Երկու բարեպաշտ մարդիկն էլ ինչեր կմտածէին այս տրտուր զբաղման ժամանակ: Գուցէ Աստուծու մարգարէ էիր. ժողովուրդն ուղիղ է ուրացաւ, Համարում է քեզ Աստուած Հայհոյող, բայց դրա փոխարէն Աստուած քանիցս վկայել է, թէ դա իմ սիրելի որդին է—մենք Աստուծուն աւելի կՀաւատանք քան թէ մարդուն: Մարդիկ քեզ ատեցին, իսկ մենք կսիրենք. նրանք քեզ աւաղակների հետ Հաւասարեցրին, իսկ մենք՝ կյարգենք...: Յովսէփն ու Նիկողիմոսը աներկիւղ են

վարվում, Հաւատ ունին, բարեպաշտ են: («Եւ ի մեռելոց մի արգելուր զշնորհս» տ. Հ—ո § 14: «Ամենայն որ խոստովանեսցի իս առաջի մարդկան... § 56.):

ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՒԱԾ.

Յիսուսի յարուցելը:

Նպատակ: Վերնագիր:

I.

Վերարտագրել սաների յիշողութեան մէջ այն ինչ որ զիտեն Յիսուսի յարուցեան մասին:

II.

Աւանդել նոր նիւթը (Մտթ. իբ. Մրկ. ժգ. Ղուկ. իգ. Յովհ. ի. և իա.) նախ՝ ամենայն մի կտոր պարզել, բարոյական—կրօնական կէտերը քննութեան առնել և ապա՝ Համախմբել:

1, ՅԱՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ԱԻՏԻՔԸ

Կանայքը մտադրում են իրանց յարգանքը ցոյց տալ մեռեալին, բայց տարակուսանաց մէջ են, թէ ով պիտի գլորէ մեծ վէմը: Բայց որքան մեծ է լինում նրանց զարմանքը, երբ քարը գլորած են գտնում: Այդ զարմանքը կրկնապատկուում է, երբ Հրեշտակից իմանում են, որ Յիսուս ոչ թէ մեռելների, այլ կենդանիների մէջ պիտի փնտռել: Կանայքն այս աւետիքը պէտք է Հաղորդեն աշակերտներին (Պետրոսն առանձնակի է յիշատակում, որովհետև վերջին անգամ՝ ուրացութիւնից յետոյ, վհատել էր, ուստի և ամենից աւելի կարօտ էր միջխարութեան), նոյնպէս և խաչեալի ապագայ յայտնուելը Գալիլիայում: Աւելի սարսափած՝ քան թէ ուրախացած, կանայքը յայտնում են այս լուրն աշակերտներին և միւս Հաւատացեալներին, բայց ոչ ոք չէ Հաւատում: Պետրոսը և Յովհաննէսը՝ Մարիամի և միւս կանանց Հաղորդած լուրն ուշադրութեան են առնում. շտապում են դէպի գերեզմանը, որպէսզի ճշտեն իրանց լսածը, բայց գերեզմանի դատարկ լինելը չգիտէին ինչով բացատրել: Յիսուսի մահուան անսպասելի դիպուածն աշակերտների սիրտն այնպէս վհատեցրել էր, որ լսած լուրը մի րոպէ երևութ Համարուեց նշանց աչքին—այն Հաւատը, թէ Աստուծու որդուն ոչ մի մահ չէ կարող սպառնալ, թոյլ էր աշակերտների մէջ, աւելի թոյլ Պետրոսի և Յովհաննիսի մէջ:

2, ՓՐԿՉԻ ՅԱՅՏՆՈՒԻԼ ԳԵՐԵԶՄԱՆԻ ՎՐԱՅ

Մարիամ Մագդաղենացին չէ բաւականանում այն իրողութիւնով, թէ փրկիչը գերեզմանում չէ. նրա միակ ցանկութիւնն է յարուցեալին աչքով տեսնել, ուստի վերադառնում է դէպի դատարկ գերեզմանը, դառնապէս լաղ է լինում, ներս է նայում և դանգատում է հրեշտակներին (Մարիամի գիտակցութիւնն այնքան զբաղուած է փրկչին տեսնելու խնդրով, որ երկիւղ անգամ չէ զգում հրեշտակների ներկայութիւնից): Այն ժամանակ Յիսուս երևում է Մարիամին, բայց իրան ճանաչել չէ տալիս: Մարիամը նրան պարտիզպանի տեղ է ընդունում, բայց «Մարիամ» խօսքն նրան «ի գիտութիւն ճշմարտութեան» է բերում: Մարիամի ուրախութեան չափ ու սահման չկայ—նա կամենում էր գրկել, շօշափել. փրկիչը չի բաւականանում այս վարմունքով, որ արտաքին է միայն, նա աւելին է կամենում—երբ ինքը նրա աչքից հեռացած կլինի, այն ժամանակ միայն գրկէ իրան, բայց ոչ ձեռքերով, այլ սրտով, հաւատով: Յիսուս ցանկանում է, որ Մարիամը կասկածաւոր հաւատ ունեցող աշակերտներին յայտնէ իւր յարութիւնը և համբարձումն: Այս լուրը կգորացնէ նրանց, կվերականգնէ նախկին հաւատարմութիւնը:

Որոնեցէք և կգտնէք: Մարիամի հաւատն (թէ և դեռ կատարեալ չէ) ամենից մեծն է և դրա համար էլ նա առաջինն է տեսնում իւր հաւատոյ հաստատութիւնը և գորացած հաւատով աշակերտների կասկածաւոր հաւատը փարատում է:

3, ՓՐԿՉԻ ՅԱՅՏՆՈՒԹ Է ԷՄՄԱՆՈՒՍ ԳՆԱՅՈՂՆԵՐԻՆ

Յարութեան օրը՝ ճաշից յետոյ Յիսուսին հետևողներից) երկուսը գնում էին Իմմաուս ($2\frac{1}{2}$ ժամ հեռի Երուսաղէմից): Նրանք տխուր էին, խօսում էին Յիսուսի անսպասելի մահուան մասին, այն Յիսուսի, որին Աստուած մարգարէ էր ուղարկել—նրանք աշխատում էին պարզել իրանց Յիսուսի մահուան պատճառները: Փրկիչն իբրև անձանթ ոմն ընկերանում է նրանց՝ և ստիպում է իրանց սիրտը բաց անել: Յիսուս նկատում է, որ նրանց հաւատը նուազել է—թէ և նրանք ընդունում են Քրիստոսին մեծ մագդարէի տեղ, բայց ժողովրդի ղեկավարների ձեռքով ի խաջ բարձրանալը նրանց յոյսը՝ թէ

նա Խորայէլին պիտի փրկէ և նոր թագաւորութեւն հիմնէ, ի դերև է հանել, մինչև անգամ կասկածներ է զարդեցրել նրանց մէջ փրկչի մեսսիական կոչման վերաբերութեամբ և թէ յարութեան լուրն այդ կասկածը դեռ ևս չէ փարատել նրանցից:

Այս կասկածաւոր հաւատի համար փրկիչը նախատում է նրանց և ապացուցանում է, որ Յիսուսի կրած չարչարանքները և Մեսսիայի մահը մարգարէներից գուշակած (տ. սաղմոս Ժե. 10. Եսայեա ծգ. 10.) աստուածային տնօրէնութիւնն է. նրա խաչուիլը չպէտք է ընդունել իբրև կործանումն նրա իշխանութեան, այլ՝ ընդհակառակն դա կարևոր, անհրաժեշտ էր մեսսիական իշխանութեան հաստատութեան և փրկութեան գործի կատարելութեան համար—կարճ ասած՝ խաչեալ և մահացեալ Մեսսիան է ճշմարիտ և իսկական Մեսսիան—Աստուծու որդին: Հանգուցը լուծել է—մխիթարութիւնը մուտք է գտնել նրանց կասկածաւոր սրտերի մէջ: Ուստի և մխիթարչին թոյլ չեն տալիս հեռանալու. ստիպում են իրանց մօտ մնալ, օրպէսզի իրան հաւատը ևս աւելի զօրացնէ: Փրկիչը, երբ նրանց հոգեկան աչքը բաց է անում, այն ժամանակ միայն մարմնով յայտնվում է նրանց, բայց մի վայրկեան միայն, օրպէսզի նրանք ոչ թէ միայն տեսածին հաւատան, այլ փոքր առ փոքր վարժեն իրանց անտեսանելին ևս հաւատալու: Եւ նա հասնում է իւր նպատակին: Այս երկու աշակերտներն արդէն տեսնելուց առաջ հաւատում էին Յիսուսի մեսսիական կոչմանը և փրկչական գործին, այժմ՝ յարութիւնը մի նոր ապացոյց էր նրանց համար, որ աւելի հաստատում էր նրանց՝ իրանց հաւատի մէջ, դրա համար էլ նրանց սրտերը բորբոքում է—հէնց նոյն գիշերն էլ դառնում են Երուսաղէմ միւս եղբայրներին էլ հաղորդելու այս ուրախալի լուրը: Յիսուսի ո՞ր խօսքն աւելի կմխիթարէր նրանց:

Հ ա մ ա ի մ բ ե լ գլխաւոր վճիռները: Յիսուսի այս երկու աշակերտների նման միւսներն էլ սպասում էին, որ նա որպէս խոստացեալ Մեսսիա պիտի յայտնուէ, դրա համար էլ նրա մահը ամենի հաւատը շարժում է: Ուստի անհրաժեշտ էր, որ Յիսուս խրատ կարգար նրանց՝ աստուածային տնօրէնութեան, փրկչի չարչարանաց և մանաւանդ նրա տեսանելի յարութեան մասին, օրպէսզի փարատէր նրանց կարծիքը, որ Մեսսիան

պէտք է չարհարուէր և խաչուէր և ոչ թէ ինչպէս իրանք էին երևակայում — թէ նա աշխարհային փառքով պիտի երևայ:

4, ՅԻՍՈՒՍ ՅԱՅՏՆԻՈՒՄ Է ԱՂԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԻՄՈՒՄ

Երկիւղի (հրէաների) և ուրախութեան (իմմաուսից դարձած աշակերտների) զգացմունքներով շփոթուած աշակերտներին երևում է Յիսուս և ասում է. «Խաղաղութիւն ձեզ», որովհետև նա նոր խաղաղութիւն է բերում փարատելու (վաւերացնելու) նրանց կասկածները Մեսսիայի վերաբերութեամբ: Առաջին շփոթութիւնը վերանում է (խնջով) և ամենքը համոզւում են, որ իրանց դիմաց կանգնողը ոգի չէ, այլ յարուցեալ Յիսուսը: Այս բանը նրանց սիրտը յցնում է անբաւ ուրախութիւնով, որովհետև նրանք ի նորոյ էին տեսնում իրանց սիրելի ուսուցչին, որին մարդասպանները յափշտակել էին իրանցից: Նա դարձեալ տէր է մահուան և իւր թշնամեաց վրայ. նա պէտք է Մեսսիան լինի. նա դարձեալ կարող է և կհիմնէ մեսսիական իշխանութիւնը և իրանք էլ իւր գործակիցները պիտի լինեն: Նա կամենում է նրանց իւր փոխարէն աշխարհի ամեն կողմերն ուղարկել, որպէսզի մարդոց սրտերը որսան: Եւ որպէսզի աշակերտները ոյժ և զօրութիւն ունենան այս ծանր գործը կատարելու, տալիս է նրանց իւր սուրբ հոգին և իրաւունք՝ իւր անունով արձակելու (ներելու ըստ անառակ որդու հօր) և կապելու նրանց յանցանքները: Ի՛նչ ուրախութեամբ ի՛նչ սրտով և ի՛նչ տխուր մտածմամբ կբաժանուէր փրկիչը վհատած աշակերտներին:

Միայն մի աշակերտի սրտից այդ կասկածը դեռ չէ փարատուել: Թո՛վ մասը յարուցեալին իւր սեփական աչքով կամենում է տեսնել. իւր ձեռով կամենում է շօշափել խոցուած կողը և մեխուած տեղերը, ապա թէ ոչ՝ չէ կարող հաւատալ Յիսուսի յարութեանը: Ամենին սիրող փրկիչը նրա կասկածը ևս փարատում է և միջոց տալիս նրան շօշափելու և հաւատալու: Թերահաւատ Թովմասն ամաչում է, նա լցուած է երանական ուրախութեամբ: Առաջ՝ որքան նրա կասկածը շատ էր, այնքան էլ մեծ է այժմ նրա համոզումը Յիսուսի յայտնութեան մասին, որովհետև Թովմասն առաջինն է, որ Յիսուսի յարութիւնից յետոյ նրա աստուածութիւնը յայտնի կերպով

լոստովանեց: Ուստի փրկիչը նրա նախկին թերի հաւատը նկատողութեան է առնում, յայտնելով՝ որ երջանկութեան հասցնող հաւատը կայանում է անտեսանելին հաւատալու մէջ:

Համախմբել բարոյական — կրօնական վճիռները մասնաւոր շեշտելու է այն կէտը, որ թերահաւատ աշակերտներին լսել և տեսնել (Թովմաս) տալով միայն կարելի է իրանց հաւատի մէջ հաստատել, թէ փրկիչը յարութիւն է առել, թէ նա է Մեսսիան և թէ նրանք իւր գործակիցները պիտի լինին երկնից արքայութեան իշխանութիւնը հաստատելու խնդրում:

5, ՅԻՍՈՒՍ ՅԱՅՏՆԻՈՒՄ Է ԻՐ ԱՂԱԿԵՐՏՆԵՐԻՆ ԳԱԼԻԼԱՅՈՒՄ

Այս անգամ նա յայտնում է աշակերտներին Գեննեսարեթայ ծովակի ափին (նա ոգի չէ). նրանք ճանաչում են փրկչին. ճաշում է նրանց հետ: Յիսուս հարցնում է Պետրոսին, թէ արդե՞ք սիրում է իրան միւսներից աւելի: Այս անգամ փրկիչը նրան Պետրոս չի անուանում, այլ՝ Յովնանի որդի (տ. Մտթ. Ժզ, 17.), որովհետև ուրացել էր, «վէմ» (պետրոս) չէր ներկայացել և «սիրես».... բառով նկատողութիւն է անում և լիշում իւր սնապարծ խօսքերը (§ 54. — եթէ ամենքն էլ ուրանան, ես չեմ ուրանայ): Յիսուս Պետրոսին նորից է հրաւիրում առաքելական պաշտօնի, որ իւր ուրացութեամբ կորցրել էր: Ուստի երեք անգամ հարցնում է նրա սիրոյ մասին՝ մի կողմից լիշելու նրա երեք ուրացութիւնը և միւս կողմից կատարելապէս զգալ տալու իւր սխալը և ապագայ մեծ պաշտօնը: Այժմեանից սկսած Պետրոսը ոչ թէ իւր, այլ՝ հօր Աստուծու կամքով պիտի ղեկավարուի: Այն հաւատարմութիւնը, որ Պետրոսը պիտի ունենայ դէպի Աստուած, ստիպելու է նրան չցանկացած կողմը գնալու. նա պիտի ենթարկուի փորձութեան և մահու (Պետրոսը Քրիստոսից 30 տարի յետոյ մարտիրոսական մահ ընդունեց խաչի վրայ՝ քրիստոնէութեան համար):

Համախմբել գլխաւոր մտքերը, որոնք լուսաբանում են այն միտքը, թէ ինչու Յիսուս նորից Պետրոսին առաքելական պաշտօն յանձնեց:

Դասաւորել հինգ հատուածներ Նիւթը:

Համախմբել դրանց կրօնական պարունակութիւնը — Յիսուսի անսպասելի մահն այնպէս խաղտեց աշակերտների հա-

ւատր, որ նրանք խաչեալի Մեսսիա լինելուն ալլելս չէին հաւատում. բոլորովին մոռացան այն միտքը, թէ Յիսուս մեսսիական թագաւորութիւն պիտի հիմնէ: (Խիստ չպիտի դատել աշակերտների թերահաւատութիւնը: Եթէ փոքր ինչ մեզ ևս նոյն հոգեկան տրամադրութեան ենթարկենք, թէ ինչ կարծիքներ էին տարածուած այն ժամանակ մեսսիայի մասին, զիջող կլինինք:) Էմմաուսից դարձած աշակերտների աւետիքն առաջին անգամ՝ արշալոյսի նման ճառագայթում է առաքեալների մէջ և զգալ տալիս, որ խաչեալն է եղել ճշմարիտ Մեսսիան և թէ նրա չարչարանքն աստուածային տնօրէնութիւն է եղել փրկելու մարդկութիւնը և հիմնելու իւր թագաւորութիւնը: Այդ գործի հնարաւորութիւնը Յիսուսի յարութեամբ պիտի կատարեալ դառնար: Իբրև էական ապացոյց Յիսուսի յարութեան՝ նրա անձամբ յայտնուելն էր աշակերտների մէջ, որով պարզուեց նրանց կասկածաւոր սրտերի առաջ Յիսուսի ճշմարիտ Մեսսիայ լինելը և նրա աստուածութիւնը (տ. Թովմասի խոստովանութիւնը): Ուստի և նախկին թերահաւատները հաւատով և սիրով են լսում և ընդունում փրկչի բերանից իրանց՝ աշխարհիս ամեն կողմն ուղարկելը՝ Մեսսիայի թագաւորութիւնը յաղթական կերպով հիմնելու, որի համար անկեալ, գլորեալ և կանգնեալ Պետրոսը ի նորոյ առաքելական պաշտօնի է հրաւիրւում:

Յարուցեալ Յիսուսը նրա համար է երևում աշակերտներին, որպէսզի նրանց թուլացած հաւատը ամրապնդէ, զօրացնէ կատարեալ կերպով՝ ակնարկելով միևնոյն ժամանակ, որ նա միայն կենդանի հաւատ ունի, ով առանց տեսնելու է հաւատում: Եթէ Յիսուս յարութիւն չէր առել և չէր յայտնուել, հազիւ թէ աշակերտները կենդանի հաւատ ունենային, ոգևորուած սիրով քարոզէին աշխարհին քրիստոնէութիւնը: Այսպէս ուրեմն Յիսուսի յարութիւնն անհրաժեշտ էր լրացնելու փրկութեան գործը աշխարհիս վրայ:

III ա.

Յիսուսի յարութիւնը մեզ համար ինչ նշանակութիւն ունի: Նախ՝ ինչ նշանակութիւն որ աշակերտների համար ունէր, ունի նոյնը և մեզ համար:—Յիսուսի աստուածորդի լինելը երևաց մկրտութեան (տ. § 6.) ժամանակ, Պետրոսի խոստո-

վանութեան մէջ (տ. § 29.), բայց աւելի զօրեղ ձևով արտայայտում է նրա յարութեամբը: Յարութիւնը վերանորոգում է աշակերտների մեռած հաւատը, սրպէսզի փրկութեան աւետարանը տարածեն ի սփիւռս աշխարհի: Նա տարածում է մեր օրերում ևս և կտարածուի ապագայում—կարճ ասած՝ նա ներգործում է և մեր հաւատի վրայ ու ստիպում է մեզ ևս ասելու. «դու ես Քրիստոս որդի Աստուծոյ կենդանւոյ»: Յիսուս մինչև այսօր էլ միլլիոնաւոր մարդոց սրտերի մէջ կենդանի է ոչ թէ անունով, այլ մտածելու եղանակով, սիրով և հաւատով (թանձրացեալ օրինակներ): Մեր օրերում ևս կան բազմաթիւ Թովմայի հաւատ ունեցողներ, որոնք առանց շօշափելու չեն կամենում հաւատալ Յիսուսի յարութեանը, բայց կան և շատերը, որոց հոգու մէջ անկասկած է նրա յարութիւնը և դա էլ Քրիստոսի մեծ հրաշքներից միսն է, որ տեղի է ունենում նրա հաւատացեալների սրտի մէջ, որոց շրթունքները կարճես բաբախելիս լինին (Յովհ. գ. 70. II. տ. Տմթ. բ. 8. խօսքերը):

III բ.

Յիսուսը իւր յարութիւնով ապացուցեց, որ իշխանութիւն ունի մահուան վրայ—նա կատարեալ յաղթութիւն ձեռք բերաւ մահու իշխանութեան դէմ: Անմահութեան գաղափարը Յիսուսի յարութեամբ է իրական սկիզբն առնում, որով պարզ ասում է մեզ, թէ մենք ևս մի օր պիտի նորոգուինք և յաւիտեանս անմահ մնանք: Յիսուս իւր յարութիւնով մեզնից ևս հալածեց մահու երկիւղը և փոխանակ դրան՝ լուսոյ օթեանը գնալու ուղին հարթեց (տ. § 28. 47.) II. Տմթ. ա. 10. Յովհ. ժա. 25.:

III գ.

Այո, Յիսուս իւր յարութիւնով հարթեց մեզ համար յաւիտեանական երջանիկ կեանքի ուղին: Մեր մահուանից առաջ մենք պարտաւոր ենք այնպիսի կեանք վարել, որ մօտաւորապէս նման լինի Յիսուսի երկրաւոր կեանքին. մեր հին՝ սիրուց զուրկ կեանքը պիտի փոխենք և դրա փոխարէն սիրոյ կեանքը զգենունք—նա միայն՝ ով այսպիսի կեանք է վարել, կարող է լուսալ, որ նորոգեալ կեանքումն էլ սրա նման կեանք կունենայ: Երբ յարութիւնը կառաջնորդէ մեզ դէպի կենդանի հաւատ, ջերմ սէր առ Քրիստոս, երբ նա կարթնացնէ մեր թմրած

Հոգին անտարբերութեան մրափից (առ Աստուած և առ մարդ),
ասել է թէ յարութիւնը իւր ճշմարիտ և փրկարար ազդեցու-
թիւնն ունեցել է մեզ վրայ, ասել է թէ փրկութեան լրումը մեզ
վրայ ևս կատարուել է (Թ. ա. Հռմ. գ. 4. Թ. ա. Փիլ. ա. 21.):

IV

«Եւ մեք Հաւատացաք եւ ծանեաք, եթէ դու ես Քրիս-
տոսն որդի Աստուծոյ կենդանոյ»: Յովհ. գ. 70. (տ. § 29. 55.):

«Յիշեան դՔրիստոս Յիսուս յարուցեալ ի մեռելոց»: «Բայց
յայտնեցաւ այժմիկ՝ յերեւիլ փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի,
որ խափանեաց զմահ...» (§ 28.): «Ես իսկ եմ յարութիւն եւ
կեանք...» (տ. § 47.): «Զի որպէս յարեալ Քրիստոս ի մեռելոց
փառօքն Հօր, նոյնպէս և մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք»:
Թ. ա. Հռմ. գ. 4. Թ. ա. Փիլ. ա. 21.):

V.

Յիսուսի յարութիւնը քո սրտի Համար երբ օգտաւէտ կա-
րող է լինել: Ի՞նչից պիտի երեւայ, որ Յիսուս քո մէջ յարու-
թիւն է առել և կենդանի է: Ճշմարիտ քրիստոնեան մահուան
վրայ ի՞նչ կարծիք պիտի ունենայ: Ի՞նչպէս կմեկնես Եղիշէի
խօսքը «մահ իմացեալ անմահութիւն է»: Յիսուսի յարութիւնն
ինչպէս է երեւում մեր շրջակայքում: — Քրիստոնէութիւնը յա-
րութեան ապացոյցն է: Զատիկի տօնի նշանակութիւնը: Ի՞նչու
Զատիկին միմեանց պատահելիս շնորհաւորում ենք՝ ասելով.
«Քրիստոս յարեալ ի մեռելոց» և պատասխան ստանում. «Օր-
հնեալ է յարութիւնն Քրիստոսի»:

Բարեպաշտ քրիստոնեան երբ կասէ. «Առ մեզ ազիր, զի
ընդ երեկս է»: Ի՞նչից է, որ այսօր ևս այդքան թերահաւատ
Թովմասներ կան (քանի՜ քանիսը նախ՝ կամենում են տեսնել
և ապա՝ Հաւատալ). դու ի՞նչպէս կարող ես Թովմասների թե-
րահաւատութիւնը փոխել դէպի Հակառակը:

Մ ե կ ն ե լ և վ ա Ր Ժ ե լ — «Քրիստոս յարեալ ի մեռելոց,
մահուամբ զմահ կոխեաց եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս
պարգեւեաց՝ նմա փառք յաւիտեանս ամէն»: Այն Հատուածները
որոնք լուսաբանում են այս գլուխը — I. Թ. ա. Կրնթ. Ժե.
20: Թ. ա. Հռմ. գ. 9. Բ. 11.: Թ. ա. Թող. գ. 13. 14.:
I. Թ. Պար. ա. 3.: Յովհ. Ժգ. 19:

Վ ա Ր Ժ ե լ — «Երանի որոց ոչ իցէ տեսեալ...»: «Եւ այս է

յաղթութիւն...»: «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր...»: «Զի
դոր ինչ սերմանէ մարդ...»: «Ես եմ լոյս աշխարհի...»: «Լեր
Հաւատարիմ մինչեւ...»: «Զի որ ինչ ի Քրիստոս, նոր արա-
րած...»: «Զի ոչ են խորհուրդք իմ...»:

§ 60

ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՃՈՒՄՆ

Ն ա տ ա կ: Վերնագիրը:

I.

Յիշել ինչ որ յայտնի է սաներին Համբարձման մասին:

II.

Աւանդել նոր նիւթը — Մտթ. իը. Ղուկ. իդ: Պատմու-
թիւն առաքելոց ա. (ձեռագիր):

Խ ո Ր ա ս ու ղ ե լ նիւթի մէջ: Ապագայ յայտնութիւնները
ևս նոյն նպատակն ունին — այն է՝ զօրացնելու աշակերտների
Հաւատը և երկնային թագաւորութեան վրայ ունեցած թերի
Հասկացողութիւնները: Յարութեան քառասներորդ օրն աշակերտ-
ները ծունկ չոքած նրա աստուածութեան փառաց առաջ՝ լսում
են փրկչի բերանից երկրիս վրայ արտասանած նրա վերջին
խօսքերը, որ պատուիրում է նրանց Երուսաղէմից չհեռանալ
և սպասել մինչև որ սուրբ Հոգին կգայ մխիթարելու և Հոգ-
ւով զօրացնելու նրանց՝ Համաձայն իւր խոստման (տ. Յովհ.
Ժգ. 26. Ժե. 26. Ժգ. 13): Այս այն մկրտութիւնն է, որ Յով-
հանէսը քարոզում էր իւր մօտ եկողներին — «ինձանից յետոյ
կգայ Հօրազոյնը... նա ձեզ կմկրտէ Հոգւով սրբով և կրա-
կով»: Աշակերտներն, ինչպէս և միշտ, աշխարհային ձևով են
ըմբռնում. սպասում են, որ փրկիչը իւր աստուածային փառ-
քով պիտի գայ մեսսիական թագաւորութիւնը Դաւթի որդւոյ
ձեռով վերանորոգելու: Յիսուս մերժում է նրանց այս յոյսը՝
յայտնելով, որ փրկութիւնը ոչ աշխարհային՝ մարմնական ձևով
պիտի ընդունել և ոչ միայն իսրայէլի ժողովրդի Համար, այլ՝
ընդհանուր մարդկութեան: Թէ իւր Հոգւոր թագաւորութիւնը
երբ յաղթութիւն ձեռք կբերէ, այդ Աստուծու տնօրէնութեանն
է թողնում. Ժամանակը ինքը չէ որոշում, բայց թէ լինելու է,

այդ անկասկած է: Աշակերտները դեռ ևս կարիք չունին այդ հեռավոր ապագայի, այս վերջին նպատակի մասին խորհելու, նրանք մօտիկ ապագան միայն աչքի առաջ պիտի ունենան, այն է՝ թէ ինչ աշխատութիւններ ունին կատարելու, իբրև փրկչի սպասաւորներ, այսինքն այն միջոցն ի նկատի պիտի առնեն, որը տանում է նրանց դէպի նպատակ—մարդիկ որսալ փրկչի համար, աւետարանը հեռաբնակ ազգերին քարոզել... իրանց վարդապետի և աստուածութեան փառաւոր վկաները լինել՝ թէ բոլոր երկրներին մէջ և թէ հայրենի աշխարհում: Այն ոյժը և զօրութիւնը, որով նրանք այն ծանր պաշտօնը պիտի կատարեն, Յիսուսի խոստացած սուրբ հոգին պիտի տայ, այն հոգին, որը երկրիս վրայ Յիսուսի մէջ աւելի փառաւոր և աւելի մեծ գործեր կատարեց: Այս հոգին տուաւ Յիսուս իւր աշակերտներին, իսկ աշակերտները նոյն հոգին պիտի բաշխեն մարդկութեան—ահա սրա մէջն է կայանում առաքեալների ապագայ աշխատանքը. ահա ինչ պիտի լինի նրանց գործնէութիւնը, որովհետև Յիսուսի հոգին ամենամեծ ոյժն է երկրիս վրայ: Ապագան նրա նման պիտի մտածէ և զգայ, աղօթէ և հաւատայ, ուսուցանէ և սիրէ, դատէ և կեանք վարէ—նա է կատարեալ ճշմարտութիւնը

Որպէսզի Յիսուսի առաքելութեան վերջին նպատակը կատարուած լինի, աշակերտները պէտք է բոլոր երկրները գնան, ամեն ազգերին այցելեն և իրանց քարոզութեամբն և օրինակովը ներշնչեն Յիսուսի կամքը աստուածահաճոյ կեանք վարելու: Բայց որպէսզի ներքին փոփոխութիւնը արտաքուստ ևս յայտնի լինի, նորադարձները պիտի և մկրտուեն: Ով արտաքուստ մկրտութեան միջնորդութեամբ, իսկ ներքուստ հաւատոյ գէնքով Յիսուս Քրիստոսին է պատկանում, նա կարող է երանելի՝ երջանիկ լինել—միայն անհաւատների սրտից բացակայ է Յիսուս: Խաղաղ և հանգիստ հոգով պիտի երթան առաքեալները աշխարհիս դարձի աշխատանքն սկսելու, որովհետև այն աշխատանքը, որ ուրիշին երանելի է դարձնում, աշխատողին ևս նոյն վիճակը պիտի պարգևէ: Նրանք հանգիստ և խաղաղ հոգով կարող են քարոզել և ի դարձ հրաւիրել, որովհետև Յիսուս ինքը իւր հոգով նրանց թոյլ կարողութիւնն անգամ պիտի զօրացնէ: Որովհետև առաքեալների այս

աշխատանքը օրհնեալ և մարդկութեան փրկութեան համար անհրաժեշտ աշխատանք է, ուստի և ոչ մի ժամանակ զուրկ չի լինիլ այդ տեսակ մարդկանցից, որոնք իրանց նախնիների դործը նոր ոյժով, նոր եռանդով կշարունակեն մինչև երկրաւոր կեանքի վերջը և ինչ կասկած, որ Յիսուս գրանցից ևս անբաժան է:

Այս գործը, որ ինքն ըստ ինքեան օրհնութիւնով լի է, փրկիչը իւր օրհնութիւնն էլ է տալիս և օրհնելով բաժանում է նրանցից, որի ամբողջ կեանքը օրհնութիւն էր թշուառ երկրի համար: Այդ օրհնութիւնը երկրիցս դէպի երկինք պիտի բարձրանայ, որտեղից Յիսուս վայր բերաւ, որպէսզի հետզհետէ հեղեղէ երկրագունդը սոյն օրհնութիւնով: Ով այս կեանքը վայելել է, ով առաքեալների նման կարող է լետ նայել դէպի անցեալը, այնպիսին միայն երախտագիտական զգացմունքով կարող է լցուած լինել դէպի փրկիչը, դէպի նրա (փրկչի) երկնաւոր հայրը, որը նրա ձեռով պարգևեց մեզ նոյն փրկութիւնը:

Հ ա մ ա խ մ բ ե լ — փրկչի վերջին կամքը (կտակ) և վերջին խոստումն: Համբարձման նշանակութիւնն առաքեալների համար:

III ա.

Արդեօք փրկչի վերջին կամքը կատարուել է:—Անթիւ աշակերտներ երկրագնդի ամենանշանաւոր ազգերին աւետարանը քարոզեցին և քրիստոնեայ դարձրին՝ մկրտելով նրանց հօր, որդւոյ և հոգւոյ անունով: Միլլիոնաւոր սրտեր հաւատացին Քրիստոսին և ընդունեցին այն ամենը, ինչ որ նա պատուիրել էր (Թանձրացեալ օրինակներ:) Այն թ ա գ ա լ ո ղ ու թ իւ լ ն ը, որ նա կամենում էր և մարգարէացաւ, արդէն գ ո յ ու թ իւ լ ն ու Նի և նրա պաշտպանութեան ներքոյ յաղթական ձևով յառաջ է գնում: Այն, եկաւ այդ թագաւորութիւնը, բայց ոչ արտաքին քայլով և ոչ աշխարհային ձևով, ինչպէս աշակերտներն էին հասկանում, այլ ներքին ձևով, հոգեպէս կարելի է նկատել մարդոց սրտերի մէջ, որը երբեմն արտաքուստ ևս փայլում է շատերի մէջ:

III բ.

Յիսուսի համբարձումն ինչ նշանակութիւն ունի մեզ համար:—Համբարձումը փրկչի համար յարութեան անհրաժեշտ

վերջաբանն է կազմում, իսկ աշակերտների համար՝ վերջին ապացույց, որ Յիսուս երկնքիցն է ուղարկուած և իրա հետևողներին իւր յետևից պիտի տանէ: Միևնոյնն էլ մեզ համար է — որ մենք ևս մեր մահուանից յետոյ երկնք պիտի համբաւնանք. մեր ճշմարիտ հայրենիքն էլ երկնքումն է հօր մօտ, ուր Քրիստոսն է: Փրկիչը նախ ցոյց տուաւ մեզ այդ հայրենիքը, նա ցոյց տուաւ մեզ այդտեղ առաջնորդող սիրոյ և հաւատոյ ճանապարհն էլ և մեզ համար յաւիտենական բնակարան պատրաստեց հայրենի տան մէջ: Թէ ուր է այս հայրենիքը, որոշակի չգիտենք տեղը, որովհետև երկինքն ամենուրեք է, բայց մենք գիտենք, որ մի այդպիսի հայրենիք ունինք, ուր բազմաթիւ և գեղեցիկ բնակարաններ կան մեզ համար: Յիսուս առաջ գնաց այդ հայրենիքը, նա շարունակ մեր սրբտերումն է և աշխատում է իւր մօտ տանել (Յովհ. Ժ. 2. 3.):

III գ.

Չկարծենք թէ ա ն պ ա յ մ ա ն նրանն է այդ երջանկութիւնը, ու մկրտուել է Յիսուսի անունով, հաւատում է նրան, քրիստոնեայ անունը կրում է և կամ որովհետև Քրիստոս ապրել է մեզ համար, մեռել է և յարութիւն առել:—Ոչ, ճշմարիտ քրիստոնեան նա է միայն, ու մայտեղ Յիսուսի համար է ապրում (Յիսուսն էլ նրա համար ապրեց), Քրիստոսի սիրոյ համար՝ Քրիստոսի թշնամի յանցանքն ատում է, մահացնում է և կամ ու Քրիստոսին ձեռով յարութիւն է առնում հոգեկան մահուանից — կարճ ասած — նա՝ ու մ ա յ ս տ ե դ ի սրտէ միշտ այն է որոնում, ինչոր ա յ ն տ ե դ՝ փրկիչ յաւիտենական հայրենիքում հաճելի կարող է լինել, միայն այնպիսին կարող է յուսալ և սպասել երջանիկ համբարձմանը (Թ. ա. Կղս. գ. 1.):

IV.

«Ղուկ. Ժէ. 20. 21 «Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խտրանօք, զի ահա արքայութիւն Աստուծոյ ի ներքս ի ձեզ է»:

Յովհ. Ժգ. 2. 3. «Ի տան հօր իմոյ օթեւանք բազում են, երթամ եւ պատրաստեմ ձեզ տեղի, դարձեալ գամ եւ առնում զձեզ առիս, զի ուր են իցեմ եւ գուք անդ իցէք»:

Թ. ա. Կղս գ. 1. «Եթէ յարեալք ընդ Քրիստոսի, ապա զվերինն խնդրիցէք՝ ուր Քրիստոս նստի ընդ աջմէ Աստուծոյ»:

V.

Ի՞նչից կարելի է նկատել, որ մինի մէջ Աստուծու թագաւորութիւնը մօտիկ է: Իսկական քրիստոնեան ինչու մահուան ժամանակ կարող է ծիծաղել: Ի՞նչու համար Եղիշէն ասում է. «Մահ իմացեալ անմահութիւն է»: Այդ ինչ է նշանակում, երբ ոմանք քրիստոնեաներից ըստէ առ ըստէ սպասում են մահուան: Ի՞նչից կերևայ, որ Քրիստոսը կրկին եկել է և մարդկանցն իրա մօտ է գրաւում, տանում: Դու ինչպէս կորոնես (թէ ներկայումս և թէ յետոյ) այն, ինչ որ վերեւումն է: Համբարձման տօնի իսկական նշանակութիւնը ո՞րն է: Դու ինչպէս կարող ես Քրիստոսին «վկայ» և առաքեալ լինել: Սուրբ հոգին մեզ համար ևս խոստացել է: Ի՞նչից պիտի երևայ, որ Յիսուս մեր մէջ է: Ո՞րն է քրիստոնէական մկրտութեան նշանակութիւնը: Ի՞նչու հօր, որդւոյ և սուրբ հոգւոյ անունով են մկրտում: Համեմատել մկրտութիւնը հաղորդութեան հետ: Ի՞նչ մտքով կարելի է Քրիստոսին երկնից առաջնորդ անուանել: Մ ե կ ն ե լ և վ ա ը Ժ ե լ:

Յովհ. գ. 63. «Իսկ արդ եթէ տեսանիցէք զորդի մարդոյ զի ելանիցէ ուր էր զառաջինն»:

Յովհ. Ժգ. 28. «Ելի ի հօրէ եւ եկի յաշխարհ, դարձեալ թողում զաշխարհ, եւ երթամ առ հայր»:

Թ. ա. Եբր. Ժգ. 14. «Քանզի ոչ եթէ ունիմք քաղաք որ աստէն մնալոց իցէ, այլ զհանդերձեալսն խնդրեմք»:

I. Թ. Պտր. գ. 21. 22. «Որ եւ ձեզ ըստ նմին օրինակի կեցուցէ մկրտութիւնն. ոչ զմարմնոյ ախտն ի բաց ընկենլով, այլ զբարւոք մտաց հանդէս առ Աստուած, ի ձեռն յարութեանն Յիսուսի Քրիստոսի, որ է ընդ աջմէ Աստուծոյ երթեալ յերկինս ի հնազանդել նմա հրեշտակաց եւ իշխանութեանց եւ զօրութեանց»:

Թ. ա. Փղպ. բ. 8. 11. «Խոնարհեցոյց.... Աստուծոյ հօր»:

» » » ա. 21—24 «Զի ինձ կեանք... վասն ձեր»:

Յովհ. Ժբ. 26. «Եթէ ոք զիս պաշտիցէ, զկնի իմ եկեսցէ եւ ուր ենն եմ, անդ եւ պաշտօնեայն իմ եղիցի»:



Յովհ. Ժէ. 24. «Հայր.... աշխարհիս»:

Յովհ. Ժդ. 6. «Ասէ ցնա Յիսուս. ես եմ ճանապարհն եւ ճրշ-

մարտութիւն եւ կեանք, ոչ ոք գայ առ հայր՝ եթէ ոչ ինեւ»:

Մտթ. Ժր. 20. «Զի ուր իցեն երկու կամ երեք ժողովեալ յանուն իմ, անդ եմ ես ի մէջ նոցա»:

Վարժութիւն—«Եւ այս է յաղթութիւն....»: «Ես եմ լոյս....»: «Ես եմ յարութիւն....»: «Աստուած հոգի է....»: «Ոչ ամեն այն որ ասէ....»: «Երանի այնոցիկ որ լսեն....» «Մի՛ գանձէք ձեզ գանձս....»: «Լեր հաւատարիմ....»:



31 օգոստ. 1 սեպ.	44 ք	31 հունիսի խօսակցութ., պահել մասին	թ. 14—17	—	—	—
7 սեպտ.	28 ա	Յաջորդի գուտարը	թ. 18	է. 21—	—	—
14 սեպտ.	43	Լեւոն քարոզը	է. 1—7	դ. 13—19	ք. 40	—
15 սեպտ.	28 ք	Կախառնությունի հարկւրապետը	ք. 5—14	—	—	—
23 մարտի	29 ա	Յալինի պատանին	—	—	է. 11—17	—
28 մարտի	35 ա	Յոհաննէի գետպանները	ժա. 2—30	—	է. 18—35	—
30 մարտի	30	Յանցաւոր կինը	—	—	է. 36—50	—
5 ապրիլի	22	Յոհաննիսի պիտատուն	ժդ. 6—12	դ. 21—29	—	—
11 ապրիլի	36 ա	Հինգ հազարի կերակրելը	ժդ. 13—21	դ. 30—44	թ. 10—17	դ. 1—15
ապր. 1/2 կամ մայիսի սկզբ.	44 դ	Յիսուս գնում է ծովի վրայով	ժդ. 22—34	դ. 45—53	—	դ. 16—21
	48 ա	Յիսուսի խօսակցութիւնը շաբաթը սրբերու մասին	ժք. 1—14	—	—	—
	31	Յիսուսի թշնամիները նշան են պահանջում	ժք. 38—42	—	—	—
	32	Սերմանացանի առակը	ժէ. 1—23	դ. 1—20	ք. 4—15	—
	33	Որոմի առակը	ժէ. 24—30	—	—	—
	44 ա	Ագարակի զանգի և մարգարտի առակները	ժէ. 41—46	—	—	—
26 մայիսի	23	Յիսուսի խօսակցութիւնը (կարիսե- ցիները հետ) լուսացման մասին	ժէ. 1—20	է. 1—23	ժա. 37—54	—
6 սեպտ.	18	Քանանացի կինը	ժէ. 21—28	է. 24—30	է. ք. 12	—
ապր. 1/2 կամ մայիսի սկզբին	26	Յիսուս բժշկում է խուլունամբին	—	է. 31—37	—	—
	29 ք	Անանի հարստի առակը	—	—	ժք. 16—21	—
	48 ք	Պետրոսի խոստովանութիւնը	ժդ. 13—28	ք. 27—29	թ. 18—27	—
	10	Դեւերի հալածումն Բեզզեբեբուղի ձեռով	ժք. 22—28	—	—	—
2 հոկտեմբերի	21	Աշակերտները վիճում են թէ ով է մեծ. երկ. աքք. մէջ	ժք. 1—20	թ. 33—50	թ. 46—50	—
7 հոկտեմբերի	19	Չար ճառակի առակը	ժք. 21—35	—	ժէ. 3—10	—
5, 6 դեկտ.	46	Ողորմած սամարացու առակը	—	—	ժ. 25—37	—
16 դեկտ.	35 ք	Մարկամ և Մարթա	—	—	ժ. 38—42	—
19 դեկտ.	37	Ճնացող կինը	—	—	—	ք. 3—11
	48 դ	Կոյր ծնածի բժշկութիւնը	—	—	—	թ. 1—34
	34	Հերովդէս թագաւորի թշնամութիւնը	—	—	ժդ. 31—33	—
		Մեծ բնթրիքի առակը	—	—	ժդ. 16—24	—

30	յունիվարի	27	Արուսեալ ոչխարի և դրամի առակ- ները	—	—	ժէ. 3—10	—
	յունիվարի	15	Անուակ որդու առակը	—	—	ժէ. 11—32	—
	յունիվ. միջին	40	Հարստի և աղքատ Ղազարոսի առակը	—	—	ժդ. 19—31	—
		47	Ղազարոսի չարութիւնը	—	—	—	ժա. 1—47
	միտ. 1/2 ին	48 դ	Բարձրագոյն աստնի վճիռը	—	—	—	ժա. 47—56
		13	Տան բորանների բժշկութիւնը	—	—	—	—
		39 ա	Անիրաւ գառաւորի առակը	—	—	—	—
		14	Փարիսեցին և մաքաւորը	—	—	ժէ. 11—19	—
		9	Յիսուս և մանուկները	—	—	ժք. 1—8	—
		25	Հարուստ երկուսուորդ	—	—	ժք. 9—14	—
		38	Ազգու մշակների առակը	ժ. 13—16	ժ. 15—17	ժք. 15—17	—
		16	Յիւ. բժշկում է կոյրին Երեքովի մօտ	ժ. 17—31	ժք. 18—30	—	—
		17	Յիսուս և Զակէոսը	—	—	—	—
		39	Փանքարների առակը	ժ. 46—52	ժք. 35—43	—	—
19 մարտի		49	Յիսուսի օծումը Բեթանիայում	—	—	ժթ. 1—10	—
21 մարտի		50	Յիսուս մտնում է Երուսաղէմ	—	—	ժթ. 11—27	—
23 մարտի		51 ա	Հարց Յիսուսի կատարեալ իշխանու- թեան մասին	—	—	—	—
		51 դ	Ազգու չար մշակների առակը	—	—	—	—
		51 ք	Հարկի դահեկանը	—	—	—	—
		51 դ	Յիսուսի սպանահալան քարոզը փարի- սեցիների և զալիւրների դէմ	—	—	—	—
		20	Ազգի կնոջ լուծան	—	—	—	—
		52	Յուդայի մասնութիւնը	—	—	—	—
24 մարտի		53 ա	Ջատիկի գտնան պատրաստութիւնը	—	—	—	—
25 մարտի		53 ք. դ.	Պատեքի կատարումն և խորհրդաւոր բնթրիք	—	—	—	—
		54 ա ք	Յիսուս Գեթսեմանում	—	—	—	—
26 մարտի. *)		54 դ	Յիսուսին կարանաւորում են	—	—	—	—
1—3 ժամ.		55	Յիսուս քահանայապետների առաջ	—	—	—	—
առաւօտեան,			*) (Հինգշաբթի դիշեր՝ լոյս ուղբաթ- մինչև ժամի 1-ը)	—	—	—	—

3-4 ժամ	56 ա	Պետրոսի ուրացու թիւներ	լգ. 69-75 ժդ. 66-72	լբ. 56-62 ժբ. 25-27
4-6 ժամ	56 բ	Երկրորդ ժողով և Յուդայի վարձանք	լէ. 1-10 ժէ. 1	լբ. 66-71 —
	57	Յիսուս Պղատոսի առաջ	լէ. 11-31 ժէ. 2-20	լգ. 1-25 ժբ. 28-40
9-12 ժամ	58	Յիսուսի խաչելութիւնը	լէ. 32-44 ժէ. 21-32	լգ. 26-43 ժբ. 1-16
12-4 ժամ	58 ա 59	Յիսուսի մահը, գեղարգով խոցում են		լգ. 26-43 ժբ. 17-27
4-6 ուրբաթ	59 ա	Կողբ	լէ. 45-56 ժէ. 33-41	լգ. 44-49 ժբ. 28-37
28 մարտի ժամ	59 բ 1	Յիսուսի թաղումն. պահապաններ . .	լէ. 57-66 ժէ. 42-47	լգ. 50-55 ժբ. 38-42
5 լոյս կիւրկ.				
3-8 ժ. գկն.	59 բ 2	Յարութիւն և առաջին չափումութիւնը	լբ. 1-15 ժգ. 1-11	լգ. 1-12
ճաշու.	59 բ 3	Փրկչի չափումը գերեզմանի վրայ.		լ. 11-18
28 մարտի 4 ապր.	59 բ 4	Յիս. չափումութիւնը Սլոնի Պետրոսին	լգ. 12 և 13	լգ. 13-35
11 ապրելի	59 բ 5	և իմամուս գնացող աշակերտներին.		լգ. 36-43
6 մայիսի	60	Յիսուսի կրկին չափումութիւնն առա-		
		քեալներին.		
		Յիսուսի չափումութիւնը Գննենաբերթի		
		ճովակի ափին		
		Յիսուսի համբարձումն	լգ. 14-20	լգ. 50-53

* Իմ դասագիրք գործածողներն անշուշտ նկատած կլինին, որ նիւթը դասաւորուած չէ ժամանակագրական կարգով—այլ հետեւելով որոշ մանկավարժական ուղղութեան՝ նիւթի պարունակութիւնը, նրա մէջ ամփոփուած բարոյական իմաստներն շղթայուած են իրար հետ, այնպէս որ մի մտաւոր շարաշարութիւն են կազմում: Թէև այդպէս է, բայց և այնպէս կարևոր համարեցի ուսուցչաց համար՝ մի հմուտ մեկնաբանի կարծիքը դնել այստեղ, որը նոր-ուխտի նիւթի ժամանակագրական կարգը որոշում է, բայց այն սահմաններով, որով իմ դասագիրն է ընդարձակուած՝ մնացորդն ապագային թողնելով, երբ կհրատարակուին աւետարանի ընդհանուր մեկնութիւնը:

Յիսուսի ծննդեան ճիշտ թուականը որոշ չափանի չէ, 4—5, 6 տարի տարբերութիւն կազ կարծիքների մէջ: Հռովմայեցի կրօնաւոր Դիոնէսիոս կրտսերը (համեստութիւնից ստիպուած այսպէս էր անուանում իրան) առաջինն էր, որ VI. դարում առաջարկեց Քրիստոսի ծննդեան թուականը ընդունել Հռոմի հիմնարկութեան 754 թ.: Սրա առաջարկած տարին սկսում է յունուարի 1-ից և վերջանում է դեկտեմբերի 31-ով: Այսպէս ուրեմն Հռոմի հիմնարկութեան 754=1 թուականին Քրիստոսի. Ապագայ մեկնիչները չեն համաձայնում Դիոնէսիոսի թ. հետ և աւելի համոզեցուցիչ իրողութիւններ են առաջ բերում: Թուենք մի առ մի:

ա. Մատթէոս աւետարանիչը գլ բ.տ. 1. 2. չիշում է աստղի երևալը և մոգերի գալուստը: Աստեղաբաշխները, մանաւանդ մեծ Աեպլերը, իրանց զբաղման նիւթ դարձրին այդ աստղի երևալու ժամանակամիջոցը և յետ հաշուելով գտան, որ դա երևացել է 747 թ. Իւպիտերի և Սատուրնի կատարած շրջանի վրայ: Բայց որովհետև Բեթղէհեմի մանկանց կոտորածը (Մտթ. բ. 16) դրանից յետոյ կատարուած իրողութիւն է և որովհետև մոգերն շտապով Երուսաղէմ են գալիս և այնտեղ և՛ս նկատելի է լինում աստղի երևալը, նոյն պէս և վերադառնալիս առաջնորդում նրանց, ուրեմն աստղի երևալը երկար ժամանակ է տևել, հետեւաբար և պիտի ընդունենք, որ Յիսուս 748 թ. պիտի ծնած լինի, որովհետև աստղը 748 գարնանը միայն կարող էր այն աստիճան պարզ երևալ, որ մոգերի ուշադրութիւնը իւր վրայ դարձնէր:

Ոմանք էլ այս երևույթը գիտաւոր աստղ են համարում՝ ըստ աղիւսակի չինական աստեղաբաշխութեան, որ երկու ամսից աւելի է տե-

սանելի եղել: Դա պատահել է 750 թ., ուստի և Յիսուսի ծնունդը նույն թուին են ընդունում:

բ. Աւելի զօրաւոր ապացոյց կարող է համարուել և այն բացատրութիւնը, որ համաձայնում է աւետարանչի տուած տեղեկութեան հետ: Մտթ. բ. 1. և Ղուկ. ա. 5. յիշում են, որ Յիսուս ծնաւ չեւրոփ դէ Եսի մահուանից առաջ: Յայտնի է, որ Հերովդէսը մեռաւ 750 թ. (որ հաւասար է Քրիստոսի ծննդեան 4, այսինքն 750 = 4) լուսնի խաւարումից յետոյ, որը՝ ըստ աստեղաբաշխական հաշուի $12\frac{1}{13}$ մարտի է գալիս՝ այդ տարուայ Զատիկի տօնից առաջ — ուրեմն մարտի վերջին կամ ապրիլի սկզբին: Բայց որովհետեւ Հերովդէսը Քրիստոսի ծննդեան ժամանակ կենդանի էր, ուրեմն Յիսուս 750 սկզբներում կամ փոքր ինչ առաջ (749-ի վերջերք) ծնած պիտի լինի:

գ. Դարձեալ՝ Ղուկաս աւետարանիչն իւր գ. 1.... պատմում է, որ Յովհաննէս Մկրտիչը Տիբերիոս կայսեր իշխանութեան 15-որդ տարումն է երեւացել: Օգոստոսը մեռաւ օգոստոսի 19-ին 767: Սրա յաջորդ Տեբերիոսի 15 ամեայ կառավարութիւնը օգոստոսի 19-ից սկսելով՝ կանէ 781—782 թ.: Բայց որովհետեւ Տիբերիոսը Օգոստոսի մահուանից զեռ երկու տարի առաջ Օգոստոսի հետ միասին էր կառավարում, ուրեմն ոչ թէ 767, այլ 765 թ. պիտի ընդունել: Ղուկաս աւետարանիչն անշուտ այստեղից է սկսում իւր չի յնգետասաներորդի ամի...» ն: Այսպէս ուրեմն Ղուկասի յիշած 15. տարին պիտի ընդունել 779 թ. Հռոմի հիմնարկութեան, որ թուականին էլ Յիսուս 30 ամեայ հասկում (Ղուկ. գ. 23) երեւացել է: Արդ՝ Յովհաննէսը կէս տարով մեծ է (Ղուկ. ա. 26) Յիսուսից, հետեւադար և 780 թ. է ընկնում Յովհաննիսի երեւալը, իսկ Քրիստոսի ծնունդը 30 տարի յետ հաշուելով՝ դարձեալ կստանանք 750 թ.:

դ. Յիսուս իւր երեւալուց յետոյ, երբ առաջին անգամ Պասեքի տօնին հատաւաճառներին տաճարից արտաքսում էր, նրան ասացին, որ տաճարը 46 տարում հազիւ են շինել (Յովհ. բ. 20.): Յայտնի է որ Հերովդէսը իւր իշխանութեան 18-րդ տարումն սկսեց տաճարի հիմը ձգել: Դահ նստաւ 717-ին. աւելացնենք 18-ը կանէ 734., 40 տարի էլ շինութեան ժամանակամիջոցը, կանէ 780, որ համեմատելով Ղուկ. գ. 23 ի հետ՝ դարձեալ 750 թ. կստանանք:

ե. Աբիսալի քահանայական դասակարգը որին պատկանում էր Յովհաննէսի հայր Զաքարիան, ևս մի ապացոյց է, որ նույն արդիւնքն է տալիս մեզ: Նրէից մէջ 24 դասակարգի էին բաժա-

նուած քահանաները, որոնք հերթով կատարում էին աստուածապատկեան կարգը տաճարի մէջ: Աբիսալի դասակարգը 8-րդն էր: Տալմուտից յայտնի է, որ Նրուսաղէմի կործանումն 70 թ. աբ ամսի (մօտաւորապէս մեր օգոստոսը) 9-ին եղաւ, երբ տաճարում պաշտօն վարելու հերթը Արիէլ դասակարգին էր: Կարգերը յետ հաշուելով՝ կստանանք, որ Աբիսալի դասակարգը 3—9 հոկտ. 748-ին պաշտօն է ունեցել հերթ վարելու: Ինն ամսից, փոքր ինչ աւելի՝ յետոյ ծնում է Յովհաննէսը, ուրեմն 749 թուից վեց ամիս յետոյ (Ղուկ. ա. 26.) ծնաւ Քրիստոս, հետեւաբար և կամ 749 վերջերք կամ 750 սկզբներում, որ դարձեալ մեր որոնած թիւն է: Այսքան ապացոյցները թող բաւական համարուին խնդրի վրայ զաղափար ունենալու համար:

Այո, Յիսուսի ծննդեան որոշ թուականը ճիշտ չայտնի չէ: Արեւելեան քրիստոնեայ եկեղեցիները Քրիստոսի ծնունդը տօնում էին յունվարի 6-ին՝ նոր տարուայ առաջին շաբթուայ 6-րդ օրը (հայքս մինչև այսօր ևս), իսկ արեւմտեան քրիստոնեայ եկեղեցիները 1V. դարից ըսկսած նույն տօնը կատարում են դեկտ. 25, որովհետեւ աւետումը մարտի 25-ին են ընդունում: Չատ հաւանական է, որ այդ օրը հեթանոսական մի տօն լինէր, որ փրիստոնէութիւնը, ինչպէս և շատ այդպիսի տօներ, քրիստոնէականի փոխեց հետզհետէ:

Վերջապէս եթէ չիշենք, որ Յիսուս երեսնամեայ հասակում սկսեց գործել (Ղուկ. գ. 23.) և ըստ Յովհ. բ. 13. գ. 4. և ժգ. 1. երեք անգամ զատկի տօնին Նրուսաղէմ է եկել, ստիպուած ենք ընդունելու, որ Յիսուս 33 ամեայ հասակ է ունեցել:

Մեր դասագրի համար թուաբանական ճշտութիւն անհրաժեշտ չէ, մօտաւորական թիւն էլ բաւական է — հերիք է որ տարին որոշ է:

Հ Ր Ա Ղ Ք Ն Ե Ր

§ ըստ իմ
դասագրի

2. Աստղի երեւալը,
6. Սուրբ հոգւոյ աղաւնակերպ իջնելը,
12. Կափառնայումի հարիւրապետի բժշկութիւնը,
36. Մրբկի դադարումն,
28. Յայրոսի դստեր յարութիւն առնելը,
16. Նրիքովի կոյրի բժշկութիւնը,
18. Խուլ ու համրի բժշկութիւնը,
22. Հինգ հազարի կերակրելը,

- 36. ա. Յիսուս գնում է ծովի վրայով,
- 58. Հրաշքներ խաչելութեան ժամանակ—

- ա. Տաճարի վարագույրը պատառուում է,
- բ. Երկիրը շարժվում է.
- գ. Փայուերը պատառուում են,
- դ. Գերեզմանները բացւում են:

- 59. Հրաշք յարութեան ժամանակ,
- 7. Ձկան որսը,
- 28. Նայինի այրու որդու յարութիւնը,
- 54. Մաղքոսի ականջի բժշկութիւնը,
- 11. Ջուրը գինի դարձնելը,
- 35. Բէթսեզդայ աւագանի անդամալուծի բժշկութիւնը,
- 47. Ղազարոսի յարութիւնը,
- 13. Տասն բորոտների բժշկութիւնը,
- 24. Յիսուս աներևութանում է Նազարէթցիների աչքում,
- 60. Համբարձումն:

Բ.

ԱՂԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԻՒԹ

Սուրբ Երկրի (Պաղեստինէի) բաժանումն—1. Հրէաստան 2. Սամարիա 3. Գալիլիա: Նազարէթ, Բեթղհէմ, Երուսաղէմ, Վափառնայում, Վանա, Նային, Բեթսայիդա, Վեսարիա Փիլիպպեայ, Տիւրոս, Սիդոն, Գեննեսարեթայ, Կամ Տիբերական ծովակ, Բեթանիա, Սելովմայ աւագան, Վետրոնի հեղեղատ, Ձիթենեաց լեռոն (Գեթսեմանի) Գողգոթա, Եփրային (Բեթելի մօտ), Էմմաուս, Գերգեսացւոց աշխարհ:

Գ.

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ (ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ) ՆԻՒԹ

Յիսուսի ժամանակուայ քաղաքակրթական կեանքը մօտաւորապէս այսպէս համառօտել՝ հետեւեալ կէտերն ի նկատի առնելով

ա. Ընտանիք

Հարսանեաց հանդէս, անուանակոչութիւն ութերորդ օրում, սովորութիւններ ուտելիս (լուացումն) և թաղման ժամանակ (լաւական կանայք փողհարներ, մեռած օրը թաղել), հիւրասիրութիւն:

բ. Զգէսք

Ծիրանի, բենեզ (շուշուութեան հանդերձներ), Յովհաննէս Մկրտչի զգեստը, հռովմայեցի զինուորի վերադու:

գ. Դրամ

Լումա, քանքար, տաղանդ, դահեկան:

դ. Պառապանք

Երկրագործութիւն, անասնապահութիւն, ձկնորսութիւն, այգեգործութիւն (հնձան):

է. Դասակարգ

Քահանայապետ, քահանայ, ղևտացի, դպիր, օրինական, սափուգեցի, փարիսեցի մաքսաւոր, հռովմայեցի հարկւրապետ և զինուոր, աւագակ, ձկնորս հովիւ, երկրագործ, մշակ, հատալճառ, վաճառական:

զ. Սովորութիւններ

Սգի (հանդերձ պատառել, փող հարկանել, պահել) և թագաւորի ընդունելութեան ժամանակ. ազիզ հիւրին թանկագին իւղով օծել:

է. Չոր սովորութիւններ, նախապաշարմունք

Ի՞նչպէս էին վարվում բորոտների և դիւահարների հետ, մեռած օրը թաղել, թեթևամիտ երդումն, ողորմութիւն տալ, փարիսեցիների պահելը և աղօթելը, հանդերձեալի մտապատկեր, դև հալածել:

ը. Լէզու

Արամէական (Գալիլիայի բարբառ), յունական, լատինական (դաղմատերէն):

ը. Աստուածապաշարմունք

Նոր տաճար, քահանայապետութիւն, քահանայութիւն, զոհաբերութիւն, խնկարկութիւն, լուացումն, պահեցողութիւն, շաբաթը սուրբ առնել (կիրակի), զոհի փայտ, տասանորդ, տաճար, ժողովրդանոց (սինագոգ) ուխտագնացութիւն, տաղալարահարաց տօն, պասեքի տօն (զատկական գառն) աղօթք:

թ. Քաղաքացիան

Հռովմական բարձրագոյն իշխանութիւն (աշխարհապիր առնել, դատաւորական պաշտօն, մահու պատիժ նշանակելու իրաւունք, հարկ վճարել կայսեր (վասսալ թագաւոր): Բարձրագոյն ատեան ընդ նախադանութեամբ քահանայապետի: Հռովմական և հրէական օրինապաշտպանութիւն, (վկայութիւն, պատիժ Աստուծուն հայհոյողին, մեղատրեալին տանջում էին, խաչորպէս պատիժ) պարտք, ստրկութիւն, բռնակալութիւն:

Պ.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐ

§

1. „Ձի այսպէս սիրեաց Աստուած զաշխարհ. . . “: Յովհ. դ. 16. Եթէ քրիստոս հազար անգամ էլ Բեթղհէմում:
2. „Աստուած զամենայն մարդիկ կամի զի կեցցեն “: Ի. Տմթ. բ. 4.
3. „Ձի եւ Քրիստոս վասն ձեր մեռաւ. . . “: Ի. թ. Պտր. բ. 21. „Տէր, սիրեցի զվաչելութիւն տանք. . . “: Սաղմոս իե. 8.
4. „Ձիւն է հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց. . . “: Թ. ա. Եբր. ժա. 1.
5. „Պատրաստ արարէք զճանապարհս. . . “: Եսայի խ. 3.
6. „Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք. . . “: Յովհ. դ. 70.

- 7.8. «Եկալք առիս ամենայն վաստակեալք»: Մտթ. Ժա. 28.
 9. «Թոյլ տուք մանկուոյդ գալ առիս»: Մրկ. Ժ. 14.
 10. «Որ խոնարհեցուցանէ զանձն իբրեւ»: Մտթ. Ժբ. 4.
 11. «Նոքին իսկ գործքն, զոր գործեմ»: Յովհ. ե. 36.
 «Ճաշակեցէք եւ տեսէք զի քաղցր է տէր»: Սաղմոս լթ. 9.
 12. «Երանի որոց ոչ իցէ տէսեալ»: Յովհ. ի. 29.
 «Մերձ է տէր առ ամենեւեան որ կարգան»: Սաղմոս ճխդ. 18.
 13. «Օրհնեա՛ն անձն իմ զտէր»: յ. Ժբ. 2.
 14. «Որ բարձրացուցանէ զանձն իւր»: Ղուկ. Ժբ. 14.
 15. «Եթէ, ասիցեմք, եթէ մեղս ինչ ոչ ունիմք»: Լ. Թ. Յովհ. ա- 8. 9.
 «Ապաշխարեցէք եւ հաւատացէք յաւետարանն»: Մրկ. ա. 15.
 Թէեւ մեր մեղքը շատ է, բայց :
 16. «Բայց եթէ ինչ ի Քրիստոս նոր արարած»: Լ. Թ. ա. Վրնթ. ե. 17.
 «Ձի եկն որդի մարդոյ»: Ղուկ. Ժբ. 10.
 18. «Երանի այնոցիկ որ լսեն»: Ղուկ. Ժա. 28.
 19. «Սիրեցես զընկեր քո»: Մտթ. իբ. 39.
 «Որ գիտիցէ զբարին եւ ոչ»: Թ. Յակ. դ. 17.
 «Լուսմն օրինաց սէր է.»: Թ. Պող. ա. Հռմ. Ժգ. 10.
 «Որդեակ մի բանիւք»: Լ. Թ. Յովհ. գ. 18.
 «Հերոսն ամենից վերջն է իւր վրայ մտածում»: Յովհ. գ. 9.
 20. «Որչափ եւ իցէ քո»: Յովհ. գ. 9.
 21. «Ձի եթէ թողուցուք մարդկան»: Մտթ. գ. 14. 15.
 «Երանի ողորմածաց»: Մտթ. ե. 7.
 22. «Մի այսուհետեւ հոգայցեք»: Մտթ. գ. 31—33.
 «Գրեալ է թէ ոչ միայն հացիւ»: Մտթ. գ. 4.
 24. «Յիւրոն եկն եւ իւրքն»: Յովհ. ա. 11—12.
 25. «Եւ մեծութիւն թէ առուով»: Սաղմոս 4. 11.
 «Եթէ ոք կամի գալ զկնի իմ»: Մրկ. բ. 34.
 26. «Մի գանձէք ձեզ գանձս յերկրի»: Մտթ. գ. 19—21.
 28. «Բայց յայտնեցաւ այժմիկ»: Լ. Տմթ. ա. 10.
 29. «Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք»: Յովհ. գ. 69.
 «Յիսուս Քրիստոս երեկ եւ այսօր»: Թ. ա. Եբբ. Ժգ. 7.
 30. «Լեր հաւատարիմ մինչեւ իման»: Յայտ. Յովհ. բ. 10.
 31. «Երանի այնոցիկ որ սուրբ են»: Մտթ. ե. 8.
 32. «Եւ զոր օրինակ կայ մնայ»: Թ. ա. Եբբ. Թ. 27.
 33. «Ձի ամենայն տուրք բարիք»: Թ. Յակ. ա. 17.
 «Ձինչ կայ իմ բնաւ յերկինս»: Սաղմոս հբ. 25.
 34. «Մի սիրէք զաշխարհ»: Լ. Յովհ. բ. 15. 17.
 35. «Հաւատարիմ է բանս»: Լ. Թ. ա. Տմթ. ա. 15.
 36. «Եթէ Աստուած ի մեր կոչս է»: Թ. ա. Հռմ. բ. 31.
 «Եւ այս է յաղթութիւն, զոր»: Լ. Թ. Յովհ. ե. 4.
 38. «Այսպէս եղիցին յետինք առաջինք»: Մտթ. ի. 16.
 «Ձի շնորհօքն նորա էք փրկեալ»: Թ. ա. Եփս. բ. 8—9.

- «Եւ արդարանան ձրի»: Թ. ա. Հռմ. գ. 24.
 «Յորժամ առնիցէք զամենայն»: Ղուկ. Ժէ. 10.
 39. «Արդ խնդիր է ի մէջ հազարապետաց»: Լ. Թ. ա. Վրնթ. գ. 2.
 «Մեծատուն եւ ազքատ միմեանց»: Առկք. Սող. իբ. 2.
 40. «Երանի սգաւորաց»: Մտթ. ե. 4.
 «Զոր ինչ սերմանէ մարդ»: Թ. ա. Գաղ. գ. 7. 9.
 «Ոչ վարէին արտասուօք»: Սաղմոս ճիե. 5.
 «Որ ունիցի զկեանս ինչ»: Լ. Թ. Յովհ. գ. 17.
 42. «Ոչ ամենայն որ ասէ ցիս տէր, տէր»: Մտթ. է. 21.
 44. «Մարդ հայկ յերեսս»: Լ. Թ. Ժգ. 7.
 «Գիրն սպանանէ»: Թ. ա. Վրնթ. գ. 6.
 45. «Հոգի է Աստուած»: Յովհ. գ. 24.
 «Եւ մեք հաւատացաք եւ»: Լ. Յովհ. գ. 16.
 46. «Բայց աստ սակաւ ինչ»: Ղուկ. Ժ. 24.
 47. «Ես իսկ եմ յարութիւն»: Յովհ. Ժա. 25.
 «Ձի ինձ կեանք Քրիստոս է»: Թ. ա. Փիլ. ա. 21.
 48. «Ձի լոյս եկն յաշխարհ»: Յովհ. Ժթ. 20.
 «Որ ոչ ընդ իս է»: Մտթ. Ժբ. 30.
 49. «Լոյս փառաց բանդ աստուած»: (Ճարական)
 50. «Պատրաստ արարէք զճանապարհս»: Եսայի խ. 3.
 51. «Եղբուք այսուհետեւ խորագէտք»: Մտթ. Ժ. 16.
 «Ձէ մեր մարդ զօրավար»: Եղբէ.
 «Եթէ ոչ առաւելուցու»: Մտթ. ե. 20.
 53. «Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն»: Մտթ. ի. 28.
 «Պատուիրան նոր տամ ձեզ»: Յովհ. Ժգ. 34. 35.
 54. «Արթուն կացէք եւ աղօթս»: Մտթ. իգ. 41.
 «Հայր իմ, եթէ հնար է, անցցէ»: Մտթ. իգ. 39.
 55. «Տէր առ ով երթիցուք»: Յովհ. գ. 69. 70.
 56. «Ամենայն որ խոստովանեսցի լիս»: Մտթ. Ժ. 32. 33.
 «Ձի որ ըստ Աստուծոյն տրամուծիւն է»: Լ. Թ. ա. Վրնթ. է. 10.
 57. «Ան աչրդ ցձեզ»: Յովհ. Ժթ. 5.
 «Ան գառն Աստուծոյ»: Յովհ. ա. 29.
 58. «Մեծ եւս քան զայս սէր»: Յովհ. Ժե. 13.
 «Որպէս որդի մարդոյ ոչ եկն»: Մտթ. ի. 23.
 «Քրիստոս լի վերայ ամենեցուն մեռաւ»: Լ. Թ. ա. Վրնթ. է. 15.
 59. «Եւ մեք հաւատացաք եւ ծանեաք»: Յովհ. գ. 70.
 «Յիշեան զՔրիստոս Յիսուս յարուցեալ»: Յովհ. գ. 70.
 «Ձի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց»: Թ. ա. Հռմ. գ. 4.
 60. «Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խորանօք»: Ղուկ. Ժէ. 20.
 «Ի տան հօր իմոյ օթեալնք բազում»: Յովհ. Ժգ. 2. 3.
 «Եթէ յարեալք ընդ Քրիստոսի»: Թ. ա. Վրնթ. գ. 1.

Յ Ա Ն Կ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ

§	Երև.
41 Տասն կոչերի առակը	197
42 Վերջին դատաստան	202
43 Լերան քարոզը	206
44 Յիսուսի խօսակցութիւնը լուացման, կերակրի, պահքի և շա- բաթը սրբելու մասին	215
45 Յիսուս և սամարացի կիներ	223
46 Մարիամ և Մարթա	232
47 Ղազարոսի չարութիւնը	236
III.	
48 Յիսուսի թշնամիները	244
49 Յիսուս օճուում է Բէթանիայում	259
50 Յիսուս մտնում է Նրուսաղէմ	263
51 Յիսուս վիճաբանում է թշնամեաց հետ	270
52 Յուդայի մատնութիւնը	278
53 Ոտնալուաց և խորհրդաւոր ընթրիք	282
54 Յիսուս Գեթսեմանում	289
55 Յիսուսը բարձրագոյն ատենի առաջ	300
56 Պետրոսի ուրացութիւնը և Յուդայի վախճանը	307
57 Յիսուս Պիղատոսի առաջ	314
58 Յիսուսի խաչելութիւնը	331
59 Յիսուսի թաղումը և չարութիւնը	349
60 Յիսուսի համբարձումն	359



15n.

2013

~~389,390,391~~

389,390,391

պից 2, և Վ. պից 2, և Բ, և առ Ի

<< Ազգային գրադարան



NL0027068

890700

<< Ազգային գրադարան



NL0027067

890700

պից 1

<< Ազգային գրադարան



NL0027071

890700

